ԼՈՒՍԱՓԱՅԼ

1978

2

ՄԱ 46



ԼԵ
ՏԱՐԻ

ԷՋՄԻԱԾԻՆ

ՊԱՇՏՕՆԱԿԱՆ
ԱՄՍԱԳԻՐ
ՀԱՅՐԱՊԵՏԱԿԱՆ
ԱԹՈՌՈՅ
Ս. ԷՋՄԻԱԾՆԻ

Յունվար

1978



ՀՐԱՄԱՆԱՒ

Տ. Տ. ՎԱԶԳԵՆԻ ԱՌԱՋՆՈՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ
ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ

ՌՈՒՍ ՊՐԱՎՈՍԼԱՎ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՐԻԱՐՔՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՄԱՆ 60-ԱՄՅԱԿԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՄՈՍԿՎԱՅՈՒՄ

1978 թվականի մայիսի 24—29 օրերին Մոսկվայում ռուսաց պատրիարքարանի նախաձեռնությամբ նշվեց ռուս պրավոսլավ եկեղեցու պատրիարքության վերահաստատման 60-ամյա հոբելյանը: Այս առթիվ Հայոց Հայրապետը ևս եղբայրական հրավեր էր ստացել Նորին Սրբություն ռուսաց Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքից՝ մասնակցելու հոբելյանական հանդիսություններին:

Մայիսի 24-ին, չորեքշաբթի օրը, Վեհափառ Հայրապետը մեկնեց Մոսկվա: Այս առթիվ Հայոց Հայրապետին ուղեկցում էր Վրաստանի թեմի հայոց առաջնորդ տ. Գևորգ եպիսկոպոս Սերայդարյանը:

Երևանի օդանավակայանում Հայոց Հայրապետին ճանապարհեցին տ. Կոմիտաս, տ. Հուսիկ, տ. Տիրայր, տ. Արսեն, տ. Նարեկ սրբազանները, Մայր Աթոռի վարդապետները և այլ անձինք:

Հայոց Հայրապետին դեպի Մոսկվա ճանապարհեց նաև Հայկ. ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Մոսկվայի «Դոմոդեդովո» օդանավակայանում Հայոց Հայրապետին անձամբ դիմավորեց և բարի գալուստ մաղթեց Նորին Սրբություն Տ. Պիմեն Պատրիարքը՝ ընկերակցությամբ տ. Ֆիլարետ, տ. Յուվենալի, տ. Ալեքսի միտրոպոլիտների, արքեպիսկոպոսների և եպիսկոպոսների:

Հանուն ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական պաշտամունքների խորհրդի, Հայոց Հայրապետին ողջունեց և բարի գալուստ մաղթեց խորհրդի նախագահի տեղակալ Պյոտր Մակարցևը:

Հանուն Մոսկվայի հայ եկեղեցու վարչության և հավատացյալների, Հայոց Հայրապետի ժամանումը ողջունեց նաև Ռուսաստանի և Նոր Նախիջևանի թեմի առաջնորդական տեղապահ տ. Տիրան վարդապետ Կյուրեղյանը:

Օդանավակայանի ընդունելության դահլիճում երկու Հայրապետների և նրանց շքախմբի անդամների միջև տեղի ունեցավ ջերմ զրույց, որից հետո Հայոց Հայրապետը առաջնորդվեց Մոսկվայի «Սովետսկայա» հյուրանոց:

Մայիսի 25-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, հոբելյանին հրավիրված բոլոր պատգամավորները Մոսկվայի ռուսաց ս. Հարության տաճարում ներկա եղան հանդիսավոր ժամերգությանը:

Այս առթիվ Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը ջերմորեն ողջունեց ներկայությունը բոլոր պատգամավորների և ապա բարոզեց օրվա հանդիսության պատմական կարևոր նշանակության մասին:

Նույն օրը, ժամը 16-ին, «Սովետսկայա» հյուրանոցի համերգային դահլիճում տեղի ունեցավ ռուս եկեղեցու պատրիարքության վերահաստատման 60-ամյակի հանդիսության բացումը, որտեղ բովանդակալից ու պատմական մի զեկուցումով հանդես եկավ Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը՝ նշելով պատրիարքության վերահաստատումից հետո անցած վաթսուն տարիների ընթացքում կատարված հոգևոր, եկեղեցական, մշակութային, էկումենիկ, հայրենասիրական և խաղաղասիրական կարևոր իրադարձությունները:

Նույն օրը, ժամը 19-ին, նույն տեղում գումարվեց հանդիսության երկրորդ նիստը, որտեղ ելույթ ունեցան հանդիսություններին հրավիրված բոլոր եկեղեցիների հոգևոր պետերն ու պատգամավորները:

Մայիսի 26-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 10-ին, առաջինը հանդես եկավ Հայոց Հայրապետը հոբելյանի նշանակությանը նվիրված հետևյալ բովանդակալից զեկուցումով:

ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ Տ. Տ. ՎԱԶԳԵՆ Ա ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՀՈԲԵԼՅԱՆԱԿԱՆ ԽՈՍՔԸ ՀԱՆԴԻՍԱՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(Մոսկվա—մայիս 26, 1978)

Ձերդ Սրբություն, Սրբազան Պատրիարք Համայն Ռուսաստանի,

Գոհություն ենք տալիս բարին Աստծուն, որ այս պահին այստեղ ենք գտնվում, Ձեր կողքին, երբ Ձերդ Սրբությունը և ռուս պրավոսլավ մեծ եկեղեցին տոնախմբում եք ձեր պատրիարքական պատմական Աթոռի վերահաստատման վաթսունամյակը, մի պատմական նշանակալից իրադարձություն, կենսագործված շնորհիվ Ռուսաստանում սովետական կարգերի հաստատման: Մի պատմական ակտ, որ այն, նշանակալից եղավ ոչ միայն ռուսաց պրավոսլավ եկեղեցու, այլև համայն քրիստոնյա եկեղեցիների ընտանիքի համար:

Այս գիտակցությամբ է, որ Մենք, հանուն Հայաստանյայց առաքելական եկեղեցու, ուրախ սրտով ողջունում ենք հիշատակության այս հանդիսավոր պահը և մեր եկեղեցու ու ժողովրդի աղոթքները միացնում ենք Ձեր աղոթք-

ներին, որպեսզի հավետ անսասան մնա ռուսաց եկեղեցու պատրիարքական սուրբ Աթոռը և հավետ լուսապայծառ մնա ռուսաց պրավոսլավ եկեղեցին:

Հայտնի է բոլորիս այն նախախնամական դերը, որ ունեցավ ռուսաց եկեղեցին աշխարհում քրիստոնեության տարածման և ծաղկման գործում վերջին հազար տարիների ընթացքում:

Դարեր շարունակ նա հանդիսացավ քրիստոնեության ամենահզոր ալյունը Արևելյան Եվրոպայում և առհասարակ ամբողջ Արևելքում: Բախտորոշ եղավ նրա առաքելությունը ոչ միայն զուտ կրոնական, այլև մշակութային, ընկերային և քաղաքական իմաստով: Ռուսաց եկեղեցին եղավ այն մշտավառ փարոսը, որից բաշխվեց աշխարհին ռուս ժողովրդի քրիստոնեական ոգեկանության անսպառ լույսը: Ռուս ժողովուրդը հազար տարիներ շարունակ անկորնչելի կրոնական, մշակութային ու արվեստի ինքնատիպ փայլուն արժեքներով փառավորեց Քրիստոսի սուրբ և անմահ անունը: Այս իմաստով մենք՝ բոլոր քրիստոնյաներս, մենք՝ բոլոր եկեղեցիներս, երախտապարտ ենք ռուս քրիստոնյա ժողովրդին ու նրա եկեղեցուն:

Հայաստանյայց առաքելական եկեղեցին այս վկայություններն է բերում նաև իր պատմությամբ: Դեռևս հնագույն շրջաններից սկսած, Կիևյան Ռուսաստանի օրերից, հաստատված են եղել եղբայրական հարաբերություններ մեր երկու եկեղեցիների միջև:

Այդ հարաբերությունները այնքան սերտ են դարձել, որ 12—18-րդ դարերում կատարվել են թարգմանություններ հայերենից-ռուսերեն՝ «Վարք ս. Գրիգոր Լուսավորչի» և «Վարք ս. Հռիփսիմեան կուսանաց» երկերի, իսկ ռուսերենից հայերեն է թարգմանվել «Վարք ս. Բորիսի և Գլեբի» երկերը: Իսկ Նովգորոդի մոտ, Վոլխով գետի ափին, 1189 թվականին կառուցված Պրեսբրաժենյան Ներետիցի եկեղեցում, որմնանկարների շարքում նկարվել են ս. Գրիգոր Լուսավորչի և ս. Հռիփսիմե կույսի կերպարները: Հետաքրքրական է նաև, որ հեռավոր Կիլիկյան Հայաստանում 12-րդ դարում ապրող ու գործող մեր մեծագույն Հայրապետներից ս. Ներսես Շնորհալի կաթողիկոսը իր երկերում հիշել և գովաբանել է ռուս ժողովրդի անունը:

Ի Քրիստոս սիրո այս հարաբերությունները մեր քույր եկեղեցիների միջև հետզհետե զարգացան պատմության ընթացքում և առավել խորացան 1828 թվականից սկսած, երբ Արևելյան Հայաստանը միացավ Ռուսաստանին, մի պատմական իրադարձություն, որ փրկարար եղավ հայ ժողովրդի և եկեղեցու համար, որի հարյուրհիսունամյակը լրանում է այս տարի: Հառաջիկա սեպտեմբեր և հոկտեմբեր ամիսներին Հայաստանում մեծ շուքով պիտի նշվի պատմական այդ իրադարձությունը, որը սկզբնավորեց հայ ժողովրդի ազգային, քաղաքական ու նաև եկեղեցական վերածնունդը: Այդ առթիվ ամբողջ մեր ժողովուրդը, որ ի Հայաստան և որ ի սփյուռս աշխարհի, մի անգամ ևս պիտի հայտնի իր երախտագիտությունը ռուս ազատարար ժողովրդի հանդեպ և մի անգամ ևս պիտի հաստատի այն պատմական ճշմարտությունը, որ Սովետական Միության հարավային սահմանների վրա հայ ժողովուրդը, Սովետական Հայաստանը կա ու կմնա ամենահավատարիմ ու նվիրական եղբայրը ռուս Մեծ ժողովրդի: Մեր երկրում թե արտասահմանում չկա ճշմարիտ հայ մարդ, որ տարբեր մտածի:

Պետությունից անջատվելով ու պատրիարքության վերականգնումով ռուս պրավոսլավ եկեղեցին մտավ իր պատմության նոր փուլի մեջ, իր

առաքելության բուն ճամփին: Ապացույց, անցնող վաթսուն տարիների հիշատակության արժանի նրա իրագործումները հոգևոր-եկեղեցական, կրոնական դաստիարակության, հայրենասիրական, էկումենիկ շարժման և խաղաղության պաշտպանության ուղղություններով:

Խոր հիացումով պարտ ենք հիշել այստեղ այն անձնազոհ մասնակցությունը, որ ունեցավ ռուս հոգևորականությունը Հայրենական մեծ պատերազմի ահարկու տարիներին, մեկ սիրտ ու մեկ հոգի դարձած ռուս ժողովրդի բոլոր զավակների հետ, որոնք ներռուական խոյանքով պաշտպանեցին ու փրկեցին սովետական մեծ հայրենիքը, ջախջախելով գլուխն ու մարմինը Հիտլերյան հրեշի:

Մենք այստեղ ցանկանում ենք կարևորությամբ ընդգծել մանավանդ ռուս եկեղեցու և նրա լուսամիտ հոգևորականության ծավալած միջազգային գործունեությունը՝ ի պաշտպանություն աշխարհի խաղաղության դատի և ժողովուրդների համերաշխ գործակցության:

Եթե ճշմարիտ է, որ Քրիստոսի Ավետարանը սիրո ու խաղաղության մի առաքելություն է երկրի վրա մարդկային ընկերության մեջ, ապա ռուսաց եկեղեցին մեր օրերին իր առավելագույնն է կատարում այդ գերազանցապես քրիստոնեական իդեալի կենսագործման համար, խաղաղասիրական իր գործունեությամբ ոգեշնչելով նաև մյուս բոլոր եկեղեցիները, որոնց առաջին շարքերին է գտնվում նաև մեր եկեղեցին, Հայաստանյաց առաքելական եկեղեցին:

Ռուս պրավոսլավ բազմադարյան եկեղեցին, շատ հարուստ և հիացումի արժանի ավանդություններով ու հոգևոր արժեքներով, մեր օրերին էլ հավատարիմ մնալով հանդերձ իր բազմադարյան ավանդություններին ու իր շատ հարուստ արժեքներին, իր սիրտն ու հոգին բացել է նաև այն մեծ հարցերին, որոնց առաջ է գտնվում ողջ մարդկությունը այսօր:

Ձերդ Սրբություն, այս զգացումներով ու խորհրդածություններով ոգեշնչված, Մեր սրտի բովանդակ ջերմությամբ ողջունում ենք ձեր պատմական մեծ եկեղեցու պատրիարքությանն վերանաստատմուն վաթսունամյակը և ներկայացնում ենք այստեղ Ձեզ Հայաստանյաց առաքելական եկեղեցու անհուն սերն ու հարգանքը, վստահեցնելով Ձեզ, որ անձամբ Մենք և հայ եկեղեցու բոլոր սպասավորներն ու ժողովուրդը պիտի մնանք միշտ ձեր կողքին, ռուս եկեղեցու և ռուս ժողովրդի կողքին, մեր եկեղեցիների կրոնական, էկումենիկ, հայրենասիրական և խաղաղասիրական առաքելության լուսավոր ճանապարհի վրա:

Թող Աստված օրհնի ռուսաց պրավոսլավ եկեղեցին և միշտ փառքով պսակի նրա սրբազան գործը, այժմ և հավիտյան. ամեն:

Այս առթիվ Հայոց Հայրապետը Տ. Գիտեն Սրբազան Պատրիարքին նվիրեց ռուսերեն լեզվով 17-րդ դարի ձեռագիր մի աղոթագիրք:

Նույն օրը, ժամը 16-ին, նույն տեղում գումարվեց հոբելյանի եզրափակիչ նիստը, որտեղ ելույթներով հանդես եկան կրոնական տարբեր դավանությանց ներկայացուցիչներ:

Մայիսի 27-ին, շաբաթ օրը, առավոտյան, բոլոր պատգամավորները ս. Հարության տաճարում ներկա եղան հանդիսավոր պատարագին:

Մայիսի 28, կիրակի: Այսօր Զագորսկի վանքում մատուցվեց հանդիսավոր սուրբ պատարագ, որին ներկա եղան հոբելյանին մասնակցող բոլոր հրավիրյալները:

Սուրբ պատարագի ավարտին, ի պատիվ պատգամավորությունների, տրվեց ճաշկերույթ Զագորսկի վանքում:

Նույն օրը, ժամը 16-ին, «Սովետսկայա» հյուրանոցի համերգային դահլիճում տեղի ունեցավ համերգ հյուրերի պատվին: Համերգի առաջին մասում ելույթ ունեցան Մոսկվայի հոգևոր ճեմարանի սաները, իսկ երկրորդ մասում հանդես եկավ Ա. Ա. Յուրլովայի անվան պետական ակադեմիական երգչախումբը՝ ղեկավարությամբ ՌՍՖՍՀ արվեստի վաստակավոր գործիչ Յուրի Ուխովի:

Մայիսի 29, երկուշաբթի: Այսօր հոբելյանական հանդիսությունների վերջին օրն էր: Առավոտյան ժամը 11-ին, ի պատիվ բոլոր պատգամավորների և հյուրերի, տրվեց հրաժեշտի ճաշկերույթ, որին ներկա եղավ նաև Հայոց Հայրապետը:

Ընդունելությանը նախագահում էր Տ. Պիմեն Սրբազան Պատրիարքը: Հանուն բոլոր պատգամավորների և հյուրերի, Հայոց Հայրապետը հանդես եկավ շնորհավորական և շնորհակալական հետևյալ հուզիչ խոսքով.

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԽՈՍՔԸ ՀՐԱԺԵՇՏԻ ԸՆԴՈՒՆԵԼՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

(29 մայիսի, Մոսկվա)

Ձերդ Սրբություն, սիրեցյալ եղբայր մեր ի Քրիստոս,

Իբրև Պատրիարք-կաթողիկոսը հայ առաքելական եկեղեցու, Մեզ համար մեծ ուրախություն է և պատիվ այս պահին Ձեզ ուղղել եղբայրական սիրո խոսք և բարի մաղթանքներ, բոլոր սրբազան պատրիարք մեր եղբայրների և բարձրաստիճան հոգևորականների անունից, որոնք Ձերդ Սրբության հրավերով մասնակցեցին ռուս պրավոսլավ սուրբ եկեղեցու պատրիարքության վերահաստատման 60-ամյակին նվիրված սրբազան արարողություններին և հանդիսություններին:

Ամենայն վստահությամբ Մենք կարող ենք ասել, որ անցնող այս չորս օրերի ընթացքում խորապես ապրեցինք սաղմոսերգուի քաղցր զգացումը՝ թե՝ «ինչքան բարի է և ինչքան վայելուչ, երբ եղբայրներ միատեղ են գտնվում»:

Բոլորս զգացինք սուրբ Հոգու մխիթարիչ ներկայությունը մեր մեջ: Այս երկնային շնորհի համար մենք երախտապարտ ենք Ձեզ:

Մեր օրերի էկումենիկ հարաբերությունների զարգացման ճանապարհին, անավասիկ, Ձերդ Սրբությունը մի աստվածահաճո քայլ ևս կատարեց դեպի առավել ամրապնդումը մեր եկեղեցիների սիրո միության, դեպի առավել ամրապնդումը մեր բոլորի եղբայրության:

Մենք հավատում ենք, որ էկումենիկ հարաբերությունների հետզհետե առավել զարգացմամբ, մեր միատեղ աղոթքներով և սերտ գործակցությամբ պիտի հաջողինք ավելի ու ավելի սփռել մեր Փրկչի՝ Հիսուսի Քրիստոսի Ավետարանի լույսը մեր օրերի աշխարհի վրա, որպեսզի այդ ճառագայթումով լուսավորվի մարդկային արդի կյանքը, և մեր երկրագնդի վրա լինի ավելի արդարություն, ավելի մարդասիրություն և ավելի խաղաղություն: Մանավանդ խաղաղության համար պետք է անձանձրույթ աղոթենք ու լավատեսությամբ գործենք:

Այս խոսքերով Մենք դիմում ենք Ձերդ Սրբությանը, որովհետև քաջ գիտենք, թե անձամբ Դուք ներշնչված եք ավետարանական այս պատգամներով, և ձեր մեծ եկեղեցին՝ ռուս պրավոսլավ եկեղեցին, տասնյակ տարիներից ի վեր իր սուրբ առաքելությունը ծավալում է նույն այս սրբազան պատգամների ոգով:

Մենք մաղթում ենք, որ Ձերդ Սրբության կյանքի օրերը լինեն միշտ արևոտ, միշտ խաղաղ, և Դուք շատ երկար տարիներ առաջնորդեք ձեր մեծ եկեղեցին ի փառս Աստուծո, ի մխիթարություն ձեր հավատացյալ ժողովրդի և հուրախություն մեզ բոլորիս, որ եղբայրաբար սիրում և հարգում ենք Ձեզ մեր սրտի բովանդակ ջերմությամբ:

Թույլ տվեք նաև, որ մեր բոլոր հոգևոր եղբայրների անունից սրտագին շնորհակալություն հայտնենք Ձեր սքանչելի ընդունելությանց և հյուրասիրությանց համար, որ առատորեն վայելեցինք այս օրերին Մոսկվայում և Զագորսկում: Պիտի բաժանվենք Ձեզանից անմոռաց հիշատակներով, վերըստին հանդիպելու և վերստին միատեղ աղոթելու և ուրախանալու իղձով:

Այս առթիվ պարտինք նաև բոլոր պատգամավորների և հյուրերի անունից սրտագին շնորհակալություն հայտնել սովետական կառավարությանը, հանձին ՍՍՀՄ Մինիստրների խորհրդին առընթեր կրոնական պաշտամունքների խորհրդի նախագահ մեծարգո պր. Վլադիմիր Կուրոյեդովին, այն բոլոր դյուրությունների համար, որոնք ընծայվեցին՝ հաջողությամբ անցկացնելու ռուս պրավոսլավ սուրբ եկեղեցու այս սքանչելի հանդիսությունները:

«Այլ ինքն Տէր մեր Յիսուս Քրիստոս և Աստուած և Հայր մեր, որ սիրեացն զմեզ և ետ մեզ մխիթարութիւն յաւիտենից և յոյս բարեաց շնորհօք, մխիթարեսցէ զսիրտս ձեր և հաստատեսցէ յամենայն բանս և ի գործս բարութեան» (Բ Թես. Բ 15—16):

Վեհափառ Հայրապետը հոբելյանական սույն հանդիսություններից հետո, մինչև հունիսի 9-ը, մնաց Մոսկվայում՝ նույն օրը մեկնելու համար հովվապետական այցելության Լոնդոն:

Բոլոր եկեղեցիներ

ՀՈՒՆԱՍՏԱՆԻ ՀՈՒՅՆ ՕՐԹՈԴՈՔՍ ԵԿԵՂԵՑՈՒ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ

Մայիսի 30-ին, Հայոց Հայրապետի եղբայրական հրավերով, Մայր Աթոռ ժամանեց Հունաստանի հույն օրթոդոքս եկեղեցու պատվիրակությունը, որը Մոսկվայում մասնակցել էր ռուս պրավոսլավ եկեղեցու պատրիարքության վերահաստատման 60-ամյակին նվիրված հանդիսություններին:

Սույն պատվիրակությունը Մայր Աթոռում գտնվեց մայիսի 30-ից մինչև հունիսի 2-ը:

Հույն եկեղեցու պատվիրակության կազմում էին Կիպրոսի միտրոպոլիտ, սուրբ Սինոդի արտաքին հարաբերությունների հանձնախմբի նախագահ տ. Բառնաբաս արքեպիսկոպոսը, Տալանդիի միտրոպոլիտ, ս. Սինոդի գլխավոր քարտուղար տ. Ամբրոսիոս արքեպիսկոպոսը, ս. Սինոդի արտաքին հարաբերությունների հանձնախմբի քարտուղար տ. Մելետիոս Կալամարաս վարդապետը և նույն հանձնախմբի փոխքարտուղար տ. Ստեֆանոս Ալրամիտիս քահանան:

Սույն պատվիրակությանը, հանուն ռուսաց պատրիարքության, Մոսկվայից ուղեկցում էր Պենզայի և Սարանսկու տ. Մելքիսեդեկ արքեպիսկոպոսը:

Երևանի օդանավակայանում, հանուն Հայոց Հայրապետի, Մայր Աթոռի պատվարժան հյուրերին դիմավորեցին և բարի գալուստ մաղթեցին տ. Կոմիտաս, տ. Արսեն, տ. Նարեկ, տ. Գևորգ սրբազանները:

Մայր Աթոռի մեծարգո հյուրերի ժամանումը Երևան ողջունեց նաև Հայկ. ՍՍՀ Մինիստրների խորհրդին առընթեր հայ եկեղեցու գործերի խորհրդի նախագահի տեղակալ Անդրանիկ Հասրաթյանը:

Ակնուենտ պատվիրակությունը առաջնորդվեց Երևան՝ «Անի» հյուրանոց:

Մայիսի 31-ին, չորեքշաբթի օրը, նորգելի հյուրերը այցելեցին Երևանի տարբ Մեսրոպ Մաշտոցի անվան ճեռագրաց Մատենադարան և տպա Գեղարդի և ս. Գեղարդի պատմական վանք, որ, ի պատիվ նրանց, տրվեց ճաշկերույթ:

Հունաստանի հույն օրթոդոքս եկեղեցու պատվիրակությունը Երևանի ս. Սարգիս եկեղեցու մուտքի առաջ



Այցելություն Ամենասուրբ Հուշարձանի առաջ. Ծիծեռնակաբերդ

Նույն օրը, երեկոյան, հյուրերը Երևանում, Հայաստանի կոմպոզիտորների տանը, ներկա եղան ՀՍՍՀ ժողովրդական արտիստուհի Լուսինե Զաքարյանի համերգին, որի ծրագիրը բաղկացած էր արևմտաեվրոպական երաժշտության դասական գործերից և հայ եկեղեցու շարականներից ու երգերից:

Հունիսի 1-ին, հինգշաբթի օրը, առավոտյան ժամը 10-ին, հույն եկեղեցու պատվիրակությունը, ընկերակցությամբ Մայր Աթոռի միաբանության եպիսկոպոսների, Ծիծեռնակաբերդում այցելեց Հայ նահատակաց հուշարձան և ծաղկեպսակ զետեղեց՝ Հոգվոց արտասանելով հայ նահատակների հիշատակին:

Ավելի ուշ պատվիրակությունն այցելեց Երևանի ս. Սարգիս առաջնորդանիստ եկեղեցի:

Ժամը 12-ին Մայր Աթոռի հարգարժան հյուրերը ժամանեցին սուրբ Էջմիածին, այցելեցին Մայր տաճար, եկեղեցական արվեստի թանգարան, Հին և Նոր Վեհարաններ և ապա ժամը 15-ին Մայր Աթոռի միաբանության անդամների հետ ներկա եղան իրենց պատվին տրված պաշտոնական ճաշկերույթին միաբանական սեղանատանը:

Ժամը 16-ին հյուրերը Բյուրականում այցելեցին «Հայկաշեն» հայրապետական ամառանոց, այնուհետև, ժամը 18-ին, Մայր տաճարում ներկա եղան երեկոյան հանդիսավոր ժամերգությանը ու միասին աղոթեցին էկումենիկ ոգով քրիստոնեական եկեղեցիների ի Քրիստոս սիրո միության և աշխարհի խաղաղության համար:

Նույն օրը, ժամը 20-ին, Վեհարանի սեղանատանը, ի պատիվ հյուրերի, տրվեց ողջերթի ընդունելություն, որի ընթացքում փոխանակվեցին սրտագին ու եղբայրական բաժակառաջ և հուշանվերներ:

Հունիսի 2-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 7-ին, Հունաստանի հույն օրթոդոքս եկեղեցու պատվիրակությունը հրաժեշտ տվեց Մայր Աթոռին, նրա միաբանության անդամներին և լավագույն տպավորություններով սուրբ Էջմիածնից մեկնեց Լենինգրադ:

Սույն այցելությունը Հունաստանի օրթոդոքս եկեղեցու բարձրաստիճան հոգևորականության առաջին պատմական այցելությունն էր հայ եկեղեցու պատմական կենտրոն Մայր Աթոռ ս. Էջմիածին, այցելություն, որը կնպաստի հայ ուղղափառ և հույն օրթոդոքս եկեղեցիների հետագա համագործակցությանն ու ի Քրիստոս սիրո եղբայրությանը՝ մեր ժամանակների հատկանշող էկումենիկ շարժման զարգացման ճանապարհի վրա:

ՆՈՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՐՅԱՆ

ՄԵՆՔ ԷՋՄԻԱԾԻՆ ՄԸ ՈՒՆԻՆՔ

Աստվածային գործերը զարմանալի խորհուրդ մը ունին, բարձր՝ երկինքի նման, և խորունկ միանգամայն: Այդպիսի գործ մըն է Միածնին էջքը ի Վաղարշապատ:

Այնքան ազգեր կային երկրի վրա՝ մեծ և հզոր, բայց Միածինը իջավ փոքր և տկար ազգի մը մոտ: Ո՞վ իջեցուց Միածինը իր երկնային կայանեն վար, քարքարուտ երկրի մը գիրկը. ի՞նչպես պատահեցավ այդ անակնկալելի հրաշքը:

Պարզ է այս հարցումին պատասխանը՝ ս. Գրիգոր: Իր անտանելի չարչարանքները, մեկը մյուսեն ավելի սարսռազդեցիկ, ցնցեցին Միածնին երկնանիստ գահը: Ան տեսած էր շատ մարտիրոսներ, բայց Գրիգոր կգերազանցեր բոլորը: Տեսած էր իր առաջին վկային՝ Ստեփանոսի քարկոծումը և ոտքի կանգնած, որպեսզի քաջալերե զայն իր հավատքին մեջ: Գրիգորի բազմատեսակ տանջանքները արժանի էին ավելի բարձր գնահատության: Մանավանդ որ Գրիգորի հետևորդները պիտի կոչվեին դարե դար տոկալու անավոր տանջանքներու և աննկարագրելի տառապանքներու:

Եվ ահա Միածինը ոսկեղեն ուռնակ մը ձեռքին իջավ Վաղարշապատ, լույսի շողեր ցանեց ամեն կողմ, զարկավ իր կռանը գետնին, սանդարամետը սարսեցավ, դժոխքի դռները տապալեցան: Հո՛ս պիտի շինեք, ըսավ, իմ եկեղեցին:

Հրամանը աստվածային էր, որուն առջև խրոխտ թագավորն ալ պիտի խոնարհեր: Աստվածահիմն եկեղեցին անխախտ հիմեր կուզեր: Հզոր թագավոր էր Տրդատ. ելավ Արարատ լեռ, ութը հսկա ժայռեր պոկեց, դրավ իր կռնակին և բերավ Վաղարշապատ: Նոր եկեղեցիին հիմերը պատրաստ էին:

Բարձրացավ շենքը, և Աստված եկավ հաստատվեցավ իր Տունը: Ըսավ Գրիգորին. Հոս դիր քու Աթոռդ, և իբրև իմ փոխանորդս տեր եղիր այս ժողովուրդին: Հուզվեցավ Գրիգոր: Ես տկար մարդ մըն եմ, ըսավ, ի՞նչպես կրնամ պաշտպանել այս ժողովուրդը: Արցունքի կաթիլներ ինկան իր աչքեն: Հրեշտակները փութացին իսկույն, չթողուցին որ Գրիգորի արցունքները գետին իյնան. առին զանոնք մաքուր կանթեղի մը մեջ և տարին երկինք:

Դուն տկար չես, ըսավ Միածինը, Աստուծո զորությունը տկար համարվածներու միջոցավ է որ կհրաշագործե: Բայց որպեսզի քու ժողովուրդդ ապահով զգա՝ ահավասիկ Տրդատի թուրը պահապան կը դնեմ Արագածի գագաթին, քու արտասվաշող կանթեղիդ մոտ, և անոնք կմնան

այնտեղ հավիտենապես՝ իմ հավիտենական լեռներուս նման:

Միածնահիմն տանարին շաղախները հագիվ չորցած էին, անոր ամբությունը փորձելու համար եկավ Մաքսիմին կայսրը: Այդ տանարը իմ աչքիս մեջ փուշ մըն է, ըսավ հեթանոս բռնակալը, մեջտեղեն պիտի վերցնեմ զայն: Առավ իր բանակը և սկսավ հառաջանալ դեպի Վաղարշապատ. բայց չկրցավ հոն հասնիլ. Տրդատի թուրը և անոր ետին կանգնած հայ զորքերը չարաչար կոտրեցին զինքը, և բռնակալը հեռացավ գլխիկոր:

Թագազարդ ուրիշ գլուխ մը հեռվեն կդիտեր այս տիտանյան պայքարը, որ մեծապես կշահագրգռեր զինքը: Միտրը պրդտորած վիճակ մը ուներ: Խանգարված էր բուռը: Խռովանույշ երազի մը հորձանքը պարուրած էր զինքը: Աչքերը լայն բացած մեկ վար կնայեր բարձրացող փոշիին, մեկ վեր կնայեր կուտակվող ամպերուն: Հան կարծ կանգ առավ. իր աչքերը գամվեցան երկինքին. հոն հորանշան լույս մը նշմարեց. բառաթև ձև ուներ այն, և թրակերպ ծայր. լուսաշող գիրեր շարվեցան անոր շուրջ և հուզումով կարդաց՝ «Ասով պիտի հաղթես»:

Շատ մրցակիցներ ու հակառակորդներ ուներ ան. մոռ էր բախումի օրը. հրամայեց որ հռովմեական բանակի դրոշակներուն վրա այդ նշանը դրոշմեն: Սկսավ պայքարը հակառակորդներու հետ. սաստիկ էր պատերազմը, բայց երկնային այդ նշանին զորությունը ապահոված էր Կոստանդիանոսի հաղթությունը: Տրդատի հաղթական թուրեն ժայթքած բոցավառ կայծերը սահմանված էին հրդեհելու Հռովմեական Կայսրությունը ծագե ծագ, նոր արշալույս մը պարգևելով տառապող մարդկության:

Հրաշալի լույսը վառ ի վառ կշողար Արագածի գագաթին և իր հառագայթները կդրկեր մինչև հեռավոր հորիզոններ: Հոգևոր էր այդ լույսը և կառաջնորդեր հոգիի մարդոց: Տարիները կանցնեին շարան շարան: Եվ անա օր մը հոգիի մարդ մը ելավ մեջտեղ, Մաշտոց կկոչեին զայն, ուխտի եկավ դեպի Արագած, Լուսավորչի կանթեղեն ջահ մը վառեց ու իջավ վար: Լուսավոր ջահը ձեռքին շրջեցավ Հայաստան աշխարհը հյուսիսեն հարավ և արևելքեն արևմուտք, ամեն տեղ բոցավառեց իմացական լույսի կանթեղներ, Հայաստանը վերածվեցավ շողշողուն ադամանդի:

Այդ անգին ադամանդը պետք ուներ պաշտպանության: Մաշտոց գտած էր միջոցը. երեսուն և վեց մարտկոցներ կազմեց և զետեղեց իր երկրին սահմաններուն վրա: Ադամանդը բարձրանշույլ կշողար. անոր անմահան փայլը բուռը կփախցներ հախանձոտ և ընչաբաղց բռնավորներու:

Եղավ Հազկերտ. ես մոխիրներու տակ պիտի թաղեմ, ըսավ, Լուսավորչի կանթեղը: Ձեռ կրնար, ըսավ Վարդան, հրեղեն բուրը ձեռքին, հոգևոր լույսը չէր կարելի մարել մոխիրներու կույտերով: Համառեցավ Հազկերտ. հառաջ բշեց իր փիղերը, որոնք զարնվեցան Մաշտոցյան մարտկոցներուն և փլան կորակոր: Վարդանի հոգին սեղվեցավ ոսկեծոլի մատյանի մը էջերուն վրա՝ անմահության կնիքով:

Եղավ Գդիհոնը, ամբարտավանությամբ կպարծեր և կըսեր. ես Հայոց զորքը ճնահս կոթովը կցրվեմ: Լսեց Վահան. Տրդատի կայծակե թուրը ձեռքն առավ, հեղ մը նայեցավ վեր՝ ս. Էջմիածնի կաթողիկեին, խաչակնքեց երեսը, խոյացավ անարգ դավաճանին վրա, և նիզակի մեկ հարվածով՝ լերդախոց տապալեց զայն անկենդան: Վահանի անունը արձանագրվեցավ Հայոց Ոսկեմատյանին մեջ՝ անջնջելի տառերով:

Եղավ Մարամելիք, Հայոց ազգը լուծի տակ դնել կուզեր: Իմացավ Դավիթ. խլեց կայծակե թուրը. վազեց բռնավորին դեմ, զգետնեց զայն կիսակուռ: Ապա դարձավ ետև, հեռուն լույս մը կշողար, Արագածի կանթեղն էր: Դավթի անունը երգի փոխվեցավ. անմահական վեպ մը հավերժացուց իր փառավոր հիշատակը:

Եկավ Մեսրոպ Խան իր արյունարբու հորդաներով, բանդեց ու այրեց, բայց հայությունը դիմացավ ամեն տառապանքի, իր Լուսավորչին պես, և ողջ դուրս եկավ մահվան անդունդեն:

Եկավ Լենկթիմուր իր խուժդուժ հորդաներով, այրեց ու բանդեց, ջարդեց ու կոտորեց, բայց հայ ժողովուրդը տոկաց ամեն տանջանքի, իր Լուսավորչին պես, և վերբստին ապրեցավ, շինեց ու շենցուց Հայաստան աշխարհը:

Եկավ Շահ Աբաս իր անողոք զորքերով, գերեց բշեց Այրարատի հայությունը, անորդի դարձուց Մայր Էջմիածինը, բայց հայ ազգը դիմացավ, իր Լուսավորչին պես, վերակերտեց իր տունը և ծաղկեցուց իր այգին:

Նոր դար՝ նոր աղետ. Լուսավորչի թոռները դեռ պիտի տառապեին իրենց նախանոր նման: Անավոր էր լուրը. հայուն գոյության վտանգ կսպառնար: Հիշեց Անդրանիկ Տրդատի թուրը, ձեռք առավ զայն, հնձավ իր ապիտակ ձին և իջավ ասպարեզ: Կայծակե թուրը կշողար հրացայտ, կրակ կար Անդրանիկի աչքերուն մեջ, ոսոխները ընկրկեցան: Անդրանիկ ետին դարձավ, երկինքի և երկրի մեջտեղ կանթեղ մը լույս

կարձակեր. Լուսավորչի կանթեղն էր, հավիտենական խորհրդանիշը հայուն հավատքին և անմեռ կենդանության: Անդրանիկի անաղարտ անունը պարուրվեցավ լույսերով:

Մենք Էջմիածին մը ունինք, որուն վերև կպլպլա Լուսավորչի կանթեղը և կշողշողա Տրդատի թուրը: Դարեր կու գան, դարեր կերթան, Էջմիածինը կապրի իր քարեղեն գոյությամբ և հոգեղեն զորությամբ: Անոր լուսաշող ճառագայթները սահման ու արգելք չեն ճանչնար, կթափանցեն ամեն տեղ ուր որ հայ կա, և կցուցնեն այն ճամբան որ կտանի դեպի անմահություն:

Տոն ս. Էջմիածնի
12.6.77

(«Սիոն» ամսագիր, Երուսաղեմ, 1977, № № Ե—Զ., էջ 180—182)



ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ԲԵՄ. ԼՈՒՐԵՐ

Հունիսի 4-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում, Ավագ սեղանի վրա, հանդիսավոր սուրբ պատարագ է մատուցում Բաղդադից ուխտավորաբար Մայր Աթոռ ժամանած տ. Պսակ արքեպ. Թումայանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զհաց մեր հանապազօրդ տուր մեզ այսօր» (Ղուկ. ԺԱ 3) Տերունական աղոթքի բնաբանով:

* * *

Հունիսի 5-ին, երկուշաբթի.—Այսօր Մայր Աթոռ ս. Էջմիածնից հրաժեշտ առավ տ. Պսակ արքեպ. Թումայանը և մեկնեց Լոնդոն:

* * *

Հունիսի 11-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում իր քահանայական անդրանիկ պատարագն է մատուցում տ. Կոմիտաս արդ. Հովնանյանը և «Հայր մեր»-ից առաջ քարոզում «Զի՞ տեսցես զշիւղ յական եղբօր քո և ի քում ակսն զգերանդ ոչ նշմարես» (Ղուկ. Զ 42) բնաբանով:

* * *

Հունիսի 12-ին, երկուշաբթի.—Այսօր, առավոտյան, հոգևոր ճեմարանի ուսանողությունը, տեսչի և դասախոսական կազմի ղեկավարությամբ, չորսօրյա շրջապտույտի մեկնեց դեպի Սիսիան, ս. Տաթևի վանք, Գորիս և Եղեգնաձոր:

* * *

Հունիսի 15-ին, հինգշաբթի.—Այսօր, առավոտյան ժամը 12-ին, Մայր տաճար այցելեցին հյուրաբար Հայաստանում գտնվող Միավորված ազգերի կազմակերպության մոտ աշխատող բազում երկրների դիվանագիտական մարմինների ներկայացուցիչներ:

Մայր տաճար այցելելուց հետո, հանուն Վեհափառ Հայրապետի, հարգելի հյուրերին Վեհարանում ընդունեցին տ. Կոմիտաս արքեպ. Տեր-Ստեփանյանն ու «Էջմիածին» ամսագրի խմբագիր Ա. Հատիտյանը:

Տ. Կոմիտաս արքեպիսկոպոսը, ողջունելով հյուրերի ներկայությունը, բարի գալուստ մաղթեց նրանց և ապա համառո-

տակի ներկայացրեց Մայր Աթոռ ս. Էջմիածնի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը՝ որպես Հայաստանյայց եկեղեցու պատմական ու դարավոր կենտրոնի, որը նախախնամական դեր է կատարել և կատարում է հայ ժողովրդի եկեղեցական, մշակութային և հայրենասիրական կյանքում:

Այնուհետև սրբազանը պատասխանեց ներկաներից ոմանց հարցերին:

Հարգելի հյուրերը, հյուրասիրվելուց հետո, շնորհակալություն հայտնեցին սրբազանին և, Նոր Վեհարան այցելելուց հետո, մեկնեցին լավագույն տպավորություններով:

* * *

Հունիսի 18-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում ս. պատարագ մատուցեց ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ֆրեզնոյի հայոց հոգևոր հովիվ տ. Տաթև քհն. Թաթուլյանը և քարոզեց՝ դեպի ս. Էջմիածին և մայր հայրենիք իր կատարած ուխտավորության հոգևոր, հայրենասիրական նշանակության մասին:

* * *

Հունիսի 25-ին, կիրակի.—Այսօր Մայր տաճարում պատարագում և քարոզում է ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Բաղդադի հայոց ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու տ. Օշական քհն. Գրլիճյանը, որը ուխտավորական մի մեծ խումբ առաջնորդել էր Մայր Աթոռ և հայրենիք:

* * *

Հունիսի 22-ին, հինգշաբթի.—Այսօր Մայր Աթոռ է այցելում, գլխավորությամբ Հակոբ Ազատյանի (Մյունխեն) և Արմենակ Յազմաճյանի (Ֆրանկֆուրտ), Գերմանիայի հայ գաղութից ուխտավորների մի մեծ խումբ:

Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանն ընդունում է ուխտավորներին Վեհարանում և զրուցում նրանց հետ գերմանահայ համայնքի եկեղեցական, մշակութային կյանքի մասին: Ուխտավորները Մայր տաճար այցելելուց և իրենց ուխտն ու աղոթքը կատարելուց հետո՝ մեկնում են Մայր Աթոռից լավագույն տպավորություններով:

ԱՐԱՐԱՏՅԱՆ ԳԻՏԱՀԵТԱԶՈՏԱԿԱՆ
ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ

ՀՈԳԵՎՈՐ ՀՈՒՆՉ

Հոգևոր սիփիթարության և բերկրանքի բացառիկ օր էր Մայր Աթոռի միաբանության համար մայիսի 27-ը, շաբաթ, ս. Գրիգոր Լուսավորչի «Եղն ի վիրապէն» տոնը, երբ Վեհափառ Հայրապետի կարգադրությամբ Մայր տաճարում տեղի ունեցավ սարկավագական ձեռնադրություն:

Այդ օրը հոգևոր հեմարանի Բ լսարանի բոլոր ութ ուսանողները միասիրտ ու միախորհուրդ, իրենց ազատ կամքով, հոգու թելադրանքով ու թրթիռով և անխար զգացումով, որպես «անձինք նուիրեալք սիրոյն Քրիստոսի», որոշեցին իրենց երիտասարդ ու խստումնապից կյանքը ընծայել Մայր Աթոռի և հայ եկեղեցու ծառայության սրբազան գործին՝ ընդունելով հոգևոր սպասավորության առաջին աստիճանը խորհրդանշող սարկավագական ուրարը:

Այդ համարձակ և սրտառույծ քայլը մեր ուսանողների հոգեկան չափահասության, մտածումի և զգացումի հասունության պայծառ վկայությունն էր:

Հինգ-վեց տարիներ առաջ այդ ութ տղաքը, որոնցից չորսը հայրենի աշխարհից են և մյուս չորսը՝ սփյուռքի մեր թեմերից, ծվեն-ծվեն հոգիներով եկան Մայր Աթոռ ուսանելու, եկան ընտանեկան տարբեր միջավայրերից, տարբեր դաստիարակության, տարբեր հոգեբանությունների և նախասիրությունների տեր:

Ս. Էջմիածնի կրոնաշունչ և վանական մթնոլորտի մեջ այդ տղաքը անցկացրին իրենց ուսումնառության բեղուն վեց տարիները:

Ս. Էջմիածինը հանդիսացավ նրանց հոգու, մտքի և սրտի խանձարուրը՝ հմուտ և անձնվեր դասախոսների անձանձիր, եռանդագին և սրտամաշ հոգածության և հսկողության ներքո:

Մանավանդ Հայոց Հայրապետի նայվածքի և օրհնության տակ լցվեցին նրանք Մայր Աթոռին և հայ հավատացյալ ժողովրդին ծառայելու գիտակից նվիրումով, ու տարիների ընթացքում նրանց մտքի և սրտի վրա ցանված հավատքի, գիտության, ծառայության բարի սերմերը աճեցին և տվեցին լավագույն պտուղները «ընդ միոյ երեսուն, ընդ միոյ վաթսուն և ընդ միոյ հարիւր»:

Նորընծաները հեմարանի հարկի տակ ճանաչեցին և սիրեցին հայ եկեղեցին, մեր մշակույթն ու գրականությունը և հոգևոր արժեքները:

Մոտիկ անցյալում վանքերում ձեռնադրության նման առիթով բոլորանվեր ծառայության կանչված տղաների ամբողջ խումբը կոչվում էր «ողջակէզ» լսարան: Նույնն է պարագան նաև մեր նորընծա սարկավագների:

Ս. Էջմիածնի խորհրդի և լույսի մեջ հա-



Նորընծա սարկավագները լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի և հոգևոր ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանի հետ Վեհարանի մուտքի առաջ

սունացավ, կազմակերպվեց և իմաստավորվեց նրանց հոգևոր, մտավոր ու հայրենասիրական կյանքը գոհացուցիչ և բազմակողմանի պատրաստությամբ:

Նորընծաները Մայր Աթոռում գտան նաև ծնողական ջերմ գուրգուրանք ու հոգածություն և իրենց ապագա հոգևոր, մշակութային ծառայության համար մաքուր, քրիստոնեական ու հայեցի միջավայր և շունչ՝ պատրաստվելու համար վաղվա իրենց մեծ ու դժվարին գործին:

Այս անգամ էլ մեր նախնյաց հավատքի և նվիրումի տեսիլքն է մարմնավորվել այս անուշ տղաների երիտասարդ կյանքի մեջ:

Հաջորդ տարիներին, վստահ ենք, որ փորձառության բովից անցնելով, նրանք կավարտեն իրենց ուսումը հոգևոր ճեմարանում և Հայոց Հայրապետի բարի շնչի տակ է՛լ ավելի կհասունանան, է՛լ ավելի կպատրաստվեն կարենալ դառնալու համար արժանի մշակներ և հաջորդներ իրենց հոգևոր մտատիպարներին, որոնց նվիրումով և աշխատանքով փառավորվել, պայծառացել է Մայր Աթոռ ս. Էջմիածինն ու հայ եկեղեցին:

Այսօր նրանց կենդանի ու ոգեշնչող մտատիպարն է, «Զօրագլուխն առաքինեաց»՝ Հայոց բարի և արի Հայրապետը:

Ութ նորընծաները ձեռնադրությունից առաջ իրենց սրտի դիմումը ներկայացրին որպես ուխտ և խոստում Հայոց Հայրապետին՝ միջնորդությամբ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի և ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավ. քհն. Մարուքյանի: Վեհափառ Հայրապետը հարգեց եղած այդ միջնորդությունը և, մանավանդ բաջածանոթ լինելով անձամբ ութ ուսանողների կյանքի և ուսումնառության տարիներին հոգևոր ճեմարանում որպես նրանց տրամաբանության և հոգեբանության դասախոսի, հրահանգեց նրանց ձեռնադրությունը:

Մայիսի 26-ին, ուրբաթ օրը, երեկոյան ժամերգությունից հետո, Մայր տաճարում կատարվեց նորընծաների սարկավագական նոչման արարողությունը, իսկ ամսի 27-ին, շաբաթ օրը, ս. Լուսավորչի տոնին՝ **կարգ ձեռնադրությունը**՝ ձեռամբ լուսարարապետ տ. Հուսիկ սրբազանի և խարտավիրակությամբ տ. Ալեքսիս արդ. Մանդալյանի:

Ձեռնադրությունից հետո տ. Հուսիկ սրբազանը, հանուն Հայոց Հայրապետի, նորընծաներին շնորհավորեց և նրանց ուղղեց իմաստալից հորդորական՝ մաղթելով, որ նրանք լինեն անձնուրաց և սրտեռանդն մշակներ հայ եկեղեցու և հարազատ զավակներ Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

Ժամը 14-ին միաբանական սեղանատունը, ի պատիվ նորընծաների, տրվեց հաշկերույթ, որին ներկա էին Մայր Աթոռի ողջ միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմն ու ուսանողությունը:

Ճաշկերույթի ժամանակ, հանուն դասախոսական կազմի, նորընծաներին շնորհավորեց «Էջմիածին» ամսագրի խմբագիր և հոգևոր ճեմարանի ավագ դասախոս Արթուն Հատիտյանը, որն առաջին իսկ մեկ օրից, մյուս դասախոսների հետ միասին, հետևել է նորընծաների ուսումնառության տարիներին, նրանց հոգևոր ու մտավոր աճին, խանդավառությամբ և լավատեսությամբ, այն պայծառ գիտակցությամբ, որ մեր օրերում ևս կարիքը կա միշտ և հանապազ հոգևոր նոր հունձի՝ արժանավոր և հավատավոր եկեղեցականների՝ կարենալ լցնելու համար այն դատարկությունը, որ իրենց ետին են թողնում մեզանից ընդմիշտ հեռացած մեր վաստակաշատ հոգևորականները:

Արդարև, հայ եկեղեցու հարատևությունը, առաքելությունն ու կենսունակությունը կախում ունեն առաջին հերթին Մայր Աթոռում և հայրենի հողի վրա լուսամիտ, հոգևոր և բարոյական ամուր, սկզբունքային դաստիարակություն ստացած հոգևորականներից:

Բարեկարգ, զորավոր եկեղեցի՝ նշանակում է, ամեն բանից առաջ, հավատավոր, գիտակից և կարգապահ հոգևորականություն, մեր նախնյաց պայծառ տեսիլքով առաջնորդված՝ կարենալ շարունակելու համար պատմական իր առաքելությունը մեր ժողովրդի կյանքում արդի աշխարհի բարդ պայմաններում:

Նորընծաներին ուղղյալ խանդավառ և ոգեշունչ խրատական խոսեց նաև այդ օրերին ուխտավորաբար Մայր Աթոռում գտնվող Ռումինիայի և Բուլղարիայի միացյալ հայոց թեմերի առաջնորդ տ. Տիրայր եպս. Մարտիկյանը:

Հանուն նորընծաների երախտագիտության և շնորհակալության ջերմ ու անկեղծ խոսք ասաց նորընծա Հրաչ սրկ. Օղլուգյանը (Լիբանանից)՝ ուղղյալ Վեհափառ Հայրապետին, լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոսին, հոգևոր ճեմարանի տեսչությանը և դասախոսական կազմին:

Ուրախ են Մայր Աթոռի միաբանությունը, հոգևոր ճեմարանի դասախոսական կազմը, այն անխաբ հավատումով, որ ութ սարկավագների ձեռնադրությունը, նրանց սրբազան ուխտը, հոգևոր գինվորագրությունը նոր ուժ, նոր կորով է բերում այս դարավոր Հաստատությանը, որ Մայր Աթոռ ս. Էջմիածինն է, և նրա միջոցով՝ հայ եկեղեցուն:

Մայր Աթոռ ս. Էջմիածնի, Հայոց Հայրապետի այս ուրախությունն ու բերկրանքը բաժանում է նաև մեր հավատավոր ժողովուրդը, որ ի հայրենիս և ի սփյուռս աշխարհի, այս երիտասարդ սարկավագների ուխտով, սարկավագներ, որոնք խոստանում են պատվով և սրբությամբ կրել իրենց ուսերի վրա մեր նախնյաց սրբությունների, հավատքի և հայրենասիրության սրբազան տապանակը:

Արդարև, «Հունձք բազում են և մշակք սակաւ» (Մատթ. Թ 37):

«Արդ, աղաչեցէք զՏէր հնձուց, զի հանցէ մշակս ի հունձս իւր» (Ղուկ. Ժ 2—3):

* * *

Հովհաննես սարկավագ Ղազարյան. ծնվել է 1955 թվականի հունիսին Հոկտեմբերյան քաղաքում: Ավարտել է տեղի միջնակարգ դպրոցը 1970-ին և նույն թվականին էլ ընդունվել հոգևոր ճեմարան: Իր զինվորական-հայրենասիրական ծառայությունը կատարելուց հետո վերադարձել է հոգևոր ճեմարան 1976-ին և շարունակել իր ուսումնառությունը Բ լսարանում:

Խաչիկ սարկավագ Մարտիրոսյան. ծնվել է 1956 թվականի հուլիսին Էջմիածնի շրջանի Ոսկեհատ գյուղում: 1963—1971 թվականներին սովորել է տեղի միջնակարգ դպրոցում: 1971 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան: 1975—1977 թվականներին կատարել է իր զինվորական-հայրենասիրական ծառայությունը սովետական բանակում և ապա վերադարձել հոգևոր ճեմարան: Այժմ սովորում է Բ լսարանում:

Արա սարկավագ Ճլուկյան. ծնվել է 1957 թվականի մայիսին Բուխարեստում: 1974 թվականին ավարտել է համար 195 միջնակարգ դպրոցը և ընդունվել հոգևոր ճեմարան, որտեղ սովորում է այժմ Բ լսարանում:

Վաչագան սարկավագ Ավետիքյան. ծնվել է 1957 թվականի օգոստոսին Երևանում: 1974 թվականին ավարտել է տեղի Դերենիկ Դեմիրճյանի անվան միջնակարգ դպրոցը և նույն թվականին ընդունվել հոգևոր ճեմարան: Այժմ սովորում է Բ լսարանում:

Վահրամ սարկավագ Տերտերյան. ծնվել է 1957 թվականի դեկտեմբերին Բեյրութում: Ավարտել է տեղի Նոր Մարաշի ազգային Քառասնից Մանկանց նախակրթարանը, իսկ 1970—1971 թվականներին սովորել Անթիլիասի Կիլիկյան Աթոռի դըպրեվանքում, որի հինգամյա դասարանական բաժինը ավարտելով, 1976 թվականին ընդունվել է ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան: Այժմ սովորում է Բ լսարանում:

Խաչիկ սարկավագ Խարազյան. ծնվել է 1958 թվականի հոկտեմբերին Հալեպ քաղաքում: 1964 թվականին ծնողների հետ հայրենադարձվել է և հաստատվել Լենինականում: Սովորել է տեղի Միքայել Նալբանդյանի անվան միջնակարգ դպրոցում մինչև 9-րդ դասարան և 1973 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան: Այժմ սովորում է Բ լսարանում:

Հրաչ սարկավագ Օղլուգյան. ծնվել է 1959 թվականի հունվարին Բեյրութում: Սովորել է տեղի Հաճն թաղամասի ազգային ս. Սահակ-Մեսրոպյան նախակրթարանում և այն ավարտել 1972 թվականին: 1973 թվականին ընդունվել է հոգևոր ճեմարան: Այժմ սովորում է Բ լսարանում:

Հովսեփ սարկավագ Պալըգյան. ծնվել է 1959 թվականի դեկտեմբերին Բեյրութում: Սովորել է տեղի ս. Քառասնից Մանկանց նախակրթարանում և այն ավարտել 1972 թվականին: Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարան է ընդունվել 1973 թվականին: Այժմ սովորում է Բ լսարանում:

«Էջմիածին» ամսագրի խմբագրությունը ջերմորեն շնորհավորում է նորընծա ութ սարկավագներին, այն սրտագին բարեմաղթությամբ, որ նրանք իրենց ուսումնառության հաջորդ տարիներին լինեն ս. Ստեփանոս սարկավագի նման «արք լի հաւատովք և Հոգւով սրբով» (Գործք. Զ 5) և արդարացնեն իրենց վրա դրված բոլոր բարի հույսերը:

ՏԱՐԱԾԵԱԼ

Դաշն. Պասկ Ս.Բ.

Andante

S. Տա-րա ծեալ ծեռք. ը ցդ ծե - ռա ց ոտք ընդ ո - տից ըն.

A. Տա-րա ծեալ ծեռք ընդ ծե - ռաց ոտք ընդ ո - տից ըն.

T. Տա-րա ծեալ ծեռք ը ցդ ծե - ռաց ըն ցդ ո - տից - ըն.

B. Տա-րա ծեալ ծեռք ընդ ծե ռաց ոտք ընդ ո - տից ըն -

թա ցալ եաց՝ փայտ ընդ փայ - տի դա ռը ց պըտ ղո յ կեանք

թա ցալ եաց՝ փայտ ընդ փայ . տի դա ռը ց պըտ ղո յ կեանք

թա ցալ եաց՝

թա ցալ եաց՝

ընդ մա հու-փո - խար կե լով։

ընդ մա հու փո խար կե լով։ ի մէջ եր կու ց ա -

ի մէջ եր կուց ա


Ցо рի Ցա ց կայր մե ր կա ցեա լ տո ողՑ о рի
Ցо рի Ցա ց կայր մեր կա ցեալ տо ողՑ о рի
mf
զոր ոչ տե - սին ազ - գը Ց կու ра ց բայց
Ցաց զոր ոչ տե սին ազ գըՑ կու ра ց բայց
mf
զոր ոչ տե սին ազ գըՑ Ց կու ра ց բայց
mf
Ցաց զոր о չ տե սին ազ գըՑ կու ра ց բայց
p rit.
ի մի ոյՑ յա ւա զա կա ց։
p rit.
ի մի ոյՑ յա ւա զա կա ց։
p rit.
ի մի ոյՑ յա ւա զա կա ց։
rit.
ի մի ոյՑ յա ւա զա կա ց։



ԱՄԱՎԵՐՋԻ ՀԱՆԴԻՍՈՒԹՅՈՒՆ ՀՈԳԵՎՈՐ ՃԵՄԱՐԱՆՈՒՄ

Հունիսի 9-ին, ուրբաթ օրը, առավոտյան ժամը 11-ին, ճեմարանի հանդիսությանց դահլիճում տեղի ունեցավ հոգևոր ճեմարանի 1977—78 ուս. տարվա ամավերջի հանդեսը՝ նախագահությամբ Մայր տաճարի լուսարարապետ տ. Հուսիկ եպս. Սանթուրյանի:

Վեհափառ Հայրապետը հովվապետական այցելությամբ բացակայում էր Մայր Աթոռից:

Հանդիսությանը ներկա էին Մայր Աթոռի միաբանությունը, ճեմարանի դասախոսական կազմը, մայրավանքի պաշտոնեությունը և այլ հյուրեր:

«Հայր մեր»-ից հետո հնչեց Հայկական ՍՍՀ պետական հիմնի նվագը, որին հաջորդեց «Ճեմարանական քայլերգ» խմբերգը՝ ճեմարանի ուսանողների կատարմամբ: Այնուհետև բացման խոսքով հանդես եկավ ճեմարանի ավագ վերակացու տ. Արտակ քհն. Սիմոնյանը:

Գեղարվեստական բաժնում ելույթ ունեցավ ճեմարանի երգչախումբը՝ ղեկավարությամբ ՀՍՍՀ վաստակավոր արտիստ և ճեմարանի եվրոպական երաժշտության դասախոս, խմբավար Խորեն Մելիքանեջյանի: Երգչախումբը հանդիսավորությամբ կատարեց «Էջ Միածինն ի Հօրէ», «Որք զարդարեցին» շարականները և Կարա Մուրզայի «Լեպո լե լե», Կոմիտաս վարդապետի «Էս առուն ջուր է գալի», «Հարայ Էլլի» և Մակար Եկմալյանի «Ահա ծագեց կարմիր արև» խմբերգերը:

Այնուհետև արտասանությամբ հանդես եկան ճեմարանի Բ լսարանի ուսանողներ Վաչագան սրկ. Ավետիքյանը և Հովսեփ սրկ. Պալըգյանը, Ա լսարանի ուսանող Բորիս Մալյանը, Գ դասարանի ուսանող Կարեն Փանոսյանը, որոնք հաջորդաբար կատարեցին Արշալույս Մարգարյանի «Հայոց լեզու», Վահան Թեքեյանի «Աղոթք վաղվան սեմին առջև», Ավ. Իսահակյանի «Թոռնիկին» (ռուսերենով) բանաստեղծությունները և «Լեռան բարոզը» հատվածը Ավետարանից (անգլերենով):

Դաշնամուրի դասարանի ուսանողներ Արա Դաբեկյանը, Վաչե Բոզոյանը (Բ դաս.), Կարեն Փանոսյանը (Գ դաս.) և Խաչիկ սրկ. Մարտիրոսյանը (Բ լսարան) կատարեցին հայկական ժողովրդական պարեր՝ «Փերի», «Մեկ, երկու, երեք, չորս», «Կատակ պար» և Արամ Խաչատրյանի «Երաժշտական պատկերներ» ստեղծագործությունները:

Ուսանողության անունից հետևյալ ուղերձով հանդես եկավ Բ լսարանի ուսանող Հրաչ սրկ. Օղլուգյանը.

«Այս բերկրալի պահին դժվար է ինձ համար ուսանող եղբայրներիս և իմ զգացումները ձեզ հաղորդել:

Սակայն անվարան կերպով կարող եմ ասել, որ բոլորս այս պահին հուզված ենք: Հուզված ենք, քանզի ժամն է բաժանման, ժամը հրաժեշտի: Ամփոփելով 1977—78 թվականների ուսումնական տարեշրջանի մեր աշխատանքի արդյունքները, այս տարին ևս հանձնում ենք հոգևոր ճեմարանի լուսափառ պատմության գիրկը:

Մի քանի տարի առաջ էր, երբ մենք, տակավին նոր կազմավորված պատանիներ, անսպասելի մեր ներքին ձայնին, մեր քայլերը ուղղեցինք դեպի հոգևոր ճեմա-

րան, մեր հոգիները աղեցուն ապագայի գեղեցիկ երազներով: Դա ձայնն էր ուսումնառության, ձայնը՝ մեր հոգևոր կոչման:

Այդ օրվանից անցել են տարիներ: Մենք աճել ու զարգացել ենք հոգևոր ճեմարանի նվիրական այս հարկի տակ, վանքի հոգեպարար մթնոլորտում, քաջ գիտակցելով մեր պարտականության ծանրությունը:

Հոգևոր ճեմարանը ուսանելու հեռանկարներ բաց արեց մեր առաջ, ընդունակ դարձրեց մեզ զննելու մարդկային հոգու խորքերը, նշմարելու այնտեղ նորանոր արժեքներ և գնահատելու այն գեղեցկությունները, որոնք շատ ավելի բարձր են ու վսեմ՝ արտաքին գեղեցկություններից, և որոնցով միայն կարող է զարդարվել մարդկային հոգին:

Հոգևոր ճեմարանը սովորեցրեց մեզ նաև ճանաչել հայ ժողովրդին, նրա անցյալն ու ներկան, նրա տառապանքները, հավատալիքներն ու հոգին և մեր վրա պարտականություն դրեց՝ ուր էլ որ գնանք և ուր էլ որ լինենք, միշտ պատրաստակամ գտնվենք անձնազոհ կերպով ծառայելու նրան՝ մեր հարազատ ժողովրդին:

Այժմ մի ուրիշ՝ ավելի գրավիչ ձայն կանչում է մեզ առավել բարձր, առավել վսեմ մի գործունեության նվիրվելու: Դա ձայնն է հոգևոր կոչման, ձայնը Փրկչի՝ Հիսուս Քրիստոսի: Անսալով այդ ձայնին, մենք որոշեցինք նվիրվել մեր եկեղեցու ծառայության սուրբ գործին, և ուրախ ենք, որ Վեհափառ Հայրապետը, ընդառաջելով մեր խնդրանքին, բարեհաճեց կարգադրել, որ մենք դառնանք հայ եկեղեցու համար սպասավորներ՝ սարկավագներ:

Թույլ տվեք, Վեհափառ Տեր, ուսանող եղբայրներիս և իմ անունից երախտագիտության խոր զգացումներով լցված շնորհակալություն հայտնել Ձեզ, որ Դուք մեր ուսումնառության տարիներին որպես մեր Ուսուցչապետն ու Հայրը ուշադրությամբ, խանդակաթ սիրով խրատեցիք և սովորեցրիք մեզ ճանաչել միշտ ճշմարիտը, բարին ու գեղեցիկը և հեռու մնալ մարմինն ու հոգին աղարտող ամեն տեսակ երևույթներից:

Շնորհակալական խոսք ունեմ ասելու նաև լուսարարապետ տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանին, որ այնքան բարեսիրությամբ և համբերությամբ սովորեցրեց մեզ կարգապահ լինել եկեղեցում, սիրել արարողությունները: Երախտապարտ ենք, որ նա մեծ սիրով հանձն առավ նաև մեզ սարկավագ ձեռնադրել:

Շնորհակալության խոսք ունեմ ասելու նաև ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավագ քհն. Մարուքյանին, որ տարիներ շարունակ հայրական գորովագութ սիրով և անձանձրույթ կերպով դաստիարակեց, խրատեց մեզ: Մեր յուրաքանչյուր քայլափոխին, հաջողությունների թե դժվարությունների դեպքում, մենք միշտ զգացինք նրա ուշադիր և զգայուն վերաբերմունքը մեր նկատմամբ:

Շնորհակալական խոսք ունեմ ասելու նաև ճեմարանի դասախոսական կազմին՝ մեր սիրելի ուսուցիչներին, որոնք ոչինչ չխնայեցին մեզ համար և իրենց անսպառ գիտելիքներից առատորեն բաշխեցին մեզ և սովորեցրին «Աստուծո բացված լույսի և գիտության աղբյուրից» խմել (Կորյուն): Այդ աղբյուրը քրիստոնեական վարդապետության ճշմարիտ լույսի աղբյուրն է, որ մեր առաջ բացում է հավիտենականության լուսապլուռ ճամփան:

Այժմ, Վեհափառ Տեր, թույլ տվեք համբուրել Ձեր պատվական ու սուրբ Աջը և ստանալ Ձեր հայրական օրհնությունները»:

Հանդիսության երկրորդ մասում ճեմարանի ուսումնա-դաստիարակչական աշխատանքների մասին հաշվետու զեկուցմամբ ելույթ ունեցավ ճեմարանի տեսուչ տ. Հովհաննես ավ. քհն. Մարուքյանը: Զեկուցումը հրատարակվում է կրճատումներով.

«Ս. Էջմիածնի հոգևոր ճեմարանն այս տարի էլ՝ պատմություն դարձած 1977—1978 ուսումնական տարեշրջանը փակում է գոհացուցիչ արդյունքներով և խաղաղ խղճմտանքով:

1977—1978 ուսումնական տարեշրջանի սկզբում հոգևոր ճեմարանը ունեցել է 33 ուսանողներ, որից 12-ը՝ նոր ընդունվածներ:

Նոր ընդունված ուսանողներից երկուսը ԱՄՆ-ից են (Հովսեփ սրկ. Մովսեսյան և Ռաֆֆի սրկ. Կարապետյան), որոնք դասերին մասնակցել են որպես ազատ ունկնդիրներ:

Ուսումնական տարեշրջանի ընթացքում 2 ուսանողներ մեկնել են բանակ և 5 ուսանողներ հեռացել են կամ հեռացվել ճեմարանից: Այս դրությամբ հոգևոր ճեմարանի ուսանողների թիվը ըստ դասարանների հետևյալն է.

Բ լսարան՝ 8 ուսանող.
Ա լսարան՝ 5 ուսանող.
Գ դասարան՝ 3 ուսանող.
Բ դասարան՝ 7 ուսանող.
Ազատ ունկնդիրներ՝ 3 ուսանող:

Ուսանողներից 13-ը օտարահպատակներ են՝ Լիբանանից, Սիրիայից, Ռումինիայից, ԱՄՆ-ից, իսկ մնացած 13-ը՝ Հայաստանի և հարևան հանրապետությունների զանազան շրջաններից:

Այս տարի չենք ունեցել Գ լսարան և Ա դասարան:

1976—1977 ուս. տարվա շրջանավարտ ուսանողներից տ. Թադեոս քհն. Ավագյանը, Սորին սրկ. Մանդալյանը, Կիրակոս սրկ. Հովնանյանը, Բյուզանդ սրկ. Գալաչյանը, Դերենիկ սրկ. Սայանը ապրիլի 13-ին հաջողությամբ պաշտպանեցին իրենց դիպլոմային աշխատանքները և ստացան ավարտական վկայականներ:

Ուրախությամբ պետք է նշել, որ շրջանավարտներից Կիրակոս սրկ. Հովնանյանը, Սորին սրկ. Մանդալյանը ս/թ. մայիսի 14-ին, Հոգեգալստյան տոնի օրը, կուսակրոն քահանաներ ձեռնադրվեցին՝ անվանվելով տ. Կոմիտաս աբեղա և տ. Ամետիս աբեղա: Ապրիլի 16-ին Միսակ սրկ. Մարգարյանը ձեռնադրվել է ամուսնացյալ քահանա՝ տ. Մանուկ անունով:

Հոգևոր ճեմարանի տեսչական և դասախոսական կազմի մեջ տեղի ունեցան մի քանի փոփոխություններ: Տ. Ավագ աբեղա Անատրյանը ԱՄՆ տեղափոխվելու կապակցությամբ ազատվել է ուսուցչական պարտականությունից: Փոխտեսչի պաշտոնից ազատվեց տ. Անանիա վրդ. Արաքաջյանը՝ «Էջմիածին» ամսագրի խմբագրությունում պատասխանատու քարտուղար աշխատանքի անցնելու կապակցությամբ:

Վերակացուի պաշտոնից ազատվեց նաև Հենրի Բալյանը և նշանակվեց հոգևոր ճեմարանի գրադարանավար:

1977—1978 ուսումնական տարվա դասախոսական կազմը հետևյալն է.

Ն. Ս. Օծություն Տ. Տ. Վազգեն Ա կաթողիկոս Ամենայն Հայոց, տ. Անանիա վրդ. Արաքաջյան, տ. Կոմիտաս աբեղա Հովնանյան, տ. Հովհաննես ավագ քհն. Մարության, տ. Արտակ քհն. Սիմոնյան, Միքայել սրկ. Զևյան, Ստեփան սրկ. Չակալյան, Արթուն Հատիտյան, Պարգև Շանբազյան, Խորեն Մելիքանեջյան, Սիմոն Կրկնաշարյան, Բարսեղ Թաշչյան, Արամ Սահակյան, Երվանդ մելքոնյան, Խաչատուր Ներսեսյան, Հայկ Ֆրունջյան, Ռուբեն Կարապետյան, Թադեոս Ամարյան:

Հոգևոր ճեմարանի տեսչական կազմը հետևյալն է.

Տ. Հովհաննես ավագ քհն. Մարությանը՝ տեսուչ.

Տ. Արտակ քհն. Սիմոնյանը՝ ավագ վերակացու.

Տ. Մանուկ քհն. Մարգարյանը՝ վերակացու.

Վարդավառ Սիմոնյանը՝ վերակացու.

Բարսեղ Թաշչյանը՝ հաշվապահ-քարտուղար.

Հենրի Բալյանը՝ գրադարանավար:

Հոգևոր ճեմարանի բժիշկն է Հրաչիկ Մանուկյանը:

Այս տարի ճեմարանի հարկի տակ տեղի են ունեցել հետևյալ հանդիպումները, հանդիսությունները ու զեկուցումները.

ա) Հանդիպում Քենթրբերիի արքեպիսկոպոս դոկտ. Ֆրեդերիկ Դոնալդ Կոգանի հետ. 1977 թ. սեպտեմբերի 30-ին.

բ) Հանդիպում Եկեղեցիների հանաշխարհային խորհրդի «Հավատո և կարգի» հանձնաժողովի տնօրեն դոկտ. Լուկաս Ֆիշերի հետ. 1977 թ. հոկտեմբերի 19-ին.

գ) Սլայդներով ցուցադրություն Հայաստանի տեսարժան վայրերի. 1977 թ. նոյեմբերի 25-ին.

դ) Բանախոսություն՝ նվիրված Եղիշե Չարենցի ծննդյան 80-ամյակին: Բանախոսեց հոգևոր ճեմարանի դասախոս Արամ Սահակյանը.

ե) Նոր տարվա տոնակատարություն.

զ) Վարդանանց տոնակատարություն. զեկուցող՝ տ. Անանիա վրդ. Արաքաջյան.

է) Դիպլոմային աշխատանքների պաշտպանություն. 1978 թ. ապրիլի 13-ին:

Այս տարի ուսանողները եռօրյա ձմեռային արշավի են մեկնել Ծաղկաձոր և միօրյա պտույտի՝ ս. Գեղարդ վանք: Իսկ հունիսի 12—15-ը հոգևոր ճեմարանի ուսանողությունը և դասախոսական կազմը մեկնելու են Տաթև 4-օրյա պտույտի:

Ուսանողները հաճախ գնացել են կինո, թատրոն, երաժշտական ներկայացումների: Արտադասարանական աշխատանքների շարքում ուշադրություն է դարձվել ուսանողների ֆիզիկական կոփվածության վրա: Նրանք հաճախ կազմակերպել են թենիսի, բասկետբոլի և ֆուտբոլի մրցումներ:

Ս. Ստեփանոսի տոնին Բ և Գ դասարանների ուսանողները ստացան դպրության աստիճան, իսկ 1978 թ. մայիսի 26-ին ուրարակրության աստիճան ստացան Ա լսարանի ուսանողներ Վարդգես Ավագյանը, Ստեփան Դավթյանը, Բորիս Մալյանը և Հայկ Չիլինգարյանը, իսկ հաջորդ օրը, մայիսի 27-ին, ս. Լուսավորչի «Եղն ի վիրապէն» տոնին, տ. Հուսիկ եպիսկոպոս Սանթուրյանի ձեռամբ սարկավագ ձեռնադրվեցին Բ լսարանի 8 ուսանողներ՝ Վաչագան Ավետիքյան, Խաչիկ Խարազյան, Հովհաննես Ղազարյան, Արա Ծլոկյան, Հովսեփ Պալոգյան, Վահրամ Տերտերյան, Հրաչ Օղլուգյան և Խաչիկ Մարտիրոսյան:

Շնորհակալության խոսք ունենք նաև Մայր Աթոռի միաբանությանը, պաշտոնեությանը, բարերարներին և բոլոր նրանց, որոնք սատար հանդիսացան մեր մանկավարժական դժվարին աշխատանքներին:

Վերջացնելուց առաջ պիտի խնդրեի տեսչության և դասախոսական կազմի անունից մեր շնորհակալական խոսքերը և աջահամբույրները փոխանցել ազգիս Հայոց Վեհափառ Հայրապետին, Որը Իր գահակալության 23 տարիների ընթացքում սիրեց ճեմարանը և ղեկավարեց անձամբ մեր գործերը՝ դառնալով ճեմարանի Ուսուցչապետը և հոգաւոր Հայրը: Մաղթում ենք Նրան քաջառողջություն, բեղմնավոր գործունեություն և Իր առաքելության մեջ նորանոր հաջողություններ և երկար ու երկար արևոտ տարիներ:

Այժմ թույլ տվեք ներկայացնել այս տարվա առաջադեմ ուսանողների անունները՝ ստանալու համար նվեր-գրքերը.

Բ լսարան.—9,2 միջինով առաջինն է հանդիսանում Հրաչ սրկ. Օղլուգյանը.

9,01 միջինով երկրորդն է հանդիսանում Վահրամ սրկ. Տերտերյանը:

Ա լսարան.—9,03 միջինով առաջինն է հանդիսանում Հայկ Զիլինգարյանը.

8,65 միջինով երկրորդն է հանդիսանում Նշան Քերեմիջյանը:

Գ դասարան.—8,25 միջինով առաջինն է հանդիսանում Ստեփան Կարապետյանը.

8,15 միջինով երկրորդն է հանդիսանում Կարեն Փանոսյանը:

Բ դասարան.—9,00 միջինով առաջինն է հանդիսանում Պետրոս Ասողլյանը.

8,4 և 8,32 միջինով երկրորդն են հանդիսանում Թորոս Մելենգիջյանը և Արա Դաքեսյանը:

Օրինակելի վարքի համար տեսչությունը պարգևատրում է երկու ուսանողների՝ Բ լսարանից Հովհաննես սրկ. Ղազարյանին և Ա լսարանից Նշան Քերեմիջյանին:

Վերաքննելի են 3 ուսանողներ:

Դասարանը կրկնում է մեկ ուսանող»:

Ձեկուցման ավարտին տեսուչը հայրական ջերմ սիրով խրատական խոսեց ուսանողությանը և մաղթեց, որ նրանք ուր էլ որ լինեն, բարձր պահեն ճեմարանականի պատիվը և բարի հանգստից հետո վերադառնան արձակուրդներից, վերանորոգված ուժերով շարունակելու իրենց ուսումնառությունը հոգևոր ճեմարանի հարկի տակ:

Այնուհետև տեսուչ հայրը հրավիրեց հանդիսությունը նախագահող տ. Հուսիկ եպս. Սանթուրյանին, որ հանուն Վեհափառ Հայրապետի օրհնի ճեմարանի հարկի տակ կատարվող ուսումնու-դաստիարակչական աշխատանքները և խանդավառ խրատական փակի ուսումնական տարին: Սրբազան հայրը գեղեցիկ և խանդավառ խրատականով ոգևորեց ուսանողությանն ու նրանց նորանոր հաջողություններ մաղթեց, արձակուրդային օրերից կազդուրված վերադառնալով շարունակել իրենց աշխատանքները հոգևոր ճեմարանի հարկի տակ, որպես հարազատ զավակները Մայր Աթոռ ս. Էջմիածնի:

Ամավերջի հանդեսը ավարտվեց սրբազանի «Պահպանիչ»-ով և խմբովին երգված Տերունական աղոթքով:

ՎԱՀԱԳՆ ՍՐԿ. ԱՎԵՏԻՔՅԱՆ





Ա. ՀԱՏԻՏՅԱՆ

ՍՈՒՐԲ ԿՅՈՒՐԵՂ ՀԱՅՐԱՊԵՏ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑԻ*
(315—386)

ՍՈՒՐԲ ԿՅՈՒՐԵՂ ԵՐՈՒՍԱՂԵՄԱՑՈՒ ՄԱՏԵՆԱԳՐԱԿԱՆ ՎԱՍՏԱԿԻ ՀԱՅԵՐԵՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՈՒ ՏՊԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Կյուրեղ Երուսաղեմացու մատենագրական վաստակը նույնպես մեզ հասել է մեծ մասամբ Ե դարի առաջին հիսնամյակում, սեր վարդապետների թարգմանությամբ, «գործ ոսկեղէն դարու, հասած առ մեզ»[31]:

Կյուրեղ Երուսաղեմացու **«Կոչումն ընծայութեան** գիրքը մեր եկեղեցական մատենագրության ամենաարժեքավոր գործերից է և մեկը մեր հնագույն ոսկեդարյան թարգմանություններից»[32]:

Կյուրեղ Երուսաղեմացու ««Կոչումն ընծայութեան» հատորի մեջ ամփոփված են ամենը խոսած քարոզները, որոնք քրիստոնեական վարդապետության սկզբունքները կպարունակեն, ոսկեդարյան թարգմանությամբ վերածված է հայերենի»[33]:

Կյուրեղ Երուսաղեմացու ««Կոչումն ընծայութեան» կոչված գիրքին թարգմանությունը ասորերենն, կատարված է շուրջ 410—415 թվականներուն», Հովսեփ Պաղնացու ձեռքով[34]:

Երևանի ս. Մեսրոպ Մաշտոցի անվան ձեռագրաց Մատենադարանում կան ամբողջական կամ հատվածական, հարազատ կամ ոչ թարգմանություններ Կյուրեղ Երուսաղեմացու նաև հետևյալ գործերից. Ի գրոց ի կոչումն ընծայութեան Կիւրղի Երուսաղեմացւոյ, Կիւրղի Երուսաղեմացւոյ՝ Վկայութիւնք, վասն մատաղին, Գիրք գանձուց, Ի բանէն բազում, վասն Երեկելոյ Խաչին յերկնից, (կամ) Թուղթ առ Կոստանդիանոս, Հարցմունք Աթանասի, պատասխանիք Կիւրղի, Դաւանութիւն, Ճառք, Խրատք, Քարոզք, Մեկնութիւն թղթոցն Պօղոսի, Վարք, Մանրանկար[35]:

Կոչումն ընծայութեան գրքի հայերեն առաջին տպագրությունը կատարվել է 1727-ին, Կ. Պոլսում[36]:

Աշխատության ընդհանուր վերնագիրն է.

---

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1978 թվականի № 6-ից:

[31] Մատենադարան Հայկական թարգմանութեանց, Վենետիկ, 1889, էջ 524:

[32] Կենք հատատոյ, հրատարակություն Կարապետ եպիսկոպոսի (Տեր-Մկրտչյան), ս. Էջմիածին, 1914, էջ XLIV:

[33] **Թորգոմ պատրիարք Գուշակյան,** Սուրբք և տոնք, Երուսաղեմ, 1939, էջ 31:

[34] **Նորայր եպիսկոպոս Պողարյան,** Հայ գրողներ, Երուսաղեմ, 1971, էջ 9—10:

[35] Ցուցակ ձեռագրաց, Ա հատոր, Երևան, 1965, էջ 1515, Բ հատոր, 1970, էջ 1342:

[36] Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ, 1512—1800, Երևան, 1963, էջ 92:

Կոչումն ընծայութեան

Յորում պարունակին բանք հաւատոյ և խրատք պիտանիք առ ընծայեալսն ի խորհուրդ սուրբ աւազանին.

Արարեալ սրբոյն Կիւրղի Երուսաղէմայ Հայրապետին, զոր սկսանի ի սկզբան քառասնորդաց պահոց սուրբ զատկին, ԺԹ ընթերցուածովք.

Թարգմանեցեալ ի յունացն

և տպեցեալ ի Բուզանդիա, ի հայրապետութեան սրբոյ Էջմիածնի տեառն Կարապետի սրբազան կաթողիկոսի ամենայն հայոց, թուին ՌԾՀԶ 1176+551=1727:

Գրքի երկրորդ էջում կա «սակաւուկ ինչ նախադրութիւն առ բարեմիտ ընթերցողսդ» (էջ 2—4), որտեղ նշվում է, «ինչպես երկնային մարմինների մեջ միայն արեգակն է ճանաչվում որպես պայծառագույնը քան մյուսները, որոնք նրանից են ստանում իրենց լույսը... այսպես էլ տարբերություն կա վարդապետական սրբազան գրքերի մեջ, որոնք գիտության լույս և շնորհք են ստանում Քրիստոսի ավետարանական վարդապետությունից և առավել են լուսավորում մարդկանց մտքերը և ճշմարիտ ունկընդիրների հոգիները շահում... «իսկ ահա ի բազմաց օգտակար և սրբազան գրեանցն մի և այս սուրբ Գիրքս է, որ կոչի Կոչումն ընծայութեան, զոր արարեալ է մեծին Կիւրղի սուրբ հայրապետին Երուսաղէմի, ի պահպանութիւն հաւատոյ և ի զգուշութիւն վարուց ըստ ուղղակի հետոցն որ ի Քրիստոս Յիսուս» (Նախադրութիւն, էջ 3):

5-րդ էջում տպագրվել է հրատարակիչ տիրացու Մարկոսի «Պաղատանք առ Միածին Որդին Աստուծոյ» ձոնը, որպեսզի Նա «լուսաւորելով զխաւարեալ աչս սրտից մերոց, շնորհեցես մեզ ուղիղ և անվրէպ հայեցումն ի սուրբ հաւատն առ Քեզ, ի պատուիրանաց Քոց պահպանութիւնս՝ ի փրկութիւն հոգւոց մերոց, ի կամս ամենասուրբ տէրութեան քո»:

6-րդ էջում ս. Կյուրեղ հայրապետի նկարն է, հայրապետական Աթոռի վրա, պատրիարքական լրիվ զգեստավորմամբ, աջ ձեռքում հովվական գավազանը, ձախին՝ Աստվածաշունչ մատյանը, և Աթոռի առաջ ծնրադիր «ճշմարիտ ունկնդիրներ» արքայական թագով ու ծիրանիով: Նկարի ներքև՝ հետևյալ երկտողը.

«Որք վառեցիք ձեզ զլապտեր հաւատոյ, զգուշասջիք ի յամենայն արատոյ»:

Հրատարակության 7-րդ էջից մինչև 376 էջը գրավում են ս. Կյուրեղ հայրապետի 16 գլուխ ճառերը.

Ա գլուխ. Կոչումն ընծայութեան, որք եկեալ էին կնիք առնուլ յԵրուսաղէմ մատուցելոց:

Ամեն մի ճառից առաջ կա աստվածաշնչական համապատասխան բնաբան և խորհրդանշական մի պատկեր, ճառի բովանդակության ու հոգևոր նշանակությանը նվիրված. Լուացարուք, սրբեցարուք, ի վերայ բանին Եսայեայ. տունկ կոչին հաւատացեալք. մերկացիր զհին մարդկութիւնն, ջանացիր վասն հոգւոյդ օգտի:

Բ գլուխ. Կոչումն արտաքնոց ի ներքս և ընծայութիւն վասն ապաշխարութեան և վասն մեղաց մերոց. չար և չարագոյն է մեղքն. մեղքն ոչ է էութիւն ինչ բնական. արարածքն Աստուծոյ՝ բարի են ի բնէ. մեղքն ի մեր. կամացս գոյանայ. առաջնորդ մեղաց սատանայ է. օրինակք ապաշխարողաց:

Գ գլուխ. Կոչումն ընծայութեան վասն մկրտելոց և վասն մկրտութեան ասացեալ. Մի իբրև ի լոկ ջուր նայէր. խորհուրդ ջրոյն. ոմանց մկրտութիւն արեամբ լինի:

Դ գլուխ. Կոչումն ընծայութեան... վասն տասն հրամանեան հաւատոյ. վասն Աստուածութեան. վասն միութեան Աստուածութեան. վասն Քրիստոսի. վասն մարմնանալոյ Միածնին. վասն Խաչի. վասն թաղման. վասն յարութեան. վասն Հոգւոյն սրբոյ. վասն միւս անգամ գալստեան. վասն կազմութեան մարդոյ. վասն մարմնոյ յարութեան. ոչ է պարտ գարշելով պահել. (Ճառի բովանդակության սույն բաժանումները կատարել է հրատարակիչը՝ ընթերցումը հեշտացնելու համար):

Ե գլուխ. Կոչումն ընծայութեան վասն հաւատոյ. վասն զօրութեան հաւատոյն. ամենայն ինչ հաւատով վճարի. հաւատքն է վահան յաղթող. որդիք Աստուծոյ լինիմք հաւատովքս. վասն ներգործութեան հաւատոյն:

Զ գլուխ. Կոչումն ընծայութեան, վասն Աստուծոյ միահեծան իշխանութեանն. վասն աստուածային էութեանն (Աստուած անճառելի է, անքննելի, անտեսանելի, ի վեր քան զամենայն միտս). առաքելք հեթանոսաց. վասն հերեսիութեան մանիքեացւոցն. վասն Սիմոնի կախարդի. ընդդէմ մանիքեացւոց. վասն Կերինթեայ, Մինանդրեայ, Կարպոկրատեայ, և Մարկիոնեայ հերեսիովտացն. վասն Փիսիդիգեայ և Վաղենտինի հերետիկոսացն. բարբանջմունք Մանեայ պղծոյն, վասն ստութեան Կումբրիկոսի:

Է գլուխ. Կոչումն ընծայութեան ի Հօր. Յիսուս է ճանապարհ առ Հայր. Յասելն Հայր՝ իմանի Որդին. որ ինչ Հօր է՝ այն Որդւոյ է. կոչի մեզ Հայր՝ ոչ ծննդեամբ:

Ը գլուխ. Կոչումն ընծայութեան յԱմենայն. ամենակալ է տէր Աստուած մեր. երկինք է երկիր գոլիս Տեառն են. զամենայն ինչ բարի ստեղծեաց Աստուած:

Թ գլուխ. Կոչումն ընծայութեան յԱրարիչն երկնի և երկրի, յերևոյթն և յաներևոյթն արարածոց. գեղեցկութիւն արեգականն. օգտութիւնք գիշերոյ. ասաց և եղեն ամենայն ինչ. օրինակ առ զմրջիմն և զմեղուն. գեղեցիկ կազմութիւն մարդոյս:

Ժ գլուխ. Կոչումն ընծայութեան, այն որ ասէ՝ մի Տէր Յիսուս Քրիստոս. այլև այլ անուանքն Յիսուսի. մի է Յիսուս Քրիստոս բազմանունն. մի է Աստուած Հայր և մի՝ Յիսուս Քրիստոս. վկայք աստուածութեան և ճշմարտութեան Յիսուսի Քրիստոսի:

ԺԱ գլուխ. Կոչումն ընծայութեան ի կարգ հաւատոյ բանին որ ասէ՝ Որդին Աստուծոյ Միածին, որ ի Հօրէ ծնեալ է Աստուածն ճշմարիտ, որ յառաջ բան զամենայնս, որով ամենայն ինչ եղև. մի է ճշմարիտ ծնեալն Քրիստոս. երկու ծնունդս ունի Քրիստոս. Հայր ետ զՄիածինն իւր. աստուածապէս ծնունդն Որդոյ. ոչ յետոյ եղեալ Որդի. անհաս է ծնունդն Քրիստոսի. անժամանակ ծնունդ. Հայր և Որդի մի էութիւն է. որ ետես զՈրդի՝ ետես զՀայր. ամենայն ինչ նովաւ եղև. Որդի էակից է Հօր:

ԺԲ գլուխ. Կոչումն ընծայութեան, ասացեալ յայն որ մարմնացաւն և մարդացաւն. անհա կոյս յղացի և ծնցի. մոլորութիւնք հերետիկոսաց. վկայութիւնք ի սուրբ Գրոց. ընդէ՞ր ասեն էջ Որդին. թշուառութիւն բնութեանս. փրկութիւն հեթանոսաց. վասն գալստեան Տեառն. ոչ իգուր մարմնացաւ. չիր անհնարին ինչ Աստուծոյ. բանք կարկիչք հրէից. կշտամբութիւն հրէից:

ԺԳ գլուխ. Կոչումն ընծայութեան ի խաչեալն և ի թաղեալն և յարուցեալն. փրկեաց Քրիստոս զամենայն երկիր. Պիղատոս և աւազակն. պարծանք սրբոյ Խաչին. կամաւ եկն ի Խաչ. անհատ խոնարհութիւն Քրիստոսի. կեանքն կախեալ ի փայտէ. արիւն և ջուր ել ի կողէն. ցուրտ և ջերմ հաւատքն. Յիսուս ետ զանձն իւր ի վերա մեր. թաղեցաւ ի նոր գերեզմանի. ճշմարտութիւն տնօրէնութեանցն:

ԺԴ գլուխ. Կոչումն ընծայութեան յայն որ յարեաւն ի մեռելոց յերիր աւուր. որ ել յերկինս և նստաւ ընդ աջմէ Հօր. վկայութիւնք վասն յարութեան. ճշմարտութիւն յարութեանն. նորոգութիւն մարդոյն. հաստատութիւն յարութեանն. առ հրեայսն վասն յարութեան. իջումն Քրիստոսի ի դժոխս. վկայութիւնք համարձմանն. ընդ աջմէ Հօր նստելոյն. վասն աստուածութեան Հոգւոյն սրբոյ. անօրէն հերետիկոսացն. գետ կոչի շնորհ Հոգւոյն. վասն զանազան շնորհաց Հոգւոյն. վասն զանազանութեան Հոգւոյն. չար ոգին և բարի հոգին. վարդապետութիւն Հոգւոյն. հոգի Տեառն ելից զտիեզերս:

ԺԵ գլուխ. Կոչումն ընծայութեան վասն Հոգւոյն սրբոյ մնացորդք. բազմանուն է Հոգին սուրբ. Հոգին սուրբ եկն ի կոյսն սուրբ. իջումն Հոգւոյն աղաւնակերպ. խոստացաւ Յիսուս զՀոգին սուրբ. բաշխումն հրեղէն լեզուաց. շնորհք Հոգւոյն յառաքեալսն. Ստեփանոս լի Հոգւով սրբով. Պօղոս անօթն ընտիր. չթլփատել զքրիստոնեայս. հաւատալ ի Հոգին սուրբ. ջերմ հաւատով մկրտիլ:

ԺԶ գլուխ. Կոչումն ընծայութեան վասն միոյ կաթուղիկէ եկեղեցւոյ և վասն մարմնոյ յարութեանն և վասն կենացն յաւիտեանից. հաստատութիւն յարութեան. յարութեան մերոյ հաստատութիւն. առ աստո՛ղն չիք յարութիւն. զանազականութիւն զգեղումք. վասն կաթուղիկէ եկեղեցւոյ. ոչ ասի եկեղեցի միայն. շնորհք սուրբ եկեղեցւոյ. բերկրութիւն ի սուրբ հաւատսն. լցա՛ւ երկիր սուրբ ցնծութեամբ (էջ 7—374):

Սույն հրատարակության 377—384 էջերում կա «Ճանգ համառօտ գլխաւոր բանից սրբոյ մատենից», ինչ որ բաղվածաբար մեջ բերվեց այստեղ:

Այնուհետև, «ի վերջ գրքիս այսորիկ», տպագրվել է նաև Ի դարու մատենագիր, Արշարունյաց Գրիգոր եպիսկոպոսի «Լուսաւոր և արդիւնաւոր բանիւք» գրած «զգիրքն լուծման ընթերցուածոցն Կիւրղի Երուսաղէմացւոյ գերաճանչ և սրբազան հայրապետի վասն բառասնորդաց պասնոց» հոգեշահ մեկնությունը, որը գրավում է նոր էջակալությամբ 1—190 էջերը: «Ընթերցուածոց» մեկնությունը սկսվում է «մեծի պասնոյ երկու շաբաթի առաջն ընթերցուածոց» և ավարտվում է «Խորհուրդ վեցերորդ Ուրբաթուն և տեսութիւն նորին» մեկնությամբ: Նշվում է, որ «այս ընթերցուածս լի է յուսով աստեղաց, որ ցուցանէ զհանգամանս երկրին պարգևաց որ է երկնից արքայութիւն» (էջ 191—196):

Ս. Կյուրեղ հայրապետի օրով, 351 թվականին, Երուսաղեմում տեղի է ունեցել Քրիստոսի Խաչի երևումը երկնքի վրա: Այս առթիվ սուրբ հայրապետը այդ աստվածական և սքանչելի երևումը Խաչին, հաղորդել է սրտի խորունկ գոհունակությամբ և երկյուղած բարեպաշտությամբ Մեծն Կոստանդինանոս կայսրի որդի և հաջորդ Կոստանդ կայսրին, իր պատմական թղթով. «Թուղթ Կիւրղի եպիսկոպոսի Երուսաղէմայ առ Կոստանդեայ թագաւորն վասն երևելոյ սուրբ Խաչին յերկնից»:

Ս. Կյուրեղ հայրապետի մատենագրա-

կան վաստակի մեջ կարևորությամբ նշվում է նրա այս «Թուղթ»-ը: Կյուրեղ հայրապետի սույն **Թուղթը** նույնպես տեղ է գրավել «Կոչումն ընծայութեան» գրքի առաջին հրատարակության մեջ (էջ 197—201):

Մեր եկեղեցում ամեն տարի Հինանց հինգերորդ կիրակին, Երևման սուրբ խաչի տոնին[37], Կյուրեղ Երուսաղեմացու սույն Թուղթը կարդացվում է եկեղեցում[38]: Սույն Թղթի գրաբար թարգմանությունը կատարվել է Ե դարում, իսկ աշխարհաբար թարգմանությունը կատարել է Երուսաղեմի հայոց ս. Հակոբյանց Մայր տաճարի լուսարարապետ տ. Մեսրոպ եպս. Նշանյանը:

Սույն Թղթում Կյուրեղ հայրապետը նախ նշում է, որ ս. Խաչի հրաշալի երևումը կատարվել է «ամենաբարեպաշտ թագաւոր» Կոստանդ կայսրի օրով Երուսաղեմում, Հոգեգալստյան տոնի օրերին, առավոտյան ժամը 9-ին, երբ «ամենալաղթ Խաչն լուսոյ կազմեցեալ յերկնից գեր ի վերոյ սրբոյն Գողգոթայի մինչև ի սուրբ լեառն Ձիթենեաց զորացեալ երևէր. ո՛չ միում կամ երկուց գոլով միայն երևելի, այլ ամենայնի բազմութեան քաղաքիս յայտնապէս ցուցեալ... ոչ վաղվաղակի զիմն առ աչօք տեսիլ հայեցեալ, այլ բազումս ժամս ի վեր քան զերկիր ակներև նշմարեցեալ, և իբրև բոցաճաճանչիւ ի փայլմամբք արեգակնայիցն յաղթէր ճառագայթից»:

Այս հրաշալի երևույթի առաջ Երուսաղեմի բնակչությունը «աստուածատեսութեան երկիւղիւ և ուրախութեամբ ըմբռնեալք, մանկանց միանգամայն և ծերոց, արանց և կանանց, և ամենայնի չափու հասակի բնակաց և օտարաց, քրիստոնէից ասեմ և որք յայլուստ ուստէք եկողաց ազանց, միահամուռ իբրև ի միոջէ բերանոյ զՅիսուս Քրիստոս մեր և զՄիածին Որդին Աստուծոյ զսխրագործն օրհնէին և գովաբանէին»:

Գրքի 202—204 էջերում ցանկն է «լուծմանց հրաքանչիւր ընթերցուածոց քառասնորդուց պահոցն»:

Այնուհետև «Ցիշատակարան տպողի», (էջ 205—206), ուր նշվում է. «արժանացաք շնորհիւն Աստուծոյ տեսանել զկատարումն տպեցման, որ եղև ի յամի տեառն 1728, և ի հայոց թվականիս 1177, յամսեանն մայիսի 19»: Գրքի տպագրությունը սկսվել է 1727-ին, «ի հայրապետութեան սրբոյն Էջմիածնի լուսանկար և բարձրագահ Աթոռոյն զեյթունցի տեառն Կարապետ սրբազան կաթուղիկոսի Ամենայն Հայոց, ի պատրիարգութեան սրբոյն Երուսաղէմի աստուածակոխ քաղաքին և սրբոյն Յակոբայ գերահռչակ Աթոռոյն, տեսուչն Գրիգորի արքեպիսկոպոսի և աստուածաբան վարդապետի, և ի պատրիարգութեան Կոստանդնուպոլսի մեծի մայրաքաղաքիս, տեառն Յոհաննու արքեպիսկոպոսի և աստուածաբան վարդապետի, ի տպարանի հանգուցեալ մահտեսի Սարգսի որդի տիրացու Մարտիրոսի ի Կոստանդնուպոլիս քաղաքի»[39]:

«Կոչումն ընծայութեան» գիրքը տպվել է «արդեամբ և ծախիւք աղվերդցի յերկրին Սիւնեաց հանգուցեալ պարոն Շահնազարի որդի տիրացու պարոն Շահնազարի և միւս ընկերակցի նորին դասակցի որ է Գողթնեաց երկիրն, պարոն Ֆռանկուլի, որդի տիրացու պարոն Մուրատին»: Գիրքը տպագրվել է «ո՛չ վասն շահի և օգտի մարմնական վայելչութեանց իւրեանց, այլ լինիլ բարի յիշատակ հոգւոց իւրեանց և ծնողացն» (էջ 206):

Այնուհետև խնդրվում է «միով հայր մերիւ» հիշել բայ,երարների ծնողներին և ընտանեկան այլ պարագաներին (206), ապա «զաշխատաւոր ծառայքս տպագրատանս, զմեղաւոր մահտեսի Մարտիրոսս հանդերձ որդեկաւս իմով... և ծնօղս իմ և համայն ննջեցելովքն... և զաշխատաւոր տպազարկ գրքիս զտիրացու Տէվլէթն... և զփոքրիկ աշակերտ տպագրաւոանիս զՍտեփանն, որ բազում աշխատանս ունի ընդ իս ի շարել և ի ցրուել զկապարեայսն, և միւս աշակերտ նորա և զԱնտոնն»:

«Կոչումն ընծայութեան» գիրքը տպագրության է պատրաստել Հովհաննես Կոլոտ մեծիմաստ վարդապետի տաղանդաւոր աշակերտ և հաջորդ գիտնական «նոր ընծայ, զբանասէր Յակոբ վարդապետն»՝ Նալյան, որը միաժամանակ «ըստ գրասէր բարուց իւրոց՝ շնորհեաց զլուծմանց սորին զօրինակն: Նաև զմահտեսի տէր Մովսէս իմաստուն քահանայն, զի և նա ետ օրինակ մի բնաբանիս, զոր իւր ձեռամբն էր գրեալ»:

Գրքի սրբագրությունը խղճմտությամբ կատարել է «զտիրացու Պաղտասարն զվարժիչն իմ և ծնօղսն նորին, և զորդեակն իւր զտիրացու Արսէնն, որ բազում աշխատանս կրեաց ի վեր ուղղումն սխալանաց սորին»:

Գրքի սկզբում կա ձեռագիր հետևյալ վկայությունը. «Ես վերին Գետցի Վանի որդի մահտեսի Աւագս, որ զայս գիրքս ստացայ հալալ ընչից իմոց, և ետու մեր

[37] Օրացույց, Մայր Աթոռ ս. Էջմիածին, 1978, էջ 61:

[38] Ճաշոց գիրք, Հայց. եկեղեցւոյ, երկրորդ տպագրություն, ի Վաղարշապատ, 1872, էջ 368:

[39] Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ, նույնը, էջ 92:

վանից միաբան Թովմայ վարդապետին, յիշիտակ ինձ և իմ ծնողացն»:

Կյուրեղ Երուսաղեմացու **Կոչումն ընծայութեան** գրքի **երկրորդ հրատարակությունը** կատարվել է Վիեննայում, 1832 թվականին[40]:

Սույն հրատարակությունը բացվում է «Առ ընթերցողս» ուղղված համառոտ մի ներածականով, ուր նշվում են գրքի հրատարակության կարևորության երեք արժանիքները, որ է՝ «ի վեմական հանճար իմաստից, ի գերապանծ ոճ հայկազն թարգմանչին, և ի համբաւն Մատենագրին»:

«Կոչումն ընծայութեան» գիրքը բնութագրվում է որպես «ճշգրիտ երևեցուցիչ իբրև ընդ հայելի՝ պատկերի Հոգւոյն մեծանձնութեան և եռանդուն սրտին, զոր անկեղծ կենդանագրեաց ի նոսա երանելին: Յորս ո՛չ զայլ ինչ է տեսանել, բայց զմարգարտայեղ շարս մասանց հաւատոյ միայն խառնն ընդ չքնաղ գանձուց աստուածային տառիցն մթերելոց ի թանգարանիս...: Զոյգ և հաւասար իմաստիցն պերճանայ ահա և գրիչ թարգմանչիս»:

«Կոչումն ընծայութեան» գրքի հայերեն թարգմանությունը վերագրվում է Ե դարի մեր «բազմերախտ» թարգմանիչ վարդապետների խմբին, «որք առաքեցան ի Միջագետս և ի Հելլեն, յեղուլ զսուրբ հարս յունաց ի հայ: Քանզի հարազատութիւն թարգմանութեան՝ զոյգ ընդ գեղեցիկ հայկաբանութեան ակնյանդիման **ոսկի դարուն** արժանավայել զինքն ընծայեցուցանէ»:

Իսկ թե «ո՛վ որ ի սոյն թարգմանութիւն պարապեցաւ, չունիմք ասել հաւաստի»:

«Կոչումն ընծայութեան» գրքի սույն հայերեն հրատարակությունը «ճշտիւ համեմատուել» է «ընդ յունին ևս»:

Գիրքը բացվում է սուրբ Կյուրեղ հայրապետի նկարով, որպես եպիսկոպոս Երուսաղեմի Աթոռի, Ավետարան ի ձեռին:

Այնուհետև, հաջորդ 1—428 էջերում հրատարակվել է «երանելոյն Կիւրղի Երուսաղէմայ հայրապետի Կոչումն ընծայութեան» 18 ճառերի ժողովածուն: Յուրաքանչյուր ճառից հետո կա «Մանրութիւնք», մեկ էջանոց, ուր նշվել են ձեռագիր այլ օրինակների և «Կոչումն ընծայութեան» գրքի առաջին հրատարակության մեջ եղած փոքր տարբերությունները[41]:

Վերջում կա «Ցուցակ ընծայութեանց» և «Վրիպակք տպագրին»:

Ս. Կյուրեղ Երուսաղեմացու մեզ հասած ճառերի հայերեն «թարգմանության մեջ կպակասին հինգ ճառք, զոր ունի հունն»[42]:

Երուսաղեմացու «Բավականաչափ ուրիշ ճառեր կան մեր ձեռագրերում նորա անվամբ, մի բանիսը շատ են կրկնված, մեծ մասն անհարազատ, կան նաև այնպիսիները, որ (Հ. Գ.) Զարպհանելյան չի հիշեր»[43]: Դրանցից են «Պարծանք սրբութեան կաթուղիկէ եկեղեցւոյ», կամ «Ի բանէն Պարծանք սրբութեան»[44], «Ի մեկնութենէ ընթերցուածոցն, Տէ՛ր, ո հաւատաց»[45]:

Ըստ մեր Ճառընտիրների, ս. Կյուրեղ Երուսաղեմացուն է վերագրվում նաև «Ճառք և հատուածք», որոնցից են՝ «Ի Տեառն ընդ առաջն», «Ի համբարձումն Տեառն», «Ի Հոգին սուրբ», «Ի նաւակատիս եկեղեցւոյ», «Ի Խաչն սուրբ և աստուածընկալ», նաև «Հատուած մը ի մեկնութենէն Եսայեայ և աղօթք՝ յաղագս զղջման և ապաշխարութեան»[46]:

Երուսաղեմացու մատենագրական վաստակի մեջ հիշատակվում է նաև կարևոր մի գրվածք, ըստ ոմանց անհարազատ, որ է՝ «Հարցմունք վայելուչք և պիտանիք Կիւրղի Երուսաղէմայ հայրապետի, յաղագս մակացութեան և հանճարոյ»[47]:

Սույն գրվածքը մեր ձեռագրում ունի նաև այս վերնագիրը՝ «Երանելոյն Աթանասի եպիսկոպոսին՝ յաղագս Աստուծոյ հարցմունք վայելուչք և պատասխանիք Կիւրղի հայրապետին Երուսաղէմայ յաղագս հանճարոյ»[47]:

Ս. Կյուրեղ հայրապետը արդարև իր մատենագրական արժեքավոր վաստակով, եկեղեցական «առաքելաջան» գործունեությամբ, առաքինազարդ վարքով դասվում է արժանավորապես Ընդհանրական Եկեղեցու «երկոտասան վարդապետաց» շարքում:

---

[40] Հայ գիրքը 1801—1850 թվականներին, Երևան, 1967, էջ 187:

[41] Հայ հնատիպ գրքի մատենագիտական ցուցակ, նույնը, 1727, 592 էջ:

[42] Մատենադարան, նույնը, էջ 524—529:

[43] Կնիք հաւատոյ, էջ XLIV:

[44] Նույնը, էջ 264:

[45] Նույնը, էջ 306:

[46] Մատենադարան, նույնը, էջ 528—529:

[47] Նույնը, էջ 283—284:

[48] Ցուցակ ձեռագրաց, Ա հատոր, Երևան, 1965, էջ 1515:



ԱԳԱԹԱՆԳԵՂՈՍԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ ՀԱՅՈՑ*

ՎԱՐԴԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ՍՈՒՐԲ ԳՐԻԳՈՐԻ

[Մարգարեների գուշակությունները Քրիստոսի աշխարհ գալստյան մասին, նրանց հալածանքը և կոտորումը]

343. Քանզի «բազում եղանակներով և բազում օրինակներով Աստված կանխավ խոսել է մեր հայրերի հետ մարգարեների միջոցով, իսկ այս օրերի վախճանին մեզ հետ խոսել է իր Որդու միջոցով, որին ամենայնի ժառանգ կարգեց, որի միջոցով հավիտենականությունն ստեղծեց, և որը նրա փառքի լույսն է, էության պատկերը և ամեն ինչ կրում է իր զորության խոսքով»[74]:

344. Տեսնո՞ւմ ես, որ եղանակները, օրինակները և մարգարեները բազմաթիվ են, իսկ Աստված մի է, որը խոսեց իր Միածին որդու մասին: Ասաց մարգարեն Տիրոջ փոխարեն, թե «Ես եմ Աստվածը և չկա այլ ոք բացի ինձանից, որ կարողանար առաջվանից պատմել վերջին դեպքերի մասին, նախքան դրանց լինելը և բոլորը միանգամայն կկատարվեն»[75], քանզի նա գիտեր խորհուրդը միակ իմաստուն Աստուծո, որը թաքնվել էր ժամանակներից և հայտնվեց մարգարեական գրքերի միջոցով:

345. Իսկ երբ եկավ ինքը՝ փրկիչը, Աստուծու Որդին, հայտնեց աշակերտներին, թե «Երանի, ասում է, ձեր աչքերին՝ տեսածների և ձեր ականջներին՝ լսածների համար, քանզի բազում մարգարեներ, արդարներ և թագավորներ ցանկացան տեսնել ձեր տեսածները ու չտեսան և լսել ձեր լսածները ու չլսեցին»[76]:

346. Տեսնո՞ւմ ես, թե [մարգարեների] ազդարարությունները նմանություններ էին Քրիստոսի ճշմարիտ կերպարանքի և ժամանակավոր նմանություններով ջանում էին հասնել մշտնջենավոր կերպարանքին: Այսպես էլ Մովսեսի գրած օրենքները մատնանշում ու փայլեցնում էին հանդերձյալը ամենայն մանրամասնությամբ:

347. Քանզի երբ Աստված տեսավ, որ մեղքը աշխարհում համատարած դարձավ ու նրանով մահը սկսեց թագավորել, մոռացության տալով սկզբում գրված կենսաբեր ավետիսը, և կլանել էր առհասարակ ամեն ինչ Ադամից մինչև Մովսես, որպես մոլեկան հրդեհի կրակ, որն ապականելու էր լեռներն ու դաշտերը, ապա այնուհետև ներքև արձակեց օրենքը սաստիկ հեղեղատի նման հանգցնելու համատարած [կրակը]: Սրա համար նա ասում է, թե «ամեն ոք, որ այս բանը կատարի, նրանով կապրի»[77], քանզի ինչպես ծառից ճաշակելու համար Ադամին մահվամբ սպառնաց, ուստի և մահն էլ թագավորեց: Այսպես ասաց նաև օրենքների մասին, թե «Ով որ այս

* Շարունակված «Էջմիածին» ամսագրի 1978 թվականի № Դ-ից:

[74] Երր. Ա, 1—3:

[75] Ես. ԽԶ, 10:

[76] Ղուկ. Ժ, 23—24:

[77] Գաղատ. Գ, 12:

բանը կատարի, նրանով կապրի»[78], որով և հանգավ մահը:

348. Բանգի հենց օրենքը, որը Քրիստոսի ստվերագիրն է ու օրինակատարը՝ ոչընչացրեց մահը, նրանով հայտնի դարձավ մեղքերի ծովացյալ լինելը և հաշիվ կատարելով մահ սպառնաց ըստ յուրաքանչյուրի մեղքերի: Նա ամենքին տկարացրեց, որեց ասենքի ու դատապարտության տակ, որպեսզի երբ գա ամենափրկիչ Քրիստոսը և վերացնի անիծաբեր և մահածին մեղքերը, ազատվածներն ասեն՝ «Շնորհակալություն նրան, որ այդպիսի մահվանից փրկեց մեզ»[79]:

349. Վերջինս հայտնի է դարձնում, որ օրենքը մնաց մինչև Քրիստոս, ասելով, թե «օրենքը ավելացավ օրինազանցության պատճառով, մինչև գա այն սերունդը, որին խոստացված էր, հրեշտակներով հաստատված և միջնորդի ձեռքով»[80], բանգի «օրենքի տակ, ասում է, փակված մնացինք նայելով հանդերձյալին»[81], որին ոչ միայն երկրածին ազգերը, այլև հրեշտակների աներևույթ զորքերը ամենայն անզգա արարածներով հանդերձ սպասավորելու մնացին: Ըստ այնմ, թե «արարածների ակրնկալությունը սպասում է Աստուծո Որդու հայտնությունը, բանգի արարածները ունայնության հնազանդվեցին, ոչ իրենց կամքով, այլ նրա համար, որը նրանց հնազանդեցրել էր այն հույսով, որ արարածները իրենք ևս ազատվելով ապականության ծառայությունից, Աստուծո Որդու փառքի ազատությանը հասնեն»[82]:

350. Բանգի երբ Ադամը, որն ըստ Աստուծո պատկերի ստեղծվեց, ինչպես նաև նրա բոլոր զավակները, որոնք աստվածորդիներ կոչվեցին, իրենց կամքով ապականությունը ժառանգեցին, նրանց հետ նաև բոլոր արարածները հնազանդվեցին ու ապականվեցին, ոչ իրենց կամքով, այլ Աստուծո առաջագույն սահմանյալ կամքի համաձայն նրանց ի Քրիստոս ազատ թողնելու համար: Բանգի նրանք, որ մի անգամ մարդու վայելքի ու փառքի համար ստեղծվեցին, ապականյալներ և անարգյալներ դարձան նրա բարկության պատճառով: Երկիրն անիծյալ և փշաբեր դարձավ, հեղեղատյալ և հրով այրված, հիմքից խախուտ, անհաստատ դարձավ, բամիները ապականված էին ըստ տարբեր եղանակների, լուսավորները խավարամած և արյունանշան, երկինքը տժգույն, ճիշտ այնպես, ինչպես նշված է գալիք դեպքերի մասին մարգարեական գրքերում: Նույնը մարգարեները իրենց ազգակիցներից կրեցին: Բանգի թեպետ պատվավորները Աստուծուց էին առաքվել, սակայն նրանց չընդունողները թշնամանեցին ու բարկոծեցին, ինչպես ասում է ամենատերը, թե «Ձեզ համար ես կոտորեցի մարգարեներին իմ բերանի խոսքով»[83]:

351. Նույնպես և հրեշտակները, որոնք պատգամավորներ էին, մարդկային ազգին [ուղարկված] իրենց չընդունողներից անարգված ու նեղված վերադարձան այնպես, ինչպես կարելի է հասկանալ, Դավթի մոտ եկած հրեշտակներին, բանգի եթե մեկ մեղավորի դարձը բոլոր հրեշտակներին ուրախություն է բերում, ապա որչափ նրանց ըմբոստությունը ամենքին տրտմություն կպատճառի, բանի որ Աստուծո անունը հայհոյված կլինի և սուրբ Հոգին տրտմեցրած: Այդ թեպետ այսպիսով բոլոր արարածները նեղություն էին կրում և ունայնության ծառայում, սակայն ամենքը՝ հրեշտակները, մարգարեները և բոլոր արարածները սպասում էին առաջադրված ազատարար հույսին, բանգի մեկն ասել է՝ «իմ պահպանության տեղը պիտի կանգնեմ, վեմի վրա պիտի բարձրանամ և պիտի հուսամ»[84], իսկ մյուսը, թե «ես Տիրոջը պիտի հուսամ և պիտի սպասավորեմ իմ փրկիչ Աստուծուն»[85]: Մեկն էլ, թե «Բացի Սիոնից Իսրայելին ո՞վ փրկություն կտա»[86]:

[Քրիստոսի աշխարհ գալուստը ուշանալու պատճառը: Աստուծո բնության անտեսանելիությունը և տարբեր կերպարանքներով նրա երևումը արդարներին ու մարգարեներին մարդկային տկարության պատճառով]:

352. Իսկ ինչո՞ւ արդյոք Միածինը երկարաձգում էր արարածներին նեղություններ հասցնելը, եթե ոչ այն բանի համար, որ նախապես զգուշացնի և իրեն ընտելացնի, որպեսզի երբ հանկարծակի երևա, անծանոթ, անընդունելի չլինի, այլ իբրև նրան տեսածներ ու սպասավորներ որպես ծանոթ ընդունեն: Բանգի արդեն այդքան ժամանակ է, որ իր արարածներին գալով [երևաց] ու անընդունելի եղավ, ապա որչափ ևս անընդունելի պիտի լիներ, եթե հայտնվեր այնպիսիների, որոնք չէին ազդարարված և տեղեկացված: Այլ կանխավ

[78] Գաղատ. Գ, 12:
[79] Հմմտ. Բ. Կորնթ. Ա, 10:
[80] Գաղատ. Գ, 19:
[81] Գաղատ. Գ, 23:
[82] Հռոմ. Ը, 19—21:
[83] Ովս. Զ. 5:
[84] Ամբակ. Բ, 1:
[85] Միք. Է, 7:
[86] Սաղմ. ԺԳ, 7:

հայտնեց խորհուրդը ամեն ազգերին և հավիտյան եկողներին:

353. Ինչպես Աստուծո պատգամավորներից մեկը ասում է, թե «ինձ տրվեց այս շնորհքը՝ ավետարանելու հեթանոսներին Քրիստոսի անքննելի մեծությունը և ամենքին լուսավորել, թե ի՞նչ է այն խորհրդի տնօրինությունը, որը բոլորից հավիտյան ծածկված էր Աստուծո մոտ, որն ամեն ինչ ստեղծել է: Որպեսզի նա հիմա երկնքի[87] վրա գտնվող իշխանություններին և պետություններին եկեղեցու միջոցով հայտնի Աստուծո բազմապատիկ իմաստությունը, ըստ իր հավիտենական ծրագրի, որը նա իրագործեց մեր Տեր Հիսուս Քրիստոսի միջոցով»[88]: Նույնի մասին խոսելիս նա հայտնում է, թե «երբ ժամանակը լրացավ»[89]:

354. Բայց ո՞վ մարդկանցից կարող էր աստվածության մասին այսպիսի վարդապետություն ճանաչել և խոսել: Բայց նա ինքը այսպես կամեցավ, որպեսզի իր անձը ծանոթ դարձնի և ճանաչեն նրան ու ապրեն: Սակայն մենք արարածներս չենք կարող պատմել Արարչի մասին, մենք, որ բևեռված ենք այս պատկերի տիպին, ըստ ստեղծողի ստեղծածին: Բայց ինչքան որ մեր տկարությունը կարող էր ժուժկալել, ինքը կամեցավ մեզ պատմել, քանզի ոչ ոք չգիտի Աստծուն բացի Աստուծո Հոգուց և Որդուց, որը եկավ ու պատմեց, հայտնեց ու ցույց տվեց, թե «ով որ ինձ է տեսել, իմ Հորն է տեսել»[90]:

355. Բայց Աստված կենդանի հոգի է, կիզող հուր, անչափելի և անփոփոխ, անպատում փառք, անբավ զորություն, անքննելի, զարմանալի գեղեցկություն, անհասանելի մտքերի ու խոհերի համար, լեզվով անբացատրելի, մտքում չամփոփվող, դուրս է ամեն տեսակ խոսքերից, ոչ աչքով է տեսանելի, ոչ ականջով լսելի, ոչ էլ սրտի հույսը կարող է նրան հասնել: Երկինքն ամբողջովին, աշխարհն ամենայն և տիեզերքը ամբողջովին բավական չեն ընդգրկելու նրան: Նրա խոսքը վերև բարձրանալով կրում է ամեն ինչ: Նրա հրամանի զորությամբ [տիեզերքը] կախված է մնում առանց օդի վրա թռչող թևերի և կարծես թռչում է: Ինքն ամեն ինչ պարփակում է, ամեն ինչի մեջ է, ամեն ինչի վրա է, ամեն ինչից դուրս է, ամեն ինչ նրանով է, ամեն ինչ նրանում է և ամեն ինչ նրա փառքի համար է:

356. Նա բազում նշաններով ու հրաշքներով տարբեր ժամանակներում խոսեց մեր հայրերի հետ մարգարեների միջոցով անպատում տեսիլքներով, աննման կերպարանափոխումներով, զարմանալի ձայնով, գովելի գեղեցկությամբ, աստվածային կերպարանքներով, երբեմն լուսեղեն նմանությամբ, մարդկային կերպարանքով, երբեմն որպես բորբոքված հուր, մարդու կերպարանքով: Բազում արդարների երևաց ըստ նրանց տեսնելու կարողության և ըստ նրանց լսելու համբերության խոսեց նրանց հետ: Քանզի մարդն անկարող է տեսնել Աստծուն իր էության մեջ, ինչպես մոմը չի դիմանա կրակին և լեռները չեն կարող տեսնել նրան, քանզի եթե նայեն նրան, կհալվեն:

357. Բայց երբ իր ինքնակամ ցանկությամբ և բարերարությամբ ինքնիրեն ցույց տվեց, երևաց մարդու կերպարանքով, երբեմն որպես լույս, երբեմն հուր և երբեմն հողմ, ինչպես և ամպի, մեգի ու մրրկի մեջ:

358. Իսկ եթե ասենք, թե նա հուր է, ապա ասում ենք այն, ինչ տեսնում ենք. եթե ասում ենք լույս է՝ նրա նմանության գաղափարը մեր բնությունից ենք առնում, աներևույթին ցույց ենք տալիս որպես երևացող մեր անկարողության պատճառով: Բայց նա մեր փոքրիկության համեմատ երևաց, որպեսզի նյութական արարածները չայրվեն նրա փառքի աչից: Նրա անունը ոչ ոք գիտի, քանզի դեռ ոչ ոք չկար այնտեղ, բացի նրանից, որ նրան այնտեղ և այստեղ անուն տար:

359. Եվ իր երևալովը արդարներին՝ իր անավորությունը իրեն էր քաշել և երևացել էր մարդատեսիլ, հրեշտականման և հասկանալի ըստ աչքերի կարողության: Ոչ արարածները կարող են քննել Արարչին և ոչ էլ խմորը գիտի իրեն պատրաստողին:

360. Բայց Արարիչը գթում է իր արարածներին, քանզի Աստված ամենայն արարածներին ստեղծեց և զարդարեց գովելի գեղեցկությամբ և վայելուչ փառքով: Հողից ստեղծեց հողեղեն մարմինները և լույսից՝ հրեշտակներին, վայելուչ լույսով ծածկեց ու զարդարեց փառքի աթոռը, ուր բարձրանում են հրեշտակների օրհնությունները, սերովբեների ձայները, զվարթունների փառավորությունները, բանակների բազմությունը, սրբերի գնդերը, գովերգողների դասերը, երկնավորների օրհնությունները, արդարների աղոթքները, սրբերի պաշտամունքը, սերովբեներն ու քերովբեները և միաբանական լույսի զորքերը:

---

[87] Ռ. Թոմսոնը թարգմանել է «երկրի վրա» (էջ 70), սակայն Աստվածաշնչում ևս կա «յերկինս»:

[88] Եփես. Գ, 8—12:

[89] Գաղատ. Դ, 4:

[90] Յովհ. ԺԴ, 9:

[Ուղղափառ հավատի դավանությունը ամենասուրբ Երրորդության և մեկ աստվածության մասին]

361. Հիշելով այս վկայությունը ձեր լսելիքներին կարգով մատուցեցինք ճշմարիտ սուրբ հավատը, որը հայտ հանդիման մեզ ուսուցանել են սուրբ Գրքերը, սուրբ Հոգու միջոցով: Աստվածության մշտնջենավոր արքայության մասին, որը խորհրդով հայտնվեց մեր արդար հայրերին, հաղորդվեց մեզ Որդու և սուրբ Հոգու միջոցով, ավետվեց սուրբ մարգարեների և առաքյալների կողմից ու տրվեց մեզ հավատի հաստատությունը:

362. Քանզի հավատով մենք հաստատ ճանաչեցինք մեկ Աստված Հայրը, ամենայնի տերն ու արարիչը, միածին Որդին, որը Հորից է, Հոր կողքին, Հոր հետ և սուրբ Հոգին, որը նույն էությունից է և նրանով է ստեղծել ամենայն արարածներին, որը մեկ տերություն է, մեկ զորություն, մեկ իշխանություն, մեկ մեծություն, մեկ գիտություն, մեկ խորհուրդ, մեկ պետություն, մեկ անսկիզբ զորություն, երեք կատարյալ անձինք, բայց մեկ կատարյալ կամք, Երրորդության անպատում անքննելի միությունը: Մի իսկություն, մի էություն և մի աստվածություն, Հայր և Որդի և սուրբ Հոգի, երեք անձինք, բայց մի Աստվածային զորություն՝ Հայրն ինքնիրենից, Որդին Հորից, Հոգին նրանցից ու նրանց մեջ: Իսկությամբ, էությամբ, Աստվածությամբ նրանք առհասարակ հարթ հավասար են խորությամբ, բարձրությամբ, լայնությամբ, երկայնությամբ, բնությամբ մեկ միություն են, Երրորդության մեկ պսակ և երկինքն ու երկիրը լի են նրա փառքով:

363. Ինչպես մարգարեի որդի Սողոմոն արքան ասում է իր հոգեկիր աղոթքների մեջ, թե «երկինքն ու երկիրը քեզ բավական չեն»[91], իսկ մարգարեն ասում է Տիրոջ կողմից, թե «երկինքն իմ աթոռն է և երկիրը իմ ոտքերի պատվանդանը, ինչպիսի՞ տուն եք շինելու ինձ համար կամ ի՞նչ բնակության տեղ եք պատրաստելու ինձ, չէ՞ որ իմ ձեռքն է այս ամենը ստեղծել. ես ո՞ւմ հանգիստ ու դադար տամ, եթե ոչ հեզերին, խոնարհներին և այնպիսիներին, որոնք դողում են իմ խոսքերից»[92] և «կլինեմ նրանց Աստվածը ու նրանք իմ ժողովուրդը կլինեն»[93]: Իսկ նա, որին երկինքն ու երկիրը բավական չեն [պարփակելու], ինչպե՞ս մարդու սիրտը պիտի նրան ընդգրկի, միթե մարդն առավել մեծ է, քան երկինքն ու երկիրը: Սակայն Աստվածությունը ինչ կամենում է, լինում է, ինչ կամեցավ՝ ստեղծեց, ինչ կամեցավ՝ եղավ, ինչ կամենում է՝ զանց չի առնում, այսուհանդերձ [մարդանալով] նա ամփոփվեց, փոքրացավ և եղավ, ինչ որ կամեցավ:

[Միածնի աշխարհ գալուստը և նրա մարդեղությունը սուրբ կույս Մարիամից]

364. Արդ, Աստված իր Որդուն առաքեց աշխարհ, որը եկավ ու ծնվեց կնոջից և մարդկային մարմնով ամփոփվեց, իր մարմնով բոլոր մարմինները կենդանացրեց: Նրանով աշխարհի Արարիչը կարողացավ նորոգել արդարներին, փրկել նրանց մեղացածին ծնունդներից, հրեշտակակերպ դարձրեց ու աստվածորդիներ կոչեց, մահկանացուներին անմահացնելով անմահ հոգիով ու պատվելով աստվածային փառքով: Նրանք վայելուչ լույսով զարդարված են և կանցնեն երկրավորությունից երկնավորության, մահկանացուից՝ անմահ կյանքի, անանցանելի լույսով ու կերպարանքի անապական գեղեցկությամբ կպարուրվեն:

365. Որչափ անպատում է Աստվածությունը, որի կամքը ամենայն բարիքների աղբյուր է և տերն է ամեն գործերի: Նրա բերանի խոսքով հաստատվեցին բոլոր արարածները. նրանից լույս առան բոլոր լուսավորները և նրա զորության մեջ հաստատված են բոլոր արարածները, երկնքի վերնահարկերը և ամբողջ աշխարհը իր մեջ եղածներով: «Նրա բերանի հոգիով հաստատվեցին նրանց բոլոր զորությունները»[94]: Երկնավոր պաշտոնյաները և սրբերի լուսեղեն բանակները նրա հույսով մնում են կախված և կարոտ են նրա ողորմություններին: Նրա մի ակնարկելով բոլոր արարածների պետքերը պատրաստվում են, ամենքը նրա զորության մեջ են ապրում և «ամենքի աչքերը նրան են հույս դնում»[95]:

366. Նա է Արարիչը, ստեղծողը և ամենայնի առաջնորդը իր իսկական բնությամբ: Անքավ զորությունը, որ նրանից է տարածված, շրջապատում է ամեն ինչ: Նրանից են բխում կենարար զորությունները, որոնք բոլոր արարածներին են անցնում՝ երկնավորներին և երկրավորներին, օդի և հողմի մեջ, հրո և ջրի մեջ, լույսի ու խավարի մեջ, անդունդների և բարձունքների մեջ: Նա երևում է իր անհերևույթ զորությունների հետ իր թափանցիկ լույսով:

[91] Գ Թագ. Ը, 27:
[92] Ես. Կշ, 1—3:
[93] Զաք. Ը, 8, Երեմ., Է, 23, ԺԱ, 4, ԻԴ, 7, Լ, 22, ԼԱ, 1, ԼԲ, 38:
[94] Սաղմ. ԼԲ, 6:
[95] Սաղմ. ՃԽԴ, 15:

Նրա հոգու զորությունը անքավ է, ամեն տեղ սփռված, ամեն տեղ տարածված և ճառագայթները ելնում են զորությամբ, անընմբռնելի բնությամբ: Նա չի գնում վերին բարձունքների չափ, ոչ էլ իջնում ստորին անդունդները, չի գնում ձախ կամ աջ, ոչ դիմաց, ոչ թիկունք: Վեց զորությամբ ճառագայթներ [կան], վեց հազարամյա դարեր, իսկ յոթներորդ դարը արդարների հանգիստն է:

367. Ինչպե՞ս ենք Աստծուն մեզ նման հայտարարում, երբ մենք [կանգնված ենք] հողից շաղված հոդակապ անդամներից: Յուրաքանչյուր անդամ իր գործն է կատարում իր մեջ և ձեռնհաս չէ իր ընկերոջ գործին: Ոչ աչքը լսում է, ոչ ականջը տեսնում, ոչ լեզուն հոտոտում, ոչ ձեռքը գնում և ոչ ոտքն աղաղակում: Բերանը խորտիկների համար է, հոտոտելիքը՝ հոտերի, քիմքը՝ ճաշակելու. ամեն մեկը կապված է իր բնությանը:

368. Բայց ինքն իր կամքով իր ամենակեցույց գալուստը պատրաստեց և կատարեց Հոր կամքը: Սուրբ Որդի Աստվածը առաքվեց Աստծու կողմից, կույսից մարմին առավ [որպես] կատարյալ մարդ՝ կատարյալ Աստվածությամբ: Հայտնի դարձրեց Աստվածության զորությունը և ցույց տվեց մարմնի տկարությունը: Մարմնով ծառայակից եղավ մարդկության և մեղքերից ազատեց մարդկանց մարմինները: Նա իջավ դժոխք և այնտեղից դուրս հանեց դժոխքում արգելվածներին: Մարմնով հալածվեց, հալածեց սատանային և կապեց մեղքերը:

369. Նրանց, որոնք հավատացին մարմնին, ծանոթացրեց իր Աստվածությունը, իսկ որոնք գայթակղվեցին մարմնից, ուրացան նրա բնությունը: Քանզի նա միացել էր մարմնին բնությամբ և խառնել էր մարմինը իր Աստվածությանը: Ովքեր նրան հավատացին, վայելելու են անպատում բարիքները, իսկ ովքեր այս հավատից վրիպեցին, նրանք անկոխ և ծածուկ ճամփաներով գնացին, զարտուղի ընկան և իրենց անձերին անհուսալի ուղիներ խրամատեցին ու շատերին ճշմարիտ հավատից շեղեցին: Երբ կարծում էին, թե ինչ-որ բան գտել են, ոչինչ չգտան, ինչպես և գրված է՝ «գնացին ոչնչի ետևից ու ոչինչ չգտան»[96]: Քանզի գտնելու համար փնտրելը աշխատություն է, իսկ աշխատանքն առանց [որևէ բան] գտնելու կուապաշտության է հասցնում սուտ վարդապետությամբ»[97]:

370. Քանզի այնտեղից՝ վերևից բոլոր մարգարեների միջոցով հետո գալիքներին ապագա անցքերը ծանոթացրեց: Եվ նախորդ օրինակներով ուշ եկողներին բազում անգամ վարդապետել է մերթ սարսափելի սպառնալիքներով, հիշեցնելով նախկին վրեժխնդրությունը, որպեսզի անհավատներին զարհուրեցնի և [ճշմարիտ] ուղղության մղի, ինչպես եգիպտացիների տեսակ-տեսակ պատիժները և նրանցից դառնագույն հատուցմամբ վրեժ խնդրելը: Կամ հիշում է անապատում անհավատության մեջ ընկածներին և բոլոր նրանց, ովքեր փորձել էին Աստուծո բարկությունը:

371. Նույն ձևով Սոդոմացոց և Գոմորացոց երկիրը նա Քրիստոսի օրինակ դարձրեց, որ չլինի թե նրանցից մի քանիսի չհավատալու պատճառով նրանք ավելի դժնդակ ձևով տուժեն: Մերթ հիշեցնում է բազմապիսի սքանչելի հրաշքները և արդարների հատուցումը Աստվածային պարգևներով: Նա միաժամանակ հիշեցնում է արարածների հաստատության կարգը, բազում անգամ ասելով՝ «երկինքը բարձրացրեցի և երկիրը հաստատեցի»[98] և «Ծովը սահմաններով փակեցի»[99], որպեսզի այս ամենով նա կարողանա ուժեղացնել իր լսողների հավատը խոստացվածների հանդեպ:

[Նահապետների ու մարգարեների գուշակության կատարումը Քրիստոսի գալուստով]

372. Ապա երբ եկավ ամենքի փրկիչը, կատարեց այն, որ մի ժամանակ խոստացված էր իր մասին: Եվ վկայությամբ մենք կարող ենք ճշգրտել Որդու գալուստը Աստվածության մարմնածին ծննդյան և աստվածախառն մարմնի մասին հոգեխառն խոսքերի վերաբերյալ մարգարեների գուշակություններով, ինչպես և Աստված առաջվանից ցույց էր տվել իր Որդու գալուստը իր արժանավոր մարգարեների ձայներով:

373. Քանզի «Աստված առաքեց Իր Որդուն, որը եկավ-ծնվեց կնոջից և մտավ օրենքների տակ, որպեսզի նրանց, ովքեր օրենքների տակ են, փրկագնի, և մենք որդեգրություն ստանանք»[100]: Այս ձևով Հովհաննես կարապետը ասում է՝ «Ապաշխարեցեք, քանզի երկնքի արքայությունը մոտ է»[101]: Այս ևս հավիտենության Տերը համարում է արքայության մասին առակ ա-

[96] Սաղմ. ՀԵ, 6:
[97] Ես. ԽԴ, 24:
[98] Ես. ԽԴ, 24:
[99] Յովբ. ԼԸ, 8:
[100] Գաղատ. Դ, 4—6:
[101] Մատթ. Գ, 2:

սելով, թե՝ «Ժամանակը կատարյալ է և հասել է Աստուծո արքայությունը»[102]:

374. Արդ, եկավ Աստուծո սքանչելի խորհրդակից Որդին, որպեսզի կատարած լինի երկար դարեր առաջ նախակարգված խորհուրդը, ինչպես մարգարեն է ասում, թե՝ «Հաստատեց իր ծառաների խոսքը և արդարացրեց իր հրեշտակների խորհուրդները»[103]: Նրան ճանապարհ է պատրաստում նաև հրեշտակը, որը կույսին ողջույն է տալիս, որպեսզի կատարվի մարգարեությունը, թե՝ «կույսը հղանալու է և ծնվելու է որդի և նրա անունը լինելու է Էմմանուել»[104] և ասում է՝ «ուրախ եղիր, բերկրալի, Տերը քեզ հետ է»[105]:

375. Ապա ցույց է տալիս, թե ինչ ձևով Տերը նրա հետ է լինելու, ասում է՝ «սուրբ Հոգին գալու է քեզ վրա և Բարձրյալի զորությունը քեզ հովանի է լինելու, քանզի նա, որ ծնվելու է, սուրբ է և կոչվելու է Բարձրյալի Որդի»[106]: Ապա նայելով մարգարեություններին ասում է, թե՝ «Տեր Աստված նրան տալու է իր հոր Դավթի աթոռը և թագավորելու է Հակոբի տան վրա հավիտյան, և նրա թագավորությունը վախճան[107] չի ունենա, Նրա մասին Հակոբ հայրապետը Հոգիով լցված նույնպես ասաց, և Հուդային փառավոր ճանաչելով մարգարեության մեջ ասաց՝ «Հուդային իշխան չի պակասի և ոչ էլ պետ երանքի (մեջքի) համար, մինչև որ գա նա, որին պատկանում է թագավորությունը, քանզի նա է հեթանոսների հույսը»[108]:

376. Ահա տեսնում ենք մարգարեությունը լրիվ իրականացած, կատարված, ահա տեսնում ենք ամենայն հեթանոսներին կամա թե ակամա նրան ծառայելիս: Ասում է՝ «իր գրաստը որթատունկին է կապելու և իր իշու ձագը որթատունկի ծունկին»[109], այսինքն դա նրա խոնարհությամբ գալն է այգու մշակների մոտ, որոնք չկամեցան այգու տիրոջը: Նա չարչարվեց իր կամքով, համբերեց: Այն իր ժամանակին պիտի պատմենք. նրա ծննդյան մասին դեռ խոսքեր կան ասելու, մարգարեների զգուշացումը, առաքյալների բարոզը, վկաների վկայությունը:

[102] Մարկ. Ա, 15:
[103] Ես. ԽԹ, 26:
[104] Ես. Է, 14, Մատթ. Ա, 23:
[105] Ղուկ. Ա, 28:
[106] Ղուկ. Ա, 35:
[107] Ղուկ. Ա, 32—33:
[108] Ծննդ. ԽԹ, 10:
[109] Ծննդ. ԽԹ, 11:

[Քրիստոսի մարդեղության նկատմամբ ուղղափառ հավատի դավանությունը]

377. Նա ինքն իր էության մեջ է, որպես և իսկապես Է-ն, սակայն երբ կամեցավ, մարդկային կերպարանք առավ, մարմին հագավ և իջավ մեր նմանությանը: Նա, որ անբովանդակելի էր և անհասանելի իր Աստվածության ամբողջ լիության մեջ, մեր պատճառով իջավ չափավոր ձևերի մեջ, ամփոփվեց մարմնի մեջ: Ճշմարտությամբ բովանդակվեց մարմնի մեջ, եղավ ճշմարիտ մարդ, իջավ անարգության, որպեսզի մեզ բարձրացնի: Սակայն իր Աստվածությամբ երկնքում է և երկրի վրա, Հոր մոտ է և Հոր հետ: Բոլոր արարածները նրա հրամանով են շարժվում, յուրաքանչյուրն ըստ կարգադրության և դասավորման:

378. Սակայն թեպետ մեզ համար իջավ անարգության, այնուհանդերձ մնում էր իր բնության մեջ, ինչպես ինքն է ասում, թե՝ «նույնն եմ և չեմ փոխվել»[110], քանզի թեպետ առավ մարդկային կերպարանքը և մարմինը, սակայն խառնեց-միացրեց-ընկղմեց մարմինը իր Աստվածության մեջ: Դարձյալ ասում է՝ «սա է Աստված, մեր Աստվածը հավիտյանս հավիտենից»[111]: Եվ դարձյալ ասում է՝ «դու նույնն ես և քո տարիները չեն անցնի»[112]: Այսպիսի ձայն հասավ նաև մարգարեներից մեծագույն Մովսեսին, թե՝ «Ես եմ, որ սկզբից կայի, ասպես պիտի ասես, թե նա՝ Աստվածը, որ սկզբից կար, ինձ առաքեց ձեզ»[113]: Հովհաննեսը նույնպես ասում է իր թղթում, թե՝ «Նա կար սկզբից, նրա մասին լսել էինք, նրան ականատես իսկ եղանք, նրան նայեցինք, մեր ձեռքերը շոշափեցին կյանքի խոսքը և կյանքը հայտնվեց և տեսանք ու վկայեցինք»[114], քանզի նա ինքը ճշմարիտ Աստվածն է և հավիտենական կյանքը:

379. Անբմբռնելին մարմին առավ, շոշափվեց և ճանաչվեց մարմնով և մարմնի բոլոր հանգամանքներով հանձն առավ իր կամքով, խոնարհությամբ համբերեց անձանոթների մեջ լինելով: Ոչ որևէ մեկի բռնադատությամբ, այլ իր սեփական և ինքնիշխան կամքով կրեց այն, ինչպես ինքն է ասում՝ «Իշխանություն ունեմ իմ անձը դնելու իմ կամքով, որպեսզի դարձյալ առնեմ այն»[115]:

[110] Մաղաք. Գ, 16:
[111] Սաղմ. ԽԷ, 15:
[112] Սաղմ. ՃԱ, 28:
[113] Եղ Գ, 14:
[114] Յովհ. Առ. Ա, 1—2:
[115] Յովհ. Ժ, 18:

380. Ինքը ծնվեց կույսից, իր կամքով կատարեց իր առաքիչի կամքը, ասում է՝ «Ես եկա կատարելու իմ հոր կամքը»[116], որպեսզի նա ցույց տա միակ անքակտելի, անբաժանելի ինքնության միությունը: Հոր կամքով մտավ կույսի արգանդը և չգարշեց, վասնզի ինքն է ամեն ինչ սրբացնողը: Իր կամքով խաչձարուրի մեջ փաթաթվեց և անասունների մսուրը դրվեց, քանզի ինքն է տերն ու արարիչը ամեն մեծությունների և բաշխիչը ամեն բարիքների:

381. Հինավուրցը մեզ համար մանկացավ, առավ մեր մարդկային տկարության մարմնի կերպարանքը, որպեսզի մեզ տանի իր անմահությանը: Սակայն թեպետև մարմին հագնվեց և իջավ մեր նմանությանը, այսուհանդերձ մնում էր իր Աստվածային հայրենի բնության փառքում, ինչպես և էր իսկապես և է և կա հավիտյան իր հոր մոտ բարձունքներում, իր բնության մեջ, մեր մարմնով որ հագավ փառավորվելով հանապազօր հոգեղեն ու հրեղեն հրեշտակների կողմից:

382. Նա եկավ-դարձավ մարդ, որպեսզի մենք մարմնավորներս կարողանանք տեսնել: Սակայն Աստծուն իր էությամբ չի տեսել ոչ ոք, ո՛չ հրեշտակները, ո՛չ հրեշտակապետերը, ո՛չ սերովբեները, ո՛չ քերովբեները և ո՛չ էլ երկնավոր զվարթունների բյուրավոր բանակը: Բայց Որդին մարմնով ծածկված կատարելամիտ իմաստուններին ցույց տվեց և հայտնեց ինքն իրեն, որպեսզի հագենան իր լույսի սքանչելիությամբ, թե՝ «ով ինձ տեսավ, տեսավ իմ հորը»[117]: Նա գալով խոստացածը կատարեց սուրբ կույսից: Առաջին ծնունդը եղել էր Հորից նախքան անսահման ժամանակները, մի մշտնջենական և հավիտենական ծնունդ, մշտնջենական և հավիտենական Հորից, նախքան ամեն ինչ:

383. Միայն այսչափ գիտենք մենք տկար արարածներս նրա մասին, քանզի նա և ճշմարիտ հայրը մեկ են, ինչպես ամեն մի հայրություն կոչվում է երկնավոր և երկրավոր [արարածների] կողմից: Միայն մեկ Տեր՝ երեքանձնական զորություն, երեք անձինք՝ մեկ զորություն, մեկ գիտության միություն, մեկ զորություն՝ միասնական փառքով, միայն մեկ լուսավորությամբ, միայն մեկ իսկությամբ, քանզի ոչ ոք կարող է քննել, թե որպես կամ ինչու նա եղավ:

384. Հավատացեք Երրորդությանը, ընդունեցեք միությունը անշշունջ լռությամբ և լուռ հավատով: Բայց մենք հողապատյան արարածներս ինչպես կարող ենք քննել անիմանալին, անքննելին և կամ ճանաչել բարձրյալին: Մենք, որ սկիզբ ենք ունեցել, ինչպես կարող ենք քննել անսկզբին, անհասանելիին:

385. Այս է ճշմարիտ հավատը: Նա խոնարհվեց, խառնեց Աստվածայինը մարդկայինին և անմահը մահկանացուին, որպեսզի բոլոր մարդկանց անքակտելիորեն [կապի] իր Աստվածային անմահությանը: Երբ միածին Աստվածորդին, հոր հզորակիցը, մարմնով հոր մոտ՝ աջ կողմը մտավ, մեզ խառնեց իր Աստվածությանը: Նրա ձեռքով [հայրը] հաստատեց երկրի հիմքերը և պարզեց երկնքի տարածությունը: Նրա մասին մարգարեն ասում է. «Տերը երևան հանեց իր աջը և իր բազուկը բոլոր հեթանոսներին, և երկրի բոլոր ծայրերը տեսան մեր Աստուծո փրկությունը»[118]:

386. Հոր աջը ինքն իսկ է և բազուկը՝ միածին Քրիստոսը: Նրանով լուսավորվեցին բոլոր արարածները, «սկզբից էր Խոսքը, Խոսքը Աստուծու մոտ էր, Աստված էր Խոսքը և ամեն ինչ նրանով եղավ»[119]: Նրանով հաստատվեց ամեն ինչ, որ երկնքում և երկրում է: Անհրաժեշտ էր, որ օրհնվեն նրանով, որի [կողմից] ստեղծվել են, հաստատվել, և նրանով լուսավորվեն, քանզի Աստված կամեցավ, որ արարածներն ապրեն և չկորչեն:

[Սուրբ Հոգու առաքումը կույս Մարիամին]

387. Արդ, Աստված առաքեց սուրբ Հոգին կույս Մարիամին և Աստվածորդին մարմին առավ կույսից, որով վերացրեց չարը, նույն մարմնով մեղքերի հատուցումը տվեց աստվածախառն մարմնով, բարձրախառն խոնարհությամբ աներևույթը միացրեց տեսանելիին: Հրեշտակների ավետումը հովիվներին՝ աստվածեղեն փառքն էր գուշակում: Մսուրը և խաչձարուրը ցույց էին տալիս մարմնի խոնարհ աղքատությունը, առաջնորդ աստղերը, մոգերի ընծաները ի հայտ էին բերում ամենատիրոջ տերությունը: Երկրավոր [նշաններով] պետք է ճանաչենք մարմինը, իսկ երկնավորներով՝ ճանաչենք Աստվածությունը:

388. Արդ, տես ինչ է պատմում մեզ մարգարեական հոգու շնորհը Միքիայի մեջ, թե՝ «Եվ դու Բեթղեհեմ, ասում է, որ ոչ ցածր աստիճանի ես հասել, քեզանից ծագելու է ինձ պետ և իշխան Իսրայելի տանը և նրա ելքը աշխարհի օրերի սկզբ-

[116] Յովհ. Զ, 38:
[117] Յովհ. ԺԴ, 9:
[118] Սաղմ. ՂԷ, 1—3:
[119] Յովհ. Ա, 1—2:

բից է»[120]: «Սկզբից», այսինքն աստվածությունն է ցույց տալիս, «Բեթղեհեմը» մարմինն է նշանակում, հրեշտակապետն ասում է՝ «կծնվի և նրա անունը կդնեն Հիսուս»[121] և սաղմոսերգուն երգեց՝ «նրա անունը արևից առաջ է»[122]: Մեկը մարմնածին ծնունդը է պատմում և մյուսը ցույց է տալիս աստվածությունը, որը ծնված է Հորից նախքան արուսյակը (արեգակը):

389. Մենք այս ճշմարիտ հավատն ունենք սուրբ Գրքերի և եկեղեցու օրենքների մասին [որպես] կյանքի առաջնորդ Աստուծո մոտ գնալու, ընդունելով սուրբ Գրքերի հավատի վարդապետությունը: Մի խոտորվեք իմաստության կարգից ո՛չ աջ և ո՛չ ձախ, քանզի սրանք այնպիսի սերմեր չեն, որոնք ամուլ են ու փտած, ազազուն ու չորացած: Բույսերը, որոնք սերմանում ենք լսող սրտերի անդաստանում աստվածեղեն գրքերից, հոգեպատում մատյաններից [են վերցված]: Եթե որևէ մեկը դեռ նույնիսկ սերմանի [վերոհիշյալների] նման սերմեր իր լսողների լսողության մեջ, այդպիսին նզովյալ լինի, եթե նույնիսկ հրեշտակ է երկնքից, հողակեր օձի նման անիծյալ լինի, քանի որ սուտ և պատիր խոսքերով կամենում է Աստուծո պատվիրանը փոխել:

390. Բայց մենք այսպիսի պատրանք չենք մատուցում ձեզ և այս բանը վկայում ենք Աստուծո առջև, քանզի միայն նա գիտի սրտի խորհուրդները, ամեն ծածուկ բան նրան հայտնի է և ամեն ժամ նրա առջև ենք: Այժմ նրա առջև խոսում ենք նրա պատգամները, որոնք բաջաբուս են, բոլանդակալի, պտղաբեր, արդյունատու, շահեկան, վայելող, շտեմարանալի, որոնք կարող են ձեզ պարարել այստեղ մարմնավոր պտուղով և այնտեղ արքայության մեջ ձեզ վայելել կտան անանցանելի և երկնավոր արքայությունը: Փառք նրան՝ ամենատիրոջը, որ մեր կյանքի համար մարդացավ և մարդակերպ շրջեց, մեզ նման կերավ ու խմեց, տանջվեց, չարչարվեց, խաչվեց, գամվեց, սպանվեց, թաղվեց, կենդանացավ, հարություն առավ, վերացավ և եկավ-նստեց իր ծնող Աստուծո աջ կողմը և Հայրը կենդանացրեց բոլոր նրանց, որ հավատացին նրան:

[Հիսուս Քրիստոսի ծնունդը սուրբ կույսից և նրա հավիտենական թագավորությունը]

391. Բայց մենք դեռ պետք է պատմենք Աստվածորդու ծնունդը կույսից, թե ինչպես եղավ, մեկ առ մեկ կպատմենք: Քանզի ոչ թե կույսից ծնունդ առնելուց հետո գոյացության սկիզբն առավ անսկիզբ խոսքը, այլ նա ամեն ինչից առաջ հավիտյան ծնվել էր Հորից, իսկ այժմ մեզ համար իջավ և մարմնով ծնվեց կույսից և Հորից նրա ծննդյան մասին միայն ինքը գիտի: Իսկ երկրորդ ծնունդը նրա շնորհիվ տեղի ունեցավ մարդկանց մեջ, որպեսզի ապրեցնի մարդկանց, երկիրը փրկի առաջին անեծքից և իր օրինաբեր բայլերով գա ու նորոգի նրան, քանզի նա տեսավ, որ մարդիկ կորստյան են մատնված, և հավաքեց ցրվածներին ու գտավ կորածներին:

392. Այնուհետև շնորհագույն կույսը անայր, անապական արգանդում սուրբ Հոգուց հղացավ Աստծո որդուն [մեր մտքերին] անմատչելի ձևով: Եվ ըստ ծրնընդականների օրենքի նա իր անդրանիկը ծնավ Դավթի քաղաքում՝ Բեթղեհեմում, նատարելու համար մարգարեական խոսքը, թե՝ «դու Բեթղեհեմ Եփրաթա տուն թեև սակավավոր ես Հուդայի հազարավորների մեջ, քեզանից ինձ կելնի պետ և իշխան ու նրա ելքը աշխարհի սկզբնական հավիտյան օրերից է»[123]:

393. Տեսնո՞ւմ ես նախագուշակված դեպքերը: Տեսնո՞ւմ ես հրեշտակների ավետիսը հովիվների օթևանում, թե՝ «Ձեզ այսօր փրկիչ ծնվեց, որը Դավթի քաղաքի օծյալ Տերն է»[124]: Տեսնո՞ւմ ես, որ նրա ելքը աշխարհի սկզբից է, «այսօր ծնվեց» ասում էին: Նրանք խոսում էին օծյալի մասին, որպեսզի մատնանշեն մարգարեությունը, թե՝ «որը խոսում է մարդկանց մեջ իր օծյալի մասին»[125]: Նա նշան տվեց օծյալի մասին, թե՝ «կգտնեք մի մանուկ խանձարուրով փաթաթված և դրված մսուրի մեջ»[126]: Սա էր հավիտենական խորհուրդը, որը ծածուկ էր մնացել Աստուծո մոտ և հայտնվել երկնային իշխաններին:

394. Այնտեղ նրա աստվածային փառքի մասին երգեր էին ասում երկնավոր զորքերը և սովորեցնում հովիվներին, որ չլինի թե նա հովիվների կողմից արհամարհվի մսուրի և պատանքի պատճառով: Այնուհետև հովիվները փութալով հասան-գտան մանուկը ըստ հրեշտակի նշածի: Նա հայտնի դարձավ ոչ միայն մոտավորներին, այլև արևելքի հեռավոր [երկրներին], աստղի նշանով: Ուստի այսպես պետք է հասկանալ մարգարեական հոգեպատում մատյանները՝ «մեզ մանուկ ծնվեց և որդի

[120] Միք. Ե, 2. Մատթ. Բ, 6:
[121] Մատթ. Ա, 21. Ղուկ. Ա, 32:
[122] Սաղմ. ՀԱ, 17:
[123] Միք. Ե, 2:
[124] Ղուկ. Բ, 11:
[125] Ամովս, Դ, 13:
[126] Ղուկ. Բ, 12:

ծնվեց մեզ, որի իշխանությունը իր ուսերի վրա է և նրա անունը կոչվեց մեծ խորհրդի հրեշտակ, սքանչելի խորհրդակից, հզոր Աստված, հանդերձյալ աշխարհի իշխան հայր»[127]:

395. Տեսնում ես, որ «որդի, իշխան, հրեշտակ, խորհրդակից, հզոր Աստված և հանդերձյալ աշխարհի հայր» է կոչվում այս-օրածին մանուկը: Քանզի իսկապես որդի է, քանի որ Աստուծո զորությունն է, խորհրդակից և հզոր Աստված, որի միջոցով հավիտենականությունը հաստատվեց: Մանուկ է, քանի որ այսօր սուրբ կույսից ծնվեց Բեթղեհեմում, որի մասին նախօրոք ասել է, թե՝ «Տերն ասաց ինձ, իմ որդին ես դու, և ես այսօր ծնեցի քեզ»[128]: Հանդերձյալ աշխարհի հայր է, քանզի երկրորդ կուսածին մարդը երկնքից գալով պիտի նորոգի առաջին հողածին մարդու պատճառով հնացած և մահակուլ դարձած աշխարհը: Իշխան է, քանզի «Հեսսեի արմատից, ասում է Եսային, գավազան բխեց և ծաղիկ՝ նրա շառավիղից»[129]. դա Դավթի դստեր ծնունդն է: Ապա նա նստելու է Դավթի աթոռին և նրա թագավորությունը հաջողության պիտի հասցնի:

[Մարգարեների գուշակությունները Քրիստոսի ծննդյան մասին]

396. Այսպիսով եկան-հասան օրերը, որոնք մարգարեն նախապես սահմանել էր: «Ահա օրեր կգան, ասում է Տերը, երբ կհաստատվեն իմ բարի խոսքերը, որ խոսեցի Իսրայելի և Հուդայի տան մասին: Այդ օրերին և այդ ժամանակ ես ծագեցնելու եմ արդարության ծնունդը, որը երկրի վրա իրավունք և արդարություն պիտի գործի»[130]: Այդ մասին ապա ասում է. «Դարձիր Հակոբ և բռնիր նրան, նրա լույսի առաջին ծագման ժամանակ. մի տար այլոց քո փառքը և ոչ քո օգուտը՝ օտար ազգի»[131]:

397. Իսկ մի ուրիշ մարգարե հայտնապես վկիր է տալիս, թե՝ «այդ օրերին Դավթի խորանն եմ կանգնեցնելու, ընկածները պիտի ոտքի կանգնեցնեմ, նրա կործանված ավերակները վերստին եմ կանգնեցնելու և այն շինելու եմ հավիտենականության համար, որպեսզի ինձ փնտրի մարդկանց մնացած մասը և բոլոր հեթանոսները, որոնց վրա իմ անունն է դրված, ասում է Տերը»[132]: Թե ով է այս բանն անում, հայտնի է հավիտենականության սկզբից, քանզի նախապես խոստանալով Դավթին ասել է, թե՝ «Քո որովայնի պտուղից ընտրեցնելու եմ քո աթոռին, բարձրացնելու եմ ավելի բարձր, քան երկրի բոլոր թագավորները, նրա աթոռը երկնքի օրերի չափ եմ հաստատելու, իմ առջևի արեգակի նման և իբրև լուսինը, քանզի նրանք օդում են հաստատված»[133]:

398. Նա եկավ, «որին [պատկանում] է թագավորությունը և նա հույսն է հեթանոսների»[134], ինչպես պատմել է Մովսեսը: Եվ աշխարհակալ թագավորը բարձրացվեց բոլոր ազգերին հնազանդեցնելու: Նա իր թագավորությունը այլ ազգի չի տա, ինչպես ասել է Դանիելը: Նույնպես և Դավիթը, որի որդին կոչվեց Քրիստոս մարգարեի սրտից բխած հոգեպատում խոսքերով: Թագավորի հատկանիշները ցույց տալով նախ ասում է, թե՝ «նա գեղեցիկ է ավելի քան բոլոր մարդկանց որդիները և նրա շրթները շնորհ են սփռում»[135], իսկ գեղեցիկ է ասում ոչ թե կերպարանքի, այլ հանգուգական փառքի համար: Եվ դարձյալ, թե՝ «Սուրդ կախիր քո մեջքին, ով հզոր, որպեսզի վայել լինի քո ճշմարտությանը»[136]: Ապա դրանից հետո անմիջապես վկիր է տալիս, թե՝ «քո աթոռը Աստված հավիտյան հավիտենից է, քո թագավորության գավազանը արդարության գավազան է»[137] և նշում է, թե օծյալն է նա և որ ինքն իսկ մարգարեն նրա օծյալ գալու մասին երգել է, թե «այս պատճառով Աստված, քո Աստվածը ուրախության յուղով քեզ օծեց ավելի քան քո ընկերները»[138]:

399. Տեսնո՞ւմ ես, որ մարգարեին նախապես սուրբ Հոգու կողմից ծանուցված էր, թե Աստուծո միածին Որդին՝ հորն աթոռակիցը, սիրելին եղավ Դավթի որդի և բարձրացրեց նրա աթոռը հավիտյան: Որպես և ասում է՝ «նախապես տեսնում էի Տիրոջն իմ առջև ամեն ժամ և իմ աջ կողմում»[139]: Նա ինքն էլ գիտի, որ երդումով երդվեց նրան Աստված՝ նրա աթոռին ընտրեցնել նրա որովայնի պտուղը, որի մասին և օրինակներն են վկայում, թե «Դավթի ազգից և Բեթղեհեմ գյուղում գալիս է Քրիստոս»[140]:

---

127 Ես. Թ, 6:
128 Սաղմ. Բ, 7:
129 Ես. ԺԱ, 1:
130 Երեմ. ԼԳ, 14—15:
131 Բար. Դ, 2—3:
132 Ամոս Թ, 11—12:
133 Սաղմ. ՁԸ, 28, 30, 38, ՃԼԱ, 11:
134 Ծննդ. ԽԹ, 10:
135 Սաղմ. ԽԴ, 3:
136 Սաղմ. ԽԴ, 4:
137 Սաղմ. ԽԴ, 7:
138 Սաղմ. ԽԴ, 8:
139 Սաղմ. ԺԵ, 8:
140 Յովհ. Է, 42:

400. Այստեղ նա թագավոր նանաչվեց ոչ միայն նախապես եղած գուշակություններով, այլև նույն ժամին եղած նշանով՝ նրա մոտ եկած մոգերով, որոնք ասում էին. «Ո՞ւր է նա, որ ծնվեց Հրեից արքա»[141] և դպիրներից տեղեկանալով հասան այն վայրը, ուր մանուկն էր, ու երկրպագեցին նրան, ընծաներ մատուցեցին և միաժամանակ Տիրոջից ու հրեշտակից տեղեկություններ ստանալով վերադարձան:

[Քրիստոսի թլփատությունը և Եգիպտոս փախուստը ըստ մարգարեների գուշակության]

401. «Երբ լրացան նրա թլփատելու ութ օրերը, նրա անունը դրեցին Հիսուս, որը հրեշտակն էր կոչել, մինչ դեռ չէր հղացած արգանդում»[142]: Ինչպես և ասում է մարգարեն. «Մինչ դեռ նա չէր ստեղծել քեզ որովայնում, ես գիտեի քեզ և նախքան արգանդից ելել էիր, քեզ սրբացրի»[143]: Սա բացատրվում է այն վերաբերելով Տիրոջը, թե՝ «ում որ Հայրը սրբացրեց և առաքեց աշխարհ»[144]: Իսկ մի ուրիշ մարգարե, թե՝ «արգանդից կանչեց ինձ Տերը և իմ մոր որովայնում կոչեց իմ անունը»[145]:

402. Արդ, տես որ նա ճշմարիտ կերպարանք ստացավ սուրբ կույսից և ոչ թե աչքին երևացող տեսիլք: Քանզի սկիզբ է առնում [միայն] անսկիզբը: Օրերով հաշվելով ութերորդ օրը նախքան առավոտյան աստղը (արուսեակ) թլփատվեց որդին՝ ավետիսով խոստացված Աբրահամի զավակը, որով օրհնվում են երկրի բոլոր ազգերը: Ուստի Քրիստոսի թլփատվելը կատարումն էր հայրերին տրված ավետիսի: «Մտավ, ասում է, օրենքի տակ, որպեսզի օրինազանցներին փրկի և մենք ևս որդեգրություն ստանանք»[146]:

403. Արդ անբնակալ լինելով այնուհետև Դավթի որդին հալածվեց Եգիպտոս, որպեսզի կատարվի այն [խոսքը], թե՝ «Եգիպտացոց երկրից կանչելու եմ իմ որդուն»[147]: Քանզի Աստուծո կողմից նախապես ասմնանված էր իր հոգեկիր մարգարեների միջոցով, թե որպիսի չարչարանքներ կրելու էր միածին Որդին հրեաներից, ինչպես և Պետրոսը առաքելագործ մատյանի մեջ ասում է, թե՝ «Ասված ինչպես որ նախապես պատմել էր բոլոր մարգարեների բերանով իր Քրիստոսի չարչարվելու մասին, այնպես էլ կատարվեց»[148]: Ինչպես և Տերն իսկ ասում է, թե՝ «եկա կատարելու օրենքը և մարգարեները»[149]:

[Քրիստոսի գալուստը Եգիպտոսից Նազարեթ, նրա սքանչելի վարդապետությունը Երուսաղեմում տասներկու տարեկան հասակին]

404. Կանչվելով ապա Եգիպտոսից Նկալ-անցավ Նազարեթ իր կարծեցյալ հայրենիքը ըստ մարմնի: Աճեց և զարգացավ հասակով ըստ մարդկային ցեղի օրինակի: Ենթարկվեց նաև իսրայելական ազգին, որպեսզի նրանք ինքնակամ դիմեն բացված կենաց աղբյուրը: Քանզի նրա մասին է գուշակել սաղմոսանվագը, թե՝ «կենաց աղբյուրը քեզանից է»[150]: Այս ևս Փրկիչը հայտնեց սամարացի կնոջն ասելով՝ «եթե դու գիտենայիր Աստուծո պարգևը և ո՞վ է նա, որ ասաց քեզ, թե տուր ինձ ըմպել՝ դու ինքդ կխնդրեիր նրանից և նա քեզ կտար կենդանի ջուրը»[151]:

405. Ապա նա տասներկու տարեկանը լրացնելուց հետո ելավ Երուսաղեմ և օրենքի վարդապետների հետ գրույցի մեջ մտավ ու զարմացրեց բոլորին: Ի կատարումն այն մարգարեության, թե՝ «Անավասիկ իմ մանուկը պիտի ըմբռնի, բարձրանա, վերանա և հույժ փառավորվի»[152]: Քանզի թեպետ Աստվածությունը երկնքից իջնարձակվեց, սակայն ներքևի երկրակցացների կողմից բարձր է ճանաչված: Նրանք հասկացան, որ թեպետ և խոնարհությամբ նա իջավ, սակայն իր ինքնարարն փառքի զորությամբ բարձր է ըստ մարգարեի նախապես գուշակած տեսիլքի, թե՝ «կվերանա-կբարձրանա և կփառավորվի», բայց քանի որ նա փառքի կարոտ չէ իր կամքը կատարելուց հետո համբերատար իշխանությամբ բարձրացավ, ոչ արտաքին որևէ [օգնությամբ], այլ իր բնական փառքով բարձրանալով ճանաչվեց երկնավոր զորքի կողմից, ըստ այն խոսքի, թե՝ «Ասված համարձակ օրհնությամբ և Տերը մեր ձայնի փողով»[153]:

406. Իսկ փողը միթե եղջյուրի նման չի հնչելու շնչով ուռած այտերով [լնդով], թույը օդով լի բերանից փչվելով, որպեսզի աստվածասքանչ ավետիսներով գոչեն և լցնեն ամբողջ [տիեզերքը], թե՝ «անա

[141] Մատթ. Բ, 2:
[142] Ղուկ. Բ, 21:
[143] Երեմ. Ա, 5:
[144] Յովհ. Թ, 36:
[145] Էս. Խթ, 1:
[146] Գաղատ. Դ, 4—5:
[147] Մատթ. Բ, 15:
[148] Գործք, Գ, 18:
[149] Մատթ. Ե, 17:
[150] Սաղմ. ԼՆ, 10:
[151] Յովհ. Գ, 10:
[152] Էս. ԾՄ, 13:
[153] Սաղմ. ԽՁ, 6:

Աստված, ահա Տերը»[154]: Քանզի նրանք քարոզության ճանապարհն են կտրելու և նրան հիշելու, ճանաչելու են, թե՝ «ահա Տերը որին սպասում էինք, ցնծանք և ուրախ լինենք մեր փրկության համար»[155]: Նրանով քարոզության ճանապարհը բացվեց իրենց կյանքի լույսի, բարիքների և հանգստյան համար, որպեսզի մտածեն ու հասկանան, թե նրա հետ արքայություն բարձրանալով լուսեղեն հարկերի կացարանների բնակիչներ պիտի լինեն: Նրանք պիտի հավանեն լսել հասկանալ, այսինքն տիեզերքը պետք է ճանաչի նրան, ինչպես և սաղմոսարանն է ասում, թե «երկրի բոլոր ծայրերը պիտի հիշեն և դարձ կատարեն Տիրոջը»[156]:

407. Եվ «վերանալն ու բարձրանալը» այն է, որ նա իջավ խոնարհության, խոնարհ մարմնով, այդ պատճառով նույն խոնարհության մարմնի կերպարանքով կրբարձրանա: Նա երևաց իբրև խոնարհ մարդ և առավել հեզ ու խոնարհ, քան բոլոր մարդիկ: Նա դիմացկունություն և համբերություն ցուցաբերեց իր մարմնի վրա կրած վշտերի հանդեպ: Այդ պատճառով նույն մարմնով բարձրացավ խոնարհություններից, իր մարդկությամբ վերացավ, բարձրացավ, փառավորվեց: Քանզի նա բարձրացրեց մարդատեսիլ կերպարանքը, որ առել էր, և խոնարհության նկարագիրը որպես օրինակ իր վրա տպավորվեց:

[Քրիստոսի մկրտությունը Հովհաննեսից և նոր օրենքի մկրտության խորհրդի հաստատությունը]

408. Արդ, երեսուն տարի ինքնիրեն չընհայտնելուց հետո զարգանալով մարմնի հասակով, ըստ մարմնի բնական աճման նա ենթարկվեց մկրտության: Նախ և առաջ նա որպես կարապետ ուղարկել էր Հովհաննես [Մկրտչին]՝ մարգարեներից ամենամեծին պատրաստելու ճանապարհը և ուղղելու նրա հայտնության շավիղները: Նա համաձայնեց տալ ապաշխարության մկրտությունը, ոչ անվախճան կյանքի աստվածադրոշմ լուսավորության մկրտությունը, այլ ապաշխարության սրբության մկրտությունը, ինչպես Մովսեսի դարում, երբ Աստված նրանց երևալ ուզեց, հրամայեց լվացվել և սրբանալ, որպեսզի արժանավոր լինեն աստվածատես փառքի երևալուն:

409. Այսպես եկավ Հովհաննեսը լվալով ժողովրդին ապաշխարությամբ, որ երբ Աստվածորդին գա, պատրաստագույն արժանավորությամբ նրա վարդապետությանը ունկնդիր լինեն, իրենց սրտում ճանապարհ բացեն, որպեսզի կարողանան ընդունել ամենատիրոջը իրենց հեզ ու խոնարհ օթևաններում:

410. Արդ նա գալով ինքը մկրտվեց Հովհաննեսից, ձեռնարկելով գրել հավիտենական կտակ և իր արյամբ կնքել, որպեսզի ամենքը ապրեն լուսաբեր և կենսատու մկրտությամբ: Հրամայեց ամեն երկրածին մարդկանց, բոլոր մարմնավորներին աստվածանման փրկության պատկերին նմանվել: Արդ, եկավ կնքատու Հովհաննեսին մկրտվելու նրանից, որն ահաբեկված մերժեց, թե «ի՛նձ հարկավոր է քեզանից մըկըրտվել»[157]: Իսկ նա լսեց ու պատասխանեց համարձակ հրամայելով մկրտել իրեն, թե «թույլ տուր այժմ, քանզի այսպես արժան է լինել, որպեսզի կատարենք բոլոր արդարությունը»[158]:

411. Ի՞նչ է արդարամիտ լինելը, եթե ոչ այն, որ Հովհաննեսի հայր Զաքարիան սուրբ հոգով գոչեց, թե՝ «հիշեց, ասում է, երդումը, որ երդվեց մեր հայր Աբրահամին՝ մեզ առանց երկյուղի փրկություն տալ մեր թշնամիներից և բոլոր նրանցից, ովքեր ատում են մեզ, ծառայեց նրան սրբությամբ և արդարությամբ»[159]: Նույն ձևով սաղմոսերգուն ասում է. «Հիշեց իր ուխտը Աբրահամի հետ և երդումը Սահակին և Հակոբի համար հաստատեց իր օրենքը և Իսրայելի համար դրեց իր հավիտենական ուխտը»[160]: Հայրերի հավատով օրհնեց ամբողջ երկիրը, օրհնեց, կատարեց խոստումները և նույն պատճառով նա ինքը եկավ ջրերի մեջ և միանգամայն սրբացնող ու նորոգող դարձրեց ջրերը:

412. Վասնզի նա առաջին երկիրը իր հրամանով դուրս բերեց ջրերից և ջրով պարարեց բոլոր բույսերը, զեռունները, գազանները, անասուններն ու թռչունները և ջրի դալարությամբ բխեցին երկրից: Նույն ձևով՝ մկրտությամբ դալարեցրեց ջրերի ծննդականության արգանդը ջրով սրբացնելով և նորոգելով հողեղեն նյութի մաշված հնությունը, որը մեղքի միջոցով մաշված-հնացած էր, մերկացած հոգու շնորհներից: Ապա անտեսանելի հոգին կրկին բացեց արգանդը երևելի ջրով, նորածնունդ նորափետուրներին զարդարելով ավազանի ծննդականության համար, հագցնելու

154 Ես. Խ, 10:
155 Ես. ԻԵ, 9:
156 Սաղմ. ԻԱ, 28:
157 Մատթ. Գ, 14:
158 Մատթ. Գ, 15:
159 Ղուկ. Ա, 73—74:
160 Սաղմ. ՃԴ, 8—10:

համար բոլորին լուսավոր պատմությունը, որ մյուս անգամ վերստին ծնվեն:

413. Քանզի արարչության ժամանակի սկզբից իսկ Աստվածության Հոգին շրջում էր ջրերի վրա և այնտեղ արարածների եռամավորությունն էր հորինում ու հրամայում էր արարածներին լինելության հասնել: Նա հրամայեց նաև կազմել երկնքի հաստատությունը՝ հրեղեն հրեշտակների բնակարանը, որը մեզ ջրերեն է թվում: Նույն ձևով եկավ-կատարեց ուխտը, որ դրել էր հայրերի հետ: Իջավ ինքը ջրերի մեջ և սրբացրեց երկրի ներքին ջրերը, որոնք մարդկանց մեղքով պղծված էին:

414. Արդ, իր գարշապարով կոխելով ջրերը սրբացրեց և սրբացնող դարձրեց: Եվ ինչպես նախապես Հոգին շրջում էր ջրերի վրա, նույն ձևով էլ կբնակվի ջրերի մեջ և ամենքին կընդունի, որ նրանով ծնվեն: Հավաքված վերին ջրերը հրեշտակների բնակարանն են: Սակայն նա այդ ջրերը դարձրեց այն ջրերի նման, քանզի ինքն իջավ ջրերի մեջ, որպեսզի ամենքը ջրերի մեջ Հոգով ներողված հրեշտականներ և նույն Հոգին մինչև հավիտյան ամենքին ջրերով որդեգրություն բերի: Նա բացեց ստորին ջրերի դռները, որպեսզի երկնքի վերին ջրերի դռները նույնպես բացվեն և ամենքին փառքի մեջ բարձրացնի որդեգրության համար:

415. Վասնզի Աստուծո ճշմարիտ Որդին խոնարհվեց և իջավ մկրտության ջրերի մեջ, որպեսզի հայրերին տրված խոստումներն ու ավետիսները կատարվեն: Նախքան այդ նա թլփատությունը հանձն առավ, որպեսզի եռկու կողմից շնորհ և բարիք ընդայի՝ իր թլփատվելով նա կկատարեր խոստումների հաստատումը և իր խրախուսանքով ժառանգության արժանիներին որդեգրության կհրավիրեր: Եվ մկրտվելով նա բոլոր մկրտվածներին կյանք է տալիս ինքն անձամբ ընդունելով մկրտությունն և պատվական դարձրեց մկրտությունը ինքն իջնելով մկրտվելու:

416. Իսկ նա նախ հասկացվեց ու ճանաչվեց որպես Աստուծո ճշմարիտ Որդի իր Հոր ձայնով և Հոգու նրա վրա իջնելով: Քանզի դրանով նա հասկացել և ճանաչվել էր կատարելու համար Հոր նախապես ասածը, թե՝ «սահավասիկ իմ մանուկը խոնարհ պիտի լինի, վերանա, բարձրանա և հույժ փառավորվի»[161]:

417. Երեսուն տարի լուռ և աներևույթ շրջեց նրանց մեջ և ապա եկավ-հասավ մկրտության և մկրտությամբ էլ ճանաչվեց բոլորից: Հովհաննեսը վկայում է և ասում. «սա է, որի մասին ասում էի, որ կգա իմ ետևից. և նա ինձանից առաջ էր, քանզի նա առաջինն էր, և նրա կատարելությունից մենք ամենքս շնորհ ստացանք»[162]:

[Սուրբ Հոգու իջնելը աղավնու նմանությամբ և Հայր Աստուծո վկայությունը Քրիստոսի մկրտության ժամանակ]

418. Եվ Հոգին իջավ նրա վրա աղավնու նմանությամբ: Իսկ ինչո՞ւ արդյոք աղավնու նմանությամբ եկավ Աստուծո սուրբ Հոգին. որպեսզի տեսնողներին ուսուցանի, թե չկա ոչ մի այլ հնար մոտենալու Աստվածորդուն, եթե ոչ անմեղությամբ, արդարությամբ և սրբությամբ, որ նրանք պետք է աղավնակերպ նմանություն առնեն իրենց մեջ կրելու համար այդ կերպարանքը:

419. Վասնզի նա արտերի բնիչ է, ծածկագետ և ամենայն գաղտնիքների բացահայտող, քանզի ամեն ինչ գիտի, ամեն ինչ, որ ասում է, կարող է կատարել, և նրա համար անկարելի բան չկա: Ինչպես ասաց Գաբրիելը սուրբ կույսին, թե՝ «Աստուծո համար ամեն բան կարելի է»[163]: Նա ի հայտ է բերում մարդկանց սրտի խորհուրդները և հանդիմանում: «Նա, որ հատուկ ստեղծեց նրանց սրտերը և հասկանում է նրանց բոլոր գործերը»[164], որոնք մերձենալու են նրան:

420. Այդ պատճառով Հոգին աղավնակերպ իջավ, որպեսզի տեսնողներին ուսուցանի սուրբ մտքով Աստվածության մեր, ձենալ և հոգու բարերարության շնորհները ընդունել ու հաճո լինել հորը: Այդ բանի համար Աստուծո Որդին եկավ և կատարեց հայրերի ուխտը, նրանց որդի անվանվելով: Աստուծո Որդին այն բանի համար եկավ-մկրտվեց, որպեսզի հաստատի բոլորի մկրտությունը, ովքեր մկրտվելու են և որ այդ ավանդելով ամենքի համար փրկություն հայտնի և հասկացվի ու ճանաչվի և այդպիսով բացահայտի ամենակեցույց հոգ-մարտության վարդապետությունը ու հայտնի դարձնի աշխարհին, ինչպես ասում է մարգարեն Տյառնորդու կողմից, թե՝ «մոտեցեք ինձ և այս լսեցեք, առաջվանից ծածուկ չխոսեցի և ոչ էլ երկրի մի խավար տեղում, քանզի երբ նա կար, ես այնտեղ էի և արդ Տերը, Տերը և նրա հոգին առաքեցին ինձ»[165]: Տեսնում ես էականի միավորությունը, «երբ նա կար, ես այնտեղ էի» ասում է հայտնելով միաբուն երրոր-

[161] Ես. ԽԲ, 13:

[162] Յովհ. Ա, 15:

[163] Ղուկ. Ա, 37:

[164] Սաղմ. ԼԲ, 15:

[165] Ես. ԽԸ, 16:

դության զորությունը, որը համագործ է հաստատելու մեջ և միաբան՝ նորոգելու մեջ:

421. Արդ, երկինքը բացվեց և հայրն աղաղակեց, թե՝ «դա է իմ սիրելի որդին»[166] և Հոգին իջավ աղավնու նմանությամբ, որպեսզի հայտնի լինի Որդու գալստյան զորության միաբուն խորհուրդը:

422. Իսկ ինչ է նշանակում, որ ասում է, թե՝ «սկզբից խոսեց», եթե ոչ սուրբ մարգարեների գուշակությունները, որոնց մեջ ինքն իր մասին խոսեց և Հոր և Հոգու միաբանական խորհրդով եկավ-երևաց վերջին ժամանակներում: «Որն սկզբից Խոսքն էր և Խոսքը Աստուծո մոտ էր և Աստված էր Խոսքը: Նա սկզբից Աստուծո մոտ էր, ամեն ինչ նրանով եղավ և եղածներից ոչինչ առանց նրան չեղավ: Նրանով էր կյանքը և կյանքը մարդկանց լույսն է: Լույսը խավարում լուսավորում էր և խավարը նրան չհաղթեց: Մի այր առաքյալ ուղարկվեց Աստծուց, որի անունն էր Հովհաննես: Սա եկավ վկայության, որպեսզի վկայի լույսի մասին և ամենքը նրա միջոցով հավատան»[167]:

423. Արդ, ամեն ինչ լրանալուց և կատարվելուց հետո Աստուծո Որդու լույսը եկավ մեր մեջ լուսավորելու բոլոր մարդկանց, որոնք աշխարհ են գալու, և խավարը չկարողացավ հակառակվել, հաղթել: Այս լույսով ստեղծվեց աշխարհը, որը սակայն չճանաչեց Նրան: Արդ, այս պատճառով եկավ, որպեսզի նրանք ըմբռնեն նրա լույսը և Աստուծո որդիներ դառնան: Եկավ հաստատելու օրենքը և մարգարեները: Օրինակներ ցույց տվեց և հաստատեց ճշմարտությունը:

424. Իսկ ի՞նչ է նշանակում «Խոսքը». միթե լոկ մի ձայն է, լեզվի բախում օդի մեջ, որը նախքան ասողի արտասանելը հայտնի չէ և հետո անհետանում է: Այն պատճառով «Խոսք» կոչվեց, քանզի ինչպես խոսքն է ասողի բերանում, նույնպես և Հոր կամքի բոլոր հրամանները Որդու բերանից են ելնում: Նա գիտի Հորը և կատարում է նրա կամքը, որպես և ինքն ասում է՝ «ոչ ոք գիտի Հորը բացի Որդուց և Որդուն ոչ ոք գիտի բացի Հորից»[168]: Դարձյալ ասում է, թե՝ «եկա կատարել ինձ առաքողի կամքը»[169]: Դարձյալ ասում է Հովհաննեսը. «Աստծուն ոչ ոք չի տեսել բացի միայն Միածին Որդուց, որ Հոր ծոցում է և պատմել է նրա մասին»[170]:

425. Իսկ ինքն ասում է հորը, թե՝ «հասավ ժամը, հայր, փառավորիր քո Որդուն»[171] և երկնքից ձայն լսվեց, որն ասում է. «Փառավորեցի և կրկին կփառավորեմ»[172]: Սա ոչ թե ապաստան խնդրելու կամ հոր հատուկ փառքից զուրկ լինելու համար է ասված, այլ նրա համար, որ արարածները լսեն և հաստատ լինեն Որդու մեջ: Նույն ձևով և Որդին մեր մեջ գտնվելով աշխարհին ցույց է տալիս Հորը և սուրբ Հոգուն, ինչպես հայրը աղաղակում է Միածնի մասին, թե՝ «դա է իմ միածին Որդին, իմ անձի հաճեցուցիչը. իմ հոգին դնելու եմ նրա վրա»[173]: Սա հայտնվեց նրա վրա իջնելով և կանգ առնելով, որպես և ինքն ասում է սուրբ Հոգու մասին, թե՝ «նա ինձ փառավորում է»[174]:

426. Եկավ ու կատարեց իր առաքիչի կամքը: Նա աղաղակելով ասում է, թե՝ «ով հավատա ինձ, կհավատա նրան, որ առաքեց ինձ, ով տեսնի ինձ, կտեսնի նրան, որ առաքեց ինձ»[175]: Այսպես ամենքին հայտնի վարդապետությամբ ցույց է տալիս հայրական փառքը իր անձի միջոցով:

427. Եվ հայրն առաջընթաց [Հովհաննես] կարապետին դեսպան ուղարկեց, որն առաջինը գալով աղաղակեց, թե՝ «սա է Աստուծո Որդին, սա է Աստուծո գառը, սա է, որ գալու է աշխարհի մեղքերը տանելու»[176]: Եվ ելավ բարձր լեռան վրա, դեպի Աստվածության զորության մեծությունը, ինչպես կանխատեսող մարգարեն ասում է Տիրոջ մասին՝ «սուրբ լեռան վրա, բարձր լեռան վրա, այնտեղ երկրի բոլոր ազգերը ինձ են ծառայելու»[177]: Եվ դարձյալ մյուս տեսնող [մարգարեն] գոչում է, թե՝ «ելիր բարձր լեռան վրա, ով Սիոնի ավետարանիչ, բարձրացրու քո ձայնը, ով Երուսաղեմի ավետարանիչ: Բարձրացեք, բարձրացրեք ձեր ձայնը և մի վախեցեք, Հուդայի քաղաքներին ասացեք: Ահավասիկ մեր Աստվածը, ահավասիկ Տերը, Տերը գալիս է իր զորությամբ և նրա բազուկը հզոր է իր տերությամբ, ահավասիկ իր հատուցման վարձքը իր հետ է և իր յուրաքանչյուր գործը իր առջև է: Իբրև հովիվ հով-

166 Մատթ. Գ, 17, Մարկ. Թ, 6:
167 Յովհ. Ա, 1—7:
168 Ղուկ. Ժ, 22:
169 Յովհ. Դ, 34:
170 Յովհ. Ա, 18:
171 Յովհ. ԺԷ, 1, ԺԲ, 28:
172 Յովհ. ԺԲ, 28:
173 Մատթ. ԺԲ, 18:
174 Յովհ. ԺԶ, 14:
175 Յովհ. ԺԲ, 44:
176 Յովհ. Ա, 30:
177 Եզեկ. Ի, 40:

վելու է իր խաշինքը և իր բազուկների մեջ հավաքելու է իր գառներին, իր գիրկն է ընդունելու նրանց և միսիթարիչ է լինելու ծանր հղիներին: Ո՞վ է չափել իր ափով բոլոր ջրերը կամ ով է չափել երկինքը իր թիզով և երկիրը իր թիլով: Ով դրեց լեռները կշեռքի վրա և դաշտերը հաշվեց կշիռով: Ով գիտեցավ Տիրոջ միտքը կամ ով եղավ նրան խորհրդակից»[178]:

428. Իսկ ի՞նչ է այն, որ ասում է, թե՝ «ելիր բարձր լեռան վրա, ով Սիոնի ավետարանիչ»[179], այլ ինչպես այն, որ ասում է, թե՝ «Տերը տվեց հրաման», բանզի տերունի հրամանները ամեն ինչից վեր են և բարձրյալի հրամանները վերևից են: Իսկ ի՞նչ է ավելի բարձր և հաստատուն, բան Աստվածության հրամանը: Աստվածության քարոզիչները ելան նույն հրամանների բարձր լեռը՝ բոլորի առջև անվեհեր բարոզելու առանց վախի կամ երկյուղի:

[Հովհաննեսը տալիս է բահանայությունը, օծությունը, մարգարեությունը և թագավորությունը մեր Տեր Հիսուս Քրիստոսին]

429. Այդ, եկավ և մեծն Հովհաննեսը, Զաքարիա բահանայապետի որդին: Ապա եկավ տաճարակիցը, որը օտար մեկը չէի: Այստեղ էր Սիոնի ժառանգորդը և բնակիչը, որը նույն վակասակիր բահանայությունից է, խույր կրողը ի պատիվ պատմանի սրբության և պատվիրանների ավանդակիրը: Նա օտարամուտ մեկը չէր, այլ վայելուչ գոտի կապողը, Մովսեսի շառավիղը, Ահարոնի զավակը և Սիոնի ավետարանիչը, օծության արժանին, որն առել էր նախնիների բահանայության պատիվը: Եվ կատարելով մարգարեների գուշակությունը, ելավ անապատ, ըստ լեռնականներին տրված աստվածային հրամանների, Երուսաղեմի ավետարանիչը բարձրացավ և բարձրացրեց ձայնը, բանզի սա աղաղակի ձայնն էր անապատում և ասում էր՝ «ահա մեր Աստվածը և Տերը»[180] և նույնը Իսրայելի թագավոր է:

430. Այդ, իսրայելական ազգի ավանդության մարգարեության ամբողջ շնորհը, որ կրում էր ավետիսների օրինության և օծման ավանդապահը, ինչպես նաև բահանայությունը թագավորությամբ հանդերձ [նրան] էր հանձնված Ղևիի տոհմի միջոցով:

431. Քանզի այն ժամանակ, երբ Տերը եանչեց Մովսեսին հրի և ամպի միջից, Սինա (Սինեական) լեռան գլխին Տիրոջ փառքի տեսիլքը որպես հուր վառվում էր, և երբ Մովսես Աստուծո ձեռքից առավ օրենքների պատվիրանը ու տեսավ, որ Աստված բարյացակամ է նրան տված իր պատասխանների նկատմամբ, բանզի ասում է՝ «Գթած եմ և ողորմած», ապա նա առավ իշխանության ավանդությունը՝ բահանայությունը, թագավորությունը և մարգարեությունը Աստուծո ձեռքից: Նա նրան մի օրինակ տվեց Քրիստոսի օծման, որպեսզի նախ առակներն իրականանան և ապա գա ճշմարտությունը՝ Նա որ է: Ապա նա հրամայեց առնել օծման եղջյուրը և խունկի բուրվառը:

432. Եղջյուրը օրինակն է Քրիստոսի օծման և խնկանոցը՝ օրինակը սուրբ կույս Մարիամի: Քանզի ինչպես նա լի էր սրբության հոտով, նույնպես և կույսը՝ սուրբ Հոգով և Բարձրյալի զորությամբ: Իսկ ձեթի եղջյուրը նմանությունն ուներ Քրիստոսի օծման, բանզի ովքեր մեկ անգամ նրա նման օծվել էին, նրանից էին օծվել: Հոտի և Ահարոնն էլ օծվեց Տիրոջ բահանայության, առավ բահանայության թագը, որ նույն ձևով ինքն էլ օծի, խույրի փաթթոց (արտախուրակ) դնի, որպեսզի Տիրոջ սրբությունը պաշտեն, սեղանին հանապազօր հաց կարգեն, որը Աստվածության մարմնի օրինակն է:

433. Այդտեղ Մովսես իր օծման արծաթ եղջյուրը պատրաստեց, որից օծվում էին բահանաները, մարգարեները և թագավորները: Ապա կարգով մեկ առ մեկ, ըստ իշխանության պատվիրանի հրամանի, հերթով գալիս էր ըստ ավագության: Խորհուրդը պահպանված էր Աբրահամի սերնդի մեջ, բանզի նրանք ավանդությունը պահելով իրար փոխանցեցին մինչև Հովհաննես՝ բահանան, մարգարեն և մկրտիչը: Նրան հասնելով իբրև ժառանգի նրա մոտ մնաց: Նրան էր հասել առաջին նախնիներից, թագավորներից, մարգարեներից և օծյալ բահանաներից, որպես ավանդապահի: Իսկ նա տվեց բահանայությունը, օծությունը, մարգարեությունը և թագավորությունը մեր Տեր Հիսուս Քրիստոսին:

434. Եվ կատարվեց Հակոբի մարգարեությունը ասելով իր ազգի որդիներին, թե՝ «մի պակասեցրեք իշխանության տիրապետումը, մինչև որ գա նա, որին է թագավորությունը, բանզի նա է հեթանոսների հույսը»[181]:

(Շարունակելի)

[178] Նա. Խ, 9—14:
[179] Յովհան Բ, 1:
[180] Նա. Խ, 10:
[181] Ծննդ. ԽԹ, 10:



ՄԱՆՅԱ ՂԱԶԱՐՅԱՆ

ՍՏԵՓԱՆՈՍ ԼԵՀԱՑԻ

Ս. Էջմիածնի Մայր տաճարի եկեղեցական արվեստի թանգարանի առաջին սրահում ուշադրություն է գրավում կարմիր թավշի վրա մարգարտակար ընդելուզված մի թագ: Ուռուցիկ մասի վրա ոսկեթել ասեղնագործված առաքյալների անհատականացված դեմքերը, կարմիր ֆոնի և դեղնա-սպիտակագույն մարգարիտների երանգների զուգորդումը, թագի ողջ կոմպոզիցիայի ճաշակով կառուցումը 17-րդ դարի հայ արհեստավորների վարպետության վկայություններն են: Թագը կրել է 17-րդ դարի նշանավոր գիտնական ու նկարիչ Մայր Աթոռի միաբան Ստեփանոս վարդապետ Լեհացին:

Վեհարանում պահպանվում է ս. Գրիգոր Լուսավորչի աջի պահարանը՝ արծաթից, Լուսավորչի կյանքի որոշ տեսարանների նուրբ դրվագումով:

Պահարանն ունի հետևյալ արձանագրությունը.

Յաւուրս մեծի Հայրապետի
Ջուղայեցի Տեառն Յակոբի,
Թիւն Հայոց ըստ տումարի,
ՌՃԶ ամի.
Ի յիշատակ Ստեփաննոս
Իլովացի վարդապետի
Նոր պահարան Աջոյ ձեռին
Սուրբ Գրիգորի Լուսաւորչի
Կազմեալ եղև Էջմիածնի,
Առ 'ի պանծանս Հայկայ զարմի[1]:

Թանգարանային հետաքրքրություն ներկայացնող կիրառական արվեստի այս երկու աշխատանքները կապվում են Ստեփանոս Լեհացու (Իլովացու) անվան հետ:

Հայ արվեստի պատմության մեջ առանձնակի տեղ է գրավում 17-րդ դարի Լվովի գաղթօջախը:

16-րդ դարի վերջերից, քաղաքական-հասարակական ու տնտեսական նոր հարաբերությունների, ինչպես նաև աշխարհագրական դիրքի շնորհիվ, Լվովը դառնում է բազմազգ (լեհեր, ուկրաինացիներ, հայեր և այլք) մտավոր կենտրոն: Գաղթօջախի բարեկեցիկ կյանքում նշանակալից է հայ վաճառականների դերը, որոնց կապերը հասնում էին Հնդկաստան, Հոլանդիա, Ստամբուլ, Վենետիկ: Հայ վաճառականները արևելյան երկրներից Լվով էին

[1] Գրիգոր Լուսավորչի աջի պահարանի դաստակին ամրացված էր ակնազարդ ապարանջան: Երկրորդ ապարանջանը նույնպես ոսկուց էր՝ ընդելուզված վարդաձև երեք հակինթներով: 1770 թ. նվիրաբերել էր Թիֆլիսեցի Շաշինի մայր Մարիամը: Տես՝ **Յովհ. եպիսկ. Շահխաթունեանց**, Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Արարատայ, հատոր Ա, Վաղարշապատ, 1942, էջ 69:

ներմուծում գորգեր, գոտիներ, թամբաձաձեր, ռազմական հանդերձանք և այլն: Հայ վանականները տիրապետում էին մի բանի լեզուների: Նրանց ապրանքների ջուցակում զգալի տեղ էր գրավում տեղի

Ստեփանոս Լեհացի. Ս. Թադեոս առաքյալ

հայ արհեստավորների աշխատանքը. գոտիներ, կոնակներ, պատյաններ, ոսկերչական ու ասեղնագործ իրեր: Նշանավոր է հատկապես հայերի ավանդ Ռեչ-Պոսպոլիտեի կիրառական արվեստում. ոսկերչությունը (հատբարության ավագանիներից էին Գրիգոր Լուտիկովիչը (1678 թ.) և Ներսես Մոյսեսովիչը (1685 թ.)), ոսկու դրվագման տեխնիկան, այծի կամ ոչխարի մորթու մշակումը (սեկ և կորդեբան) հայերը Լվով ներմուծեցին նշանավոր Սլուցկու գոտիները (Լևոն և Հակոբ Մաջարսկիների ֆաբրիկան) և այլն:

Լվովում հայերը գրավում էին նաև զանազան պաշտոններ. նշանակվում էին դեսպաններ, պալատական բարտուղարներ: Նրանք մասնակցել են նաև 1679 թ. նշանավոր արհեստավորների ապստամբությանը:

Քաղաքի ս. Աննայի հայկական եկեղեցուն կից գործում էր բազմակողմանի գիտություններ ուսումնասիրող դպրոցը, որտեղ միսիոնարներ Կ. Գալյանոն և Մ. Պիդուն բեմադրում են «Սբ. Հռիփսիմեի ողբերգությունը» և «Սբ. Պոլիխրոնիայի մասին» դրամաներ (1668—1669): 1616 թ. Լվովում հիմնադրվում է հայ հնագույն տպարաններից մեկը: 1619 թ. Ղազար Բաբերդցու կողմից նկարազարդվում է ժամանակի արվեստի հետաքրքիր կնիքը կրող Աստվածաշունչը (Մատենադարան, ձեռ. № 351), որտեղ տնական առանձնահատկությունների ինքնատիպությունը զուգորդվել է պոետական ազատությանը (Հովհաննի հայտնությունում օգտագործված են Ա. Դյուրերի «Ապոկալիպսիսի» համար արված փորագրությունները): Լվովի հայկական մշակույթի կազմավորմանը իրենց մասնակցությունն են բերել բանաստեղծներ Շիմոն Շիմոնովիչը, Ղազար Թոխատեցին, Մինաս Թոխատեցին: Լվովահայերի գրադարաններում կային Նարեկացու, Ներսես Շնորհալու ձեռագրերը, Արիստոտելի, Կիկերոնի, Լուկիանոսի, Փլաբիոսի, Տացիտոսի, Ռոտերդամցու աշխատությունները: Ազգաբնակչությունը հետաքրքրվում էր գրականությամբ, լեզուներով, երաժշտությամբ, կերպարվեստով (17-րդ դարի կեսերին ապրող հայ վանական Սլոնիկովսկին 78 լեզու գիտեր):

Եվ պատահական չէ, որ 17-րդ դարի Լվովի հայկական գաղթօջախը տվեց նաև այնօրինակ գիտնական ու նկարիչ, ինչպիսին Ստեփանոս Լեհացին էր:

Ծնվել էր Լվովում (Լեմբերգ, Իլով), հավանաբար 17-րդ դ. առաջին տասնամյակում: Ավետարաններից մեկի (ընդօրինակված 1661 թ., Էջմիածնում), որը Ստեփանոս Լեհացին նվիրաբերել է Լվովի ս. Աստվածածին եկեղեցուն, հիշատակարանում գրել է. «...'ի յիշատակ ինձ և ծնողաց իմոց, ոօրն՝ Պր Վարդանին և մօրն՝ Կատարինեայ»[2]: Այդ մասին երկու հիշատակարան է նշում ճ. Ղ. Ալիշանը, որոնցից մեկում գրում է. «Ստեփանոս Լեհացի յազատ տանէ Վարդանենց Լէօպոլսեցի», իսկ երկրորդում՝ «Ստեփաննոս Լէօպոլսեցի վարդապետն Լեհացի, յազատ տանէ Պերնադովեանց»[3]: Նշանակում է, Ստեփանոս Լեհացին Լվովի նշանավոր Բերնադովիչների բազմարնտանիք ազգից էր: Բերնադովիչների անվանը հանդիպում ենք 16-րդ դարից, որպես տեղի հայերի կառավարիչ, թագավորի անձնական բարտուղար, խորհրդական, դատարանի ավագանի (Քրիշտոֆ Ալեդիկի Բերնադովիչը, Հակոբ Թեոդորի Բերնադովիչը և այլք):

[2] **Հ. Ղևոնդ Ալիշան,** Կամենից. տարեգիրք հայոց Լեհաստանի եւ Ռումենիոյ յառաջնակ յանկուածովք: Վենետիկ, 1896, էջ 140, 143—144:

[3] Նույն տեղում, էջ 193:

Լեհացու ժամանակակից Առաքել Դավրիժեցին նրա մասին գրում է. «ծնողք Ստեփաննոսիս՝ վասն բարեպաշտութեան և ուղղափառութեան, հանեալ զսա յԻլովայ՝ առաքեցին ի Սուրբ Աթոռն Էջմիածին»[4]: Լեհացին Էջմիածին է եկել 1646 թ.[5], Լվովում որոշակի կրթություն ձեռք բերած, քանի որ, ըստ Դավրիժեցու «ի տիս տղայութեան իւրոյ վարժեցաւ ի դպրատունս Իլովացւոց և լեզուաւն Լատինացւոց, և ուսաւ զարուեստ քերականութեան և զարտաքին գիրս փիլիսոփայից»[6], իսկ հ. Մ. Չամչյանը վկայում է. «վարժեալ և կրթեալ 'ի լեզու լատինացւոց, ևս և յուսումն պէսպէս իմաստից»[7]:

Էջմիածնում, նոր միջավայրում, շնորհաշատ երիտասարդը կարողանում է ինքնուրույն բազմակողմանի զարգացում ստանալ և իրեն դրսևորել մի շարք բնագավառներում:

«Եւ յորժամ եհաս Ստեփաննոս յԷջմիածին, ուսաւ զլեզու և զգիր Հայոց, և ի բերան էառ զսաղմոս և զշարական և զայլ եկեղեցական ուսմունս:

Այնուհետև սկսաւ ընթեռնուլ զԱստուածաշունչ գիրս և զերկոտասան վարդապետաց, և զփիլիսոփայից. և վասն զի յառաջմէ գիտէր զլեզու և զգիրս Լատինացւոց, յետոյ ուսաւ և զմերս, և զերկոսեանն առ միմեանս համեմատելով խոկայր ի նոյնն և մտավարժէր, վասն որոյ առաւելաւ քան զայլս ընկերս իւր. այլ և էր մտօքն սուր և ծննդական, առնող և պահող և միշտ ընթերցող և վարուքն մաքրակենցաղ և պարկեշտ»—գրում է Ա. Դավրիժեցին[8]:

Պահպանված տեղեկություններից պարզ է դառնում նաև, որ նա «օր ըստ օրէ վարժէր և կոթէր զանձն ուսմամբ, և պարկեշտ վարուք»[9]: 1652 թ. նա դեռևս քահանա է («Այլ և գրոհի սկզբնաւոր բանից գլխոց կարմրադեղով՝ Տեառն Ստեփաննոսի հոգիոնկալ քահանայի և իմաստից պատուպողի՝ համագաւառաւ գրոցս գծողի»[10]), իսկ 1653—1656 թթ. ընթացքում, բարձր գնահատելով նրա գիտելիքներն ու «զմաքրութիւն վարուց», Փիլիպոս կաթողիկոսը նրան ձեռնադրում է վարդապետ[11]: Ստեփաննոս Լեհացին 1673 թ. «Վերակացու և

Ստեփաննոս Լեհացի. Ս. Շմավոն առաքյալ

գանձապահ էր»[12], «Եւ էր տեղապահ ի Սուրբ Էջմիածնի»[13], «աթոռակալ եղև Յակոբջան կաթուղիկոսի Դ, և տեղապահ յետ մահուան նորա»[14]: Կատարում էր վանքի հետ կապված զանազան հանձնարարություններ, քանի որ, ինչպես վկայում է Զաքարիա Ագուլեցին, 1669 թ. մայիսի 12-ին աթոռակալ Միքայել վարդապետի հետ Ագուլիսում 5 օր մնում է նաև «լեյիցի ընՍտէփանոս վարդապետն»[15]: 1662 թ.

---

[4] Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ: Վաղարշապատ, 1896, էջ 407:

[5] Լվովի պետական կենտրոնական պատմական արխիվ, Հայկական ռեեստրների գիրք, հատոր 778, էջ 106—107:

[6] Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 407:

[7] **Միքայել վրդ. Չամչեան**, Պատմութիւն հայոց, հատոր Գ, Վենետիկ, 1786, էջ 620:

[8] Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 406:

[9] Նույն տեղում:

[10] Ս. Էջմիածնի գրադարան, «Արարատ», 1888, հուլիս, էջ 418:

[11] Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ, Վաղարշապատ, 1896, էջ 408:

[12] **Գայուստ Տեր-Մկրտչյան**, Հայկականք, «Արարատ», 1899, օգոստոս, էջ 355:

[13] Զաքարեայ սարկաւագի Քանաքեռցի պատմագրութիւն, հատոր երրորդ, Վաղարշապատ, 1870, էջ 37:

[14] **Հ. Ղ. Մ.**, Ճառ ընթերցեալ ի հայկական ճեմարանիս. Տեսութիւն 'ի գանձ Լեզուին Հայոց կամ 'ի Ստեփանեան բառարան, «Բազմավէպ», Վենետիկ, 1852, մարտ, էջ 88:

[15] Զաքարիա Ագուլեցու օրագրությունը, Երևան, 1938, էջ 85:

նունիսի 6-ին Էջմիածին է գալիս լատին միսիոնար եպիսկոպոս Պալուն, որն իր նոթագրություններում պահպանել է շատ արժեքավոր հիշատակություն. «Ոսկան անունով հայաստանցի եպիսկոպոս, որ շատ հավատացյալ կաթոլիկ է, Ստեփանոս անուն հերձվածող լեհ կրոնավորի մը հետ, դուռը եկավ մեզ ընդունելու համար. հայր Ստեփանոս լատիներեն լեզվով բարի գալուստ մաղթեց մեզի: Կաթողիկոսի հետ տեսակցության ժամանակ թարգմանի պաշտոն էր կատարում դարձյալ Ստեփանոս»[16]:

Այսօրինակ պաշտոնական ծանրաբեռնվածության հետ, Ստեփանոս Լեհացին զբաղվում էր նաև թարգմանությամբ, մեկնություններով, արվեստի հարցերով և նկարչությամբ: Ի մի բերելով զանազան աղբյուրներում եղած հիշատակությունները[17], հնարավոր է դառնում դասակարգել Ստեփանոս Լեհացու գրական գործերի ցուցակը, որոնց զգալի մասը տպագրվել է ինչպես հեղինակի կենդանության օրոք, նույնպես և նրա մահից հետո:

Գիրք պատմութեանց Յովսէպոսի Երրայեցւոյ արարեալ յաղագս Պատերազմի Հրէից ընդ Հռովմայեցիս և աւերման Երուսաղեմի, 1660, Էջմիածին: Մատենադարան, ձեռ. № 1909: Տպագրվել է. Էջմիածին, 1787:

Հայելի վարուց, որ կոչի ֆրանկաց Հարանց վարք, 1660, Էջմիածին: Մատենադարան, ձեռ. № 7004: Տպագրվել է. Կ. Պոլիս, 1702:

Դիոնէսիոս Արիսպագացու Մատենագրութիւնք: Գրիչը՝ նույն ինքը թարգմանիչը, Էջմիածին, 1662: Մատենադարան, ձեռ. № 5171:

Համառօտ հաւաքումն յաղագս հոգւոյ, յաղագս հրեշտակաց, 1670—1671, Էջմիածին: Մատենադարան, ձեռ. № 3499:

Բուրաստան աղօթից, Էջմիածին, 1673 թ. առաջ: Մատենադարան, ձեռ. № 553: Տպագրվել է. Վենետիկ, 1685:

Իմաստութիւն Յեսուայ Որդւոյ Սիրաքայ, Ագուլիս, 1668: Մատենադարան, ձեռ. № 705:

Ի գրոց պատճառաց Արիստոտելի կամ ոմանց թուի Պրոկղի, Էջմիածին, 1660—1662: Տպագրված է Կ. Պոլիս, 1750:

«Գիրք օրինաց» Հազարացւոց կամ Իսմայելացւոց որ կոչի **Ղուրան:** Տպագրված է. Թիֆլիս, 1863:

Գիրք բնազանցական Արիստոտելի և լուծմունք նորին ի Լեհացի Ստեփանոսի բանասիրէ, Մատենադարան, ձեռ. № 3844:

Բանք իմաստասիրականս և աստուածաբանականք համառօտաբար իբր սահմանօրէն արտադրեալք և հաւաքեալք ըստ այբուբենից՝ աշխատութեամբ Լեհեցի Ստեփանոսի բանասիրի, 1680, Մատենադարան, ձեռ. № 5074:

Ինչպես տեսնում ենք, Ստեփանոս Լեհացին թարգմանություններ է կատարում լատիներենից (ըստ ոմանց՝ նաև լեհերենից), կատարում է «գաղափարակիցների խնդրանքով», վերաթարգմանում է նախկինում կատարված որոշ գործեր: Դավանաբանական հետաքրքրությունները Ստեփանոս Լեհացու մոտ զուգակցված են փիլիսոփայական աշխարհընկալումներին, որը և դրվում է նրա նշանավոր **«Բանք»**-ի հիմքում:

«Բանքը», ինչպես նշում է հեղինակը, և՛ սեփական մեկնություններ են, և՛ փոխառյալ՝ հավաքված այլ աշխատություններից: Սակայն ողջ շարադրանքում զգացվում է հեղինակի ակտիվ վերաբերմունքը, նրա փիլիսոփայական կողմնորոշումը: Նրա մոտ իրը, շարժումը, տարածությունը, ժամանակը հասկացություններ են, որոնք ըստ էության կարևոր տեղ են գրավում ոչ միայն նրա փիլիսոփայական, այլև գեղագիտական աշխարհընկալումներում: «Արուեստը»՝ մարմնական ծառայության արվեստ և հոգուն ծառայող («ազատ») արվեստ: «Արուեստ որ կարգաւորի առ գործ բանականին, ասի ազատական, իսկ որ կարգաւորի առ գործ մարմնոյ, կոչի ծառայական»[18]: Եթե Արիստոտելի «Մետաֆիզիկայի» թարգմանության ժամանակ և նրա մեկնաբանություններում նա հանդես է գալիս որպես փիլիսոփա-թարգմանիչ, ապա նույն դիրքորոշումը նա պահպանում է նաև «Բանք»-ում, իրեն դրսևորելով արդեն որպես գեղագետ-փիլիսոփա, հատկապես «Արուեստ» և «Պատկեր» բառերում: Եզակետն այս է. թոլոր գոյությունն ունեցողը առաջացել է Աստծուց, որը ստեղծել է առարկայական աշխարհն ու մարդուն: Մարդու մտածողության կարողությունը կապակցվում է առարկայական աշխարհին: Բնությունը երկրորդական է

[16] **Գարեգին արքեպ. Հովսեփյան,** Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Ե, Անթիլիաս-Լիբանան, 1951:

[17] **Հայր Ներսես Ակինյան,** Ստեփանոս վարդապետ Լեհացի, «Հանդես ամսօրյա», Վիեննա, 1912, № 1—2: Ցուցակ ձեռագրաց Մաշտոցի անվան Մատենադարանի, հ. Ա, Երևան, 1965, հ. Բ., Երևան, 1970, ինչպես նաև Մատենադարանի ձեռագրային ֆոնդ:

[18] «Բանք», Մատենադարան, ձեռ. № 5074, էջ 394-ի ետևը և 395:

Աստծո համեմատ և առաջնային՝ մարդու մտածողության մեջ[19]: Միաժամանակ, Լեհացու մոտ «Արուեստը» և՛ կերպարվեստ է, և՛ արհեստ: Դա հասկանալի է ու արդարացված այն իրավիճակով, որ գոյություն ուներ 17-րդ դարի հայ մշակույթում: Բուոն զարգացում էին ապրում կիրառական արվեստի զանազան ճյուղերը՝ գորգագործությունը, ասեղնագործությունը, ոսկերչությունը, ակնագործությունը, դաջագործությունը, քարի ու փայտի գեղարվեստական փորագրությունները, որոնք դիտվում էին արհեստավորության շրջանակներում: Դեռևս արհեստ էր համարվում նաև նկարչի աշխատանքը, չնայած կերպարվեստն ապրում էր վերափոխման շրջան: Արվեստը ստանում է աշխարհիկ բովանդակություն, առաջանում են նոր ժանրեր (դիմանկար, թեմատիկ պատկեր, բնանկարի ու նատյուրմորտի թույլ օրինակներ), հիմնադրվում է հաստոցային նկարչությունը (նկարը կտրվում է պատից, լայն տապածում է ստանում փայտի, մետաղի կամ կտավի վրա նկարվածը), նկարիչն իրեն անվանում է «պատկերահան», առաջանում է նոր մասնագիտություն՝ տպագիր գիրքը նկարազարդող նկարիչ, արվեստագետը բարձր գնահատություն է ստանում հասարակական կյանքում և այլն: Միաժամանակ, նկարչության բնագավառում պահպանվում է արհեստավորական, համքարական ինստիտուտը՝ շատ հաճախ նույն ընտանիքի անդամների համախմբման սահմաններում: Օրինակ. Հովնաթանյանները (Կովկաս), Բոգուշները (Լվով), Մուսավիրները (Սիրիա), Մանասեները (Կ. Պոլիս), Հաննա Երուսաղեմցին ու իր որդի Հովսեփը (Եգիպտոս) և այլք: Ավելին՝ նկարիչները ձգտում են մասնագիտական կրթություն ստանալ: Օրինակ. Մինաս նկարիչը Նոր Ջուղայից մեկնում է Հալեպ (Բերա), սովորում է հալաբաբար հայազգի Մոսավիր Յուսուֆի մոտ, որը դեռևս արհեստավորության շրջանակներում կատարելագործվելու օրինակ է:

Ստեփանոս Լեհացին երևույթների վրա նայում է ռեալ իրականության առաջնությունը հաստատող դիրքերից, այսինքն՝ արվեստի յուրաքանչյուր գործ պետք է որոշակի գաղափար կրի, իր մեջ պետք է խտացնի որևէ երևույթի գաղափարը: Այստեղից էլ՝ արվեստն ունի ճանաչողական նշանակություն և երևան է բերում իրերի էությունն ու նրանց իրական ճշմարտությունը («Արուեստէ ուղիղ բան առնելոյ, և ունակութիւն ներգործական»)[20]: Դրա հետ միասին, Լեհացին գտնում է, որ արվեստը բարի գործ է կատարում, քանի որ կյանքի ճշմարտության ցուցադրումը ազդում է մարդու զգացողության վրա[21] («Արուեստ միշտ է առ բարի որպէս հոգետութիւն: Իսկ որ ինչ յինքեանէ կարգաւորի առ չար, ոչ է արուեստ»[22]): Դա էլ իր հերթին կրթում, ազնվացնում է մարդուն: Պատկերի հիմքը տեսողական է, նշանակում է բնության նմանությունը, ճշմարտությունը, նրա իմացությունը, ինչպես նաև հիշողությունը, տրամաբանությունը և կամքը կազմում են ստեղծագործական պրոցեսը («Նմանութիւն առ բնութիւն... ճանաչումն ճշմարտութիւն... զորութիւնս,... յիշողականութիւն. և իմացողականութիւն և առ կամս»[23]): Գեղեցիկն էլ կապված է տեսողության և լսողության հետ[24], իսկ գեղեցիկ իրերը հաճույք են պատճառում զգացողությանը[25]: «Բանք»-ի կազմողը արվեստին հաղորդակից մարդ է, նրա փիլիսոփայությունը 17-րդ դարի հասարակական մտքի կազմավորման մեջ գիտակցող անձնավորություն:

Ստեփանոս Լեհացու նկարչությամբ զբաղվելու մասին ուշագրավ տողեր են պահպանվել դեռևս 1652 թ. Մկրտիչ Լեհացու կողմից ընդօրինակված Սաղմոսի հիշատակարանում. «Այլ և գրողի սկզբնագիր բանից գլխոց կարմրադեղով Տեառն Ստեփանոսի հոգեընկալ քահանայի և ի՛աստից պարապողին՝ համագաւառաւ գրոցս գծողի»: 1653—1656 թթ. պատրաստված Ճաշոցի հիշատակարանում կարդում ենք. «Գրեցաւ ձեռամբ Ստեփանոսի քահանայի և ծաղկափթիթ զարդարեցաւ Ալեքսանիոսիւ եւ Նահապետիւ արուեստաւորաք. Հոգացողութեամբ եւ սատարութեամբ Ստեփանոսի վարդապետի»[26]: Ստեփանոս Լեհացին որպես գրիչ ու ծաղկող է հանդես գալիս նաև «Դիոնեսիոս Արիսպագացու Մատենագրութիւնը» թարգմանական գրքում: Նա հանդես է բերում էջի ձևավորման կառուցվածքի հմտություն, լուսանցազարդերում, գլխազարդերում և սկզբնազարդերում ունի գծի ու գույնի ներդաշնա-

[19] В. К. Чалоян, История армянской философии, Ереван, 1959, стр. 319—333.

[20] «Բանք», Մատենադարան, ձեռ. № 5074, էջ 394-ի ետևը: Նույնը տես Мастера искусств об искусстве, том 6, Москва, 1969, стр. 59—61.

[21] Նույն տեղում, էջ 395:

[22] Նույն տեղում:

[23] Նույն տեղում, էջ 452:

[24] Նույն տեղում, էջ 399-ի ետևը:

[25] Նույն տեղում, էջ 400:

[26] Մատենադարան, Հարություն Աբրահամյանի արխիվ, թղթ. 98, վավ. 18ա: Նույնը՝ «Արարատ», Վաղարշապատ, 1888, հուլիս, էջ 418, 420:

կության զգացողություն: Լեհացին նույնիսկ հեռանում է մանրանկարչության կանոնիկ սկզբունքներից և ջրաներկով ստեղծում ծաղկանկար մի վերջնազարդ, որի վրա զգացվում է ժամանակի դեկորատիվ արվեստի ազդեցությունը (Մատենադարան, ձեռ. № 5177, էջ 465): Լվովի ս. Աստվածածին եկեղեցուն նվիրաբերած Ավետարանի (1661) հիշատակարանում Լեհացին գրում է. «...կարողացոյց զտկարս և զօրացոյց զի բարեաց վերջնոտնեալս զՍտեփանոս Իլովացի, հուսկ յետինս ի բանասիրաց, գծագրել մատամբ իմով զերանելապարփակ և զամենատարփակ մատեանս, զչորեքծագեան տիեզերաց համաբարոզ տառս... ոսկէնկարէնս իմն տեսակաւ զարդարեալ ետու գեղապանոյն արարեալ ի գոյնս վայելուչս, երանգազան որակօք երփնազարդեալ ըստ արհեստից յօրինմամբ. և բոլորապէս ի կատարումն ածի...»[27]: Գ. Հովսեփյանը բերում է Ստեփանոս Լեհացու աշակերտ Ներսես սարկավագի հիշատակությունը (1662 թ. ձեռագրում), որտեղ գրված է նաև հիշել «և զուսուցիչն իմ և զվարժիչն զՍտեփանոս Իլովատի բաջ հռետոր և թարգմանիչ բարուցին, որ էր այլ լի շնորհօք և հանճարով և սրբեալ հոգւով սրբով. զի հանապազ ըստ աստուածատուր պարգևօր զա(մենայն) եղբայր կատարելագործէր փիլիսոփայական կրթութեամբ»[28]:

Ստեփանոս Լեհացի. Առաքյալ

Նկարչության հանդեպ ունեցած Ստեփանոս Լեհացու հետաքրքրությունները չեն սահմանափակվել ձեռագրերի ձևավորումներով: Էջմիածնի վանքում նա կատարել է նաև որմնանկարներ ու հաստոցային գործեր: Այդ մասին առաջին հիմնավոր հիշատակությունը պատկանում է Հ. Շահխաթունյանցին, որը գրում է. «Յամենեսին ի սուսա (Էջմիածնի նկարների շարքում—Մ. Ղ.) բաջապէս փայլին շնորհք ձեռաց մեծանուն վարդապետին Ստեփանոսի Լեհացւոյ և բաջ նկարիչին հօր Յովնաթանու»[29]: «Հօր Յովնաթանու» ասելով Հ. Շահխաթունյանցը նկատի ունի Հովնաթանյան նկարչական տոհմի հիմնադիր Նաղաշ Հովնաթանին: Գ. Լևոնյանը վերոհիշյալ արտահայտությունը համարում է թյուրիմացություն և անախրոնիզմ, բանի որ, ըստ Լևոնյանի, Լեհացին ու Նաղաշ Հովնաթանյանը միասին չեն ստեղծագործել ու նույն ժամանակ չեն ապրել[30]: Սակայն Հ. Շահխաթունյանցն այն հեղինակը չէ, որ կարող էր այդօրինակ անճշտություն թույլ տալ: Նրա նախադասությունը կարող է երկակի բացատրություն ունենալ.

ա) Պատմագիրը նկատի ունի այն նկարները, որոնք 19-րդ դարի 1-ին կեսում դեռևս զարդարում էին Էջմիածնի տաճարը, և որոնց մեջ առանձնապես նշանակալի էին Լեհացու և Նաղաշ Հովնաթանի գործերը: Անունները ավանդաբար հասել էին Շահխաթունյանցին:

բ) Ավանդություն կարող էր լինել նաև այն, որ Ստեփանոս Լեհացին ու Նաղաշ Հովնաթանը միասին աշխատել են վան-

[27] Հ. Ղ. Ալիշան, Կամենից. տարեգիրք հայոց Լեհաստանի և Հռոմենիոյ յաստաստեալ յաւելուածովք: Վենետիկ, 1896, էջ 193:

[28] Գարեգին արքեպ. Հովսեփյան, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության, պրակ Ե. Անթիլիաս-Լիբանան, 1951: Գ. Հովսեփյանը տեսել է Ստ. Լեհացու կողմից գրված և ծաղկազարդված մի ձեռագիր-խորհրդատետր (մոտավորապես 1668 թ.) նյուրբերգյան հնահավաք և գորգավաճառ Պարույրյանի մոտ: Նույն տեղում:

[29] Յովհ. եպիս. Շահխաթունեանց, Ստորագրութիւն կաթուղիկէ Էջմիածնի և հինգ գաւառացն Ա-թարատայ, հատոր Ա, Վաղարշապատ, 1842, էջ 45:

[30] Գարեգին Լևոնյան, Հովնաթանյան նաղաշները հայ նկարչության պատմության մեջ, «Խորհրդային արվեստ», Երևան, 1938, № 4, էջ 54:

քում: Դա ևս շատ հավանական ենթադրություն է:

Անդրադառնանք փաստերին:

Ստեփանոս Լեհացու մահվան մասին տարատեսակ կարծիքներ են հայտնվել: Հ. Մ. Չամչյանը գրում է, որ «Եւ ինքն լեալ իբր ութսուն ամաց, վախճանվեցաւ 'ի թուականութեանս հայոց ՌՃԽԸ (1699), փոքր մի յառաջ կամ ետոյ»[31]: Հ. Ղ. Ալիշանը առաջադրում է 1685 թ. (կասկածով) «Յետոյ բարի վարուք և ուղղափառութեամբ զկեանս իւր վճարեալ՝ հանգաւ ի Քրիստոս, մոտ յայսմ ամի»[32]: Հ. Շահխաթունյանցը առաջինը հրապարակեց Ստ. Լեհացու տապանաքարի արձանագրությունը[33], որը հետագայում տեղ գտավ մի շարք պատմա-բանասիրական աշխատություններում: Տեքստը որոշ ուղղումներով նորից հրապարակեց Ստեփանոս Լեհացուն առանձին հիմնավոր հոդված նվիրած հ. Ն. Ակինյանը[34]: Վերջինիս լույս ընծայումից անմիջապես հետո Կ. Բասմաջյանը հրապարակեց տապանագրի տեքստը (Հ. Շահխաթունյանցի ընթերցումից աննշան տարբերությամբ), նշելով նաև, որ Լեհացին թաղված է ս. Հռիփսիմե եկեղեցու պարսպից դուրս, միաբանների գերեզմանատանը: Տապանաքարը երկու կես էր եղել, բայց Բասմաջյանին հաջողվում է արձանագրությունն ընդօրինակել թղթի վրա, որից կաղապար է պատրաստել տալիս և նվիրում Սեն Ժերմենի թանգարանին (Ֆրանսիա): Ահա տապանագիրը.

Յա[յ]սմ կքիս նաւս եդ
եալ պահի մարմին
մաքուր վարդապետի
Անդրեաս ըստեփ
սննոսի որ էր տեղ
եաւ բնիկ լեհացի
անիւն ի (կուբ)ս այ
ս ընկրկի հազար
հարիւր ընդ երեսնի
կրկին բառիւ Կ թիւ
հայկազնի որք հան
դիպիք տուք զողորմի
Աստ եւ ձեզ ողորմեսցի[35]:

Բոլոր դեպքերում, 1689 թ. սկզբներին Ստեփանոս Լեհացին դեռևս ողջ էր, քանի որ Մատենադարանի ձեռագիր Ժողովածուում (ԺԸ դար, ձեռ. № 727) տեղադրված է «Հարցումն Ստ. Լեհացւոյ և պատասխանիք Յովհ. Ջուղայեցւոյ» («Անպիտան Յովհաննէս վարդապետի թուղթ առ Լեհացի Ստեփաննոս վարդապետ զոր գրեցաւ 'ի թվին ՌՃԼԸ (1689) յունվարի ԻԵ (25)», էջ 165—173): Մեկ այլ ժողովածուում հիշվում է, որ Ստեփանոս Լեհացին «...վախճանեցաւ ի թվին ՌՃԼԸ (1689)[36]:

Նաղաշ Հովնաթանը ծնվել է 1661 թ. Շոռոթում: Անցնելով Ագուլիսի վանքի դպրատան ուսումնառությունն ու իրեն դրսևորելով որպես շնորհալի երիտասարդ, որը բանաստեղծություններ էր գրում, երաժշտություն հորինում, երգում, ձեռագրեր ծաղկում, եկեղեցիներ նկարազարդում, 1679 թ. մեծ երկրաշարժից հետո հրավիրվում է Երևան՝ վերակառուցվող եկեղեցիները նկարազարդելու: Այդ ժամանակ էլ նա գրում է իր նշանավոր «Գովասանութիւն Երեւան քաղաքին» բանաստեղծությունը, որտեղ քննադատական արտահայտություններին համոզչականություն տալու նպատակով շեշտում է. «Նաղաշն Երևան շատ կացաւ»[37]: Հավանական է, որ հաճախ լինում էր Էջմիածնում: 1689 թ. նա արդեն 28 տարեկան էր: Շատ հավանական են նրա և Լեհացու հանդիպումներն Էջմիածնում մինչ այդ, քանի որ Երևանի եկեղեցիների ձևավորումները նա պետք է որ կատարեր շատ ավելի վաղ: Հավանաբար, Ստեփանոս Լեհացու ժամանակ ևս Նաղաշ Հովնաթանը որոշակի գործեր է կատարել Էջմիածնի եկեղեցում, որոնք կամ չեն պահպանվել, կամ մնացել են տաճարի պատերին հետագայում կատարված աշխատանքների տակ:

Ի՞նչ նկարներ է արել Ստեփանոս Լեհացին Էջմիածնի տաճարում:

Էջմիածնի տաճարի նկարներին առաջինն անդրադարձավ Գարեգին Հովսեփյանը, որը տաճարի հետին դասի արևմտյան խորանի տասներեք նկարները Ստեփանոս Լեհացուն վերագրելը նշում է, բայց խուսափում է վերջնական խոսք ասելուց[38]:

31 **Միքայել վրդ. Չամչեան**, Պատմութիւն հայոց, հատոր Գ, Վենետիկ, 1785, էջ 620:

32 **Հ. Ղ. Ալիշան**, Կամենից..., էջ 143—144:

33 **Յովհ. եպս. Շահխաթունեանց**, վերոհիշյալ աշխատությունը, էջ 271—272:

34 **Հ. Ն. Ակինյան**, Ստեփաննոս վրդ. Լեհացի, «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1912, հունվար, էջ 62—66, փետրվար-մարտ, էջ 147—154:

35 **Բասմաջեան Կ. Ց.**, Տապանագիրը Ստեփանոս վրդ. Լեհացւոյ: «Հանդէս ամսօրեայ», Վիեննա, 1912, հուլիս, էջ 424:

36 **Յակոբ Ց. Թոփճեան**, Ցուցակ ձեռագրաց Խաչիկ վարդապետի Դադեան: Ժողոված 1878—1898: Մասն Ա, Վաղարշապատ, 1898, էջ 92:

37 **Նաղաշ Հովնաթան**, Բանաստեղծություններ: Երևան, 1951, էջ 100:

38 **Գարեգին արքեպ. Հովսեփյան**, Նյութեր և ուսումնասիրություններ հայ արվեստի և մշակույթի պատմության: Անթիլիաս-Լիբանան, 1951, պրակ Ե:

Որո՞նք են այդ նկարները:

Սիմեոն Երևանցի կաթողիկոսի հանձնարարությամբ 1775 թ. կազմած «Դարբար և հաշուագիր անօթից և սպասուց սրբոյ և Միածնաիջի տանարի» ցուցակում նկարագրված 88 գործերի շարքում կարդում ենք. «Ի Ցետին դասն են այսք. ԺԳ պատկերք, որոնց ԺԲ-քն են Սուրբ Առաքելոցն, և մինն է թերանաատուիսն թոմայի, և ցուցանելն նմա տեառն զձեռս և զկող իւր:

Ստեփանոս Լեհացու գոհարազարդ թագը

Կախեալք են սոքա ի վերին կողմն մեծի դրան տաճարին ի ներսին կուսէ»[39]: Սրանց մասին Հ. Շահխաթունյանցը գրում է. «Եւ պատկերքն երկոտասան Առաքելոց՝ յորում է շօշափումն Թովմայի, դասաւորեալք 'ի կիսաշրջանակի այնդ կամարայարկին արևմտյան մեծի դրանն 'ի ներքին կողմանէ»[40]:

Նկարները պահպանվել են մինչև մեր օրերը[41]: Դրանք իրենց կատարման ոճով տարբերվում են Էջմիածնի տաճարի մյուս նկարներից: Տաճարի գեղանկարչական աշխատանքներում առկա են Նաղաշ Հովնաթանի, նրա որդիներ Հակոբ և Հարությունն Հովնաթանյանների, Հակոբի որդի՝ Հովնաթան Հովնաթանյանի, ինչպես նաև Հովնաթանյան տոհմի չորրորդ (Մկրտում) և հինգերորդ (Հակոբ) սերունդների նկարիչների գործերը: Հովնաթանյան տոհմի նկարչական արվեստին բնորոշ է արևելահայկական ինքնատիպ մի ոճ, որն ունի եվրոպական արվեստից եկող (հատկապես փորագրություններից) սյուժետային փոխառնում և մոդելավորման թույլ երանգ:

Ստեփանոս Լեհացուն վերագրվող տաճարներում առաքյալների դիմանկարները և «Թովմայի թերահավատությունը» նկարը ուշագրավ են պատկերի կառուցման յուրօրինակությամբ: Դիմանկարներում ֆիգուրները կտավի մեջ տեղադրված են ծնկներից, դիտողին մոտեցրած: Պատկերված են երեք դիրքով. աջ կամ ձախ թեքված, ինչպես նաև անֆաս: Նկարիչը մեծ տեղ տալով առաքյալների սիմվոլներին՝ գիրք, թուր, բանալի, գավազան, խաչ և այլն, ուշադրության կենտրոնում է պահում դեմքերն ու ձեռքերը: Տիպաժները կենսահաստատ են, «հայկականացված»: Հատկապես շեշտվում են զգեստների (թիկնոց, կապա և այլն) ծալքերը, որոնք իրենց ծավալներով ու գունային տարբերակներով որոշակի աշխուժություն են առաջացնում նկարների ընդհանուր զսպվածության մեջ: Մաքուր կանաչ, կապույտ, կարմիր գույների համադրություններն արված են խիստ մտածված, ծավալների ու լույսուստվերի որոշակի հարցեր լուծելու միտումով: Յուրաքանչյուր նկարի ձախի վերևում տեղադրված է առաքյալի անունը պարունակող գրություն (ՍԲ ԹԱԴԷՈՍ, ՍԲ ՊԵՏՐՈՍ և այլն): «Թովմայի թերահավատությունը» կտավում ուշագրավ է երկու կերպարների հոգեբանական համադրությունը. Քրիստոսը՝ գեղեցկադեմ, պարզ, մի փոքր ափսոսանքով լցված հայացքով, իսկ Թովման՝ ներքին ուժեղ մղումով գլուխն առաջ պարզած, հայկական բնորոշ դիմագծերով, սուր, թափանցող, թերահավատ, բայց և ճշմարտության փաստի առաջ կանգնած, ճշմարտությունը հասկացողի վախով լցված հայացքով:

Նկարների այս շարքը գեղարվեստական առնչություններ ունի Էջմիածնի տաճարի զանգակատան պատերի՝ մուտքի մոտ արված աշխատանքների հետ, որոնք ժամանակի ընթացքում վերանորոգվել են, բայց պահպանում են որոշակի պարզունակության կնիքը: Դա բնորոշ է 17-րդ դարի հայ կերպարվեստին, հատկապես նրա որմնանկարչությանը: Պետրոս առաքյալի կողքին պատկերված է շագանակագույն սյուն, որի վրա կանգնած է նրա ուրացումը մարմնավորող աքաղաղը: Աջից ցած իջնող կանաչ վարագույրը նույնպես հաստատում է ինչպես այս, նույնպես և դիմացի հատվածում պատկերած Պողոս առաքյալի կերպարավորման եվրոպական ազդեցությունը: Զանգակատունը կառուցվել է Անտոն Զեղեպիի ծախսով՝ Փիլիպոս կաթողիկոսի ժամանակ: Ա. Դավրիժեցին գտնում է, որ «գեղեցկազան նկարակերտութեամբ» արված կառույցը ստեղծվել է 1658 թ. «Թէպէտ ի վերայ նորին գրեալ թուականքն այլապէս են»[42]: Եվ իրոք: Զանգակատան արձանագրության մեջ կարդում ենք. «Ծնորհիւ Աստուծոյ և օժանդակութեամբ սրբազան Հայրապետացն Փիլիպոսի եւ Հակոբայ հրաշակերտեցաւ Զանգակատունս եւ ծաղկեցաւ ի թուականիս ՌՃԺԳ (1664)»: Արձանագրությունը վերաբերվում է զանգակատան նկարազարդմանը, որը ճշտում է Հ. Շահխաթունյանցը[43]: Ե՛վ առանձին դիմանկարները (Պողոսը ու Պետրոսը), և՛ քերովբեների պատկերումները, և՛ ընդհանուր ծաղկանկարները պետք է որ կատարված լինեն մի նկարչի ձեռքով ու նրա ղեկավարությամբ, որը հիրավի շնորհաշատ անձնավորություն էր և ամենակարևորը՝ նկարչության հետ կապված անձնավորություն: Դա Ստեփանոս Լեհացին է:

[39] Հրապարակել է Գ. Հովսեփյանը: Ս. Էջմիածնի տաճարի պատկերագրությունը Սիմէօն կաթողիկոսի ժամանակ: «Անահիտ», Փարիզ, 1911, № 3—4:

[40] Յովհ. եպիսկ. Շահխաթունեանց, վերոհիշյալ աշխատությունը, էջ 45:

[41] Պահպանվում են Էջմիածնի վանքի Վեհարանում և Հայաստանի պետական պատկերասրահում: Կտավ, յուղաներկ, 203×87:

[42] Պատմութիւն Առաքել վարդապետի Դաւրիժեցւոյ: Վաղարշապատ, 1884, էջ 263:

[43] Յովհ. եպիսկ. Շահխաթունեանց, վերոհիշյալ աշխատությունը, էջ 28:

Այսպիսին է «բաշ գիտնական և թարգմանիչ» (Ղ. Ալիշան) Ստեփանոս Լեհացու ժառանգությունը: Անհրաժեշտ ենք համարում ընդգծել նաև, որ մոռացության գրքից ու կրոնից պետք է փրկել Ստեփանոս Լեհացու գերեզմանն ու տապանաքարը:

Ստեփանոս Լեհացին իր մտածողությամբ ու գործունեությամբ կանգնած է 17-րդ դարի այնօրինակ մտավորականների շարքում, ինչպիսիք էին Առաքել Դավրիժեցին, Խաչատուր Կեսարացին, Սիմեոն Ջուղայեցին, Հովհաննես Ջուղայեցին, Նաղաշ Հովնաթանը, Ոսկան Երևանցին, Հովհաննես Մրքուզը, Հակոբ Ջուղայեցին, Եկարիչ Մինասը, Բաղդասար Դպիրն ու ուրիշներ:



ԳՐԱԽՈՍՈՒԹՅՈՒՆ

«ՑՐՈՒԱՑԱՆԿ (INDEX) «ԱԶԳԱՊԱՏՈՒՄ»Ի ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ

Պատրաստեց Տիրայր Ծայրագոյն վարդապետ (Տերվիշեան)
Միաբան Ուխտին Սրբոց Յակոբեանց Երուսաղէմի: Հրատարակութիւն Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութեան Ալեք Մանուկեան Մշակութային հիմնադրամի, 1976, Լոս Անճելոս», էջ 377:

«Ազգապատում»ը երկու հազար տարիներու պատմությունն է աշխարհի հնագույն քրիստոնյա ազգերեն մեկուն՝ հայ ժողովրդին:

«Ազգապատումը» փառապանծ հուշարձանն է մեր ժողովուրդի անմար հավատքին, ստեղծարար գործին, և խիզախ մաքառումներուն ի փառս Աստուծո և Հայաստանյայց Սուրբ եկեղեցիին և ի պարծանս Ամենայն Հայոց քրիստոսահիմն Հայրապետական Սուրբ Աթոռին:

ՎԱԶԳԵՆ Ա
Ծայրագույն Պատրիարք և կաթողիկոս Ամենայն Հայոց (գրված «Ազգապատում»ի երկրորդ հրատարակության առթիվ 1959 թ.):

«Ազգապատում»ը ոչ միայն ապրող գործ մըն է, այլ և ապրեցնող գործ մըն է:

Ս. Սիմոնյան
«Ազգապատում»ի երկրորդ հրատարակության գիտական հանձնախմբի կողմից:

Վերջերս իմ հարազատների մոտ հեռավոր Լոս Անջելոսում այցի գնալու առթիվ անսահմանորեն ուրախալի մի անակնկալ եղավ ինձ համար, երբ համեստագույն և տքնաջան աշխատասիրող հոգեշնորհ Տ. Տիրայր ծ. վ. Տերվիշյանից հատուկ ընծայականով մեծ հաճույքն ունեցա նվեր ստանալու իր իսկ կազմած Օրմանյանի կոթողային «Ազգապատում»ի անվանացանկի ստվար հատորը:

Այսպիսով իր լրումին է հասնում կարևորագույն մի գործ, որի անհրաժեշտությունը ավելի քան կես դար է, որ շատ զգալի էր եղել հայագիտության համար: Թե ինչքանով մեծ էր եղել այդ գործի պակասը, այդ երևում է նույն ուղղությամբ կատարված ապարդյուն փորձերի փաստով, և որոնց անդրադարձել է աշխատասիրողը իր գործի սկզբին զետեղած առաջաբանում: Այդ գրվածքից հայտնի է դառնում, որ «Ազգապատում»ի հատուկ անունների ցանկ պատրաստելու առաջին անհրաժեշտությունը և այդ ուղղությամբ կատարված առաջին փորձը պատկանել է նրա մեծանուն հեղինակին՝ Օրմանյանին: Երբ Տերվիշյան Ծ. Վարդապետը 1946—1948 թթ. տեսուչն է եղել Երուսաղեմի Սրբոց Հակոբյանց վանքի Կյուլպենկյան և Ջեռագրաց մատե-

նաղարաններին, Ս. Թորոսի մատռան մեջ, ուր ամփոփված էին ձեռագրերը, գտել է Օրմանյան սրբազանի այն ձեռագիր տետրը, որի մեջ նա սկսել էր իր «Ազգապատում»ի հատուկ անունների պատրաստումը այբբենական կարգով և սակայն հազիվ մի քանի հարյուր էջ գրելուց հետո անավարտ էր թողել այն: «Ազգապատում»ի հատուկ անունների պատրաստման երկրորդ փորձը կապված է մնում 1927—

ՅԱՐՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ

(Index)

"ԱԶԳԱՊԱՏՈՒՄ"Ի

ՅԱՏՈՒԿ ԱՆՈՒՆՆԵՐՈՒ

Պատրաստեց
ՏԻՐԱՅՐ ՄԱՅՐԱԳԱՅԵՆ ՎԱՐԴԱՊԵՏ
(ՏԵՐՎԻՇԵԱՆ)
Միաբան Ռիխտին Սրբոց Յակոբեանց
Երուսաղէմի

Հրատարակչին
ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹԵԱՆ
ԱԼԵՔ ՄԱՆՈՒԿԵԱՆ
ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀԻՄՆԱԴՐՄԱՄԲ

1928 թթ. հետ, երբ Բարգեն եպիսկ. Կյուլեսերյանի (ապա Բարգեն Ա աթոռակից կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիո) անմիջական հսկողությամբ Երուսաղեմում լույս էր տեսնում «Ազգապատում»ի երրորդ հատորը: Ահա Բարգեն սրբազանի նախաձեռնությամբ էր անվանացանկի գործը գլուխ բերելու համար գործի լծեցին ժառանգավոր ընծայարանի առաջին դասարանի սաներին, սակայն այս փորձը ևս ի վերջո անարդյունք մնաց:

Այս ուղղությամբ կատարված երրորդ փորձը տեղի է ունեցել 1959 թ. Բեյրութում «Ազգապատում»ի երկրորդ հրատարակության առթիվ: Այդ մասին «Ազգապատում»ի երկրորդ հրատարակության գիտական հանձնախմբի կողմից գրված առաջաբանում խոստացվում էր «Երրորդ հատորի վերջավորության դնել հատուկ անուններու ցանկը, որուն պետքը այնքան շեշտված կերպով զգալի էր և որ գործույս կարևորագույն նորությունը պիտի ըլլա»: Սակայն երկրորդ հրատարակության տպագրությունը ավարտվեց առանց հիշյալ անվանացանկի: Բայց նկատի ունենալով այն հանգամանքը, որ հիշյալ հրատարակության համար խոստացված անհրաժեշտ ծանոթագրությունները բացի Ա հատորի համար մեծ մասով պատրաստված հայագետ Տ. Մեսրոպ ծ. վ. Մ. Գրիգորյանի կողմից կազմվածներից մյուս ծանոթագրողները ինչ-ինչ պատճառներով չէին կարողացել մասնակցել այդ գործին, ուստի «Ազգապատում»ի երկրորդ հրատարակության վերջին մասում նկատի ունենալով այն պարագան, որ ոչ ծանոթագրությունների մեծ մասը և ոչ էլ հատուկ անունների ցանկը հնարավոր չի եղել գլուխ բերել, ուստի՝ հարմար էր դատվել «Բոլոր ծանոթագրությունները հավաքել հատորի մի մեջ՝ **հատուկ անուններու ցանկին հետ** (ընդգծումը մերն է, Ս. Ք.) և երկուսը—ծանոթագրություններ և հատուկ անուններու ցանկ—հրատարակել առանձին իբրև վերջին գիրք (հավանաբար տասներորդ)»: Սակայն ինչպես հայտնի է այս գեղեցիկ ծրագիրը ևս չիրականացավ:

Վերոհիշյալ ապարդյուն երեք փորձերից հետո, միայն չորրորդն է, որ շնորհիվ հոգեշնորհ Տերվիշյան Ծ. վ.-ի դեռևս 1937 թվականից սկսված ու երբեմն ընդմիջումներով շուրջ քառասուն տարվա համառ, հարատև ու մաշեցնող աշխատանքից հետո հնարավոր եղավ ոչ միայն ավարտել, այլ և տպագրված տեսնել այնքան սպասված այդ կարևոր գործը: Ի դեպ՝ անհրաժեշտ է նշել, որ «Ազգապատում»ի անվանացանկի կազմման հարցով իր ժամանակին մտահոգված է եղել նաև մեծանուն հայագետ Նիկողայոս Ադոնցը, որը հատուկ նամակով դիմելով Երուսաղեմի հայոց պատրիարք Թորգոմ արքեպիսկ. Գուշակյանին առաջարկել է վանքի երիտասարդ վարդապետներին լծել «Ազգապատում»ի պատրաստման աշխատանքին: Սակայն ինչպես տեսանք, Տիրայր ծ. վ. Տերվիշյանը մինչ այդ արդեն սկսել էր այդ նույն գործին ամենայն վճռականությամբ, հետևաբար Թորգոմ պատրիարք Գուշակյանի հարցումին նույն երիտասարդ միաբաննե-

ից Տերվիշյան հայր սուրբը պատասխանել էր, որ ինք մենակ սկսել էր այդ գործին: Սակայն Թ. պատրիարք Գուշակյանը նկատի ունենալով պահանջվող տիտանական աշխատանքը զգուշացրել է նրան ասելով. «Մեղք ես տղաս, աչքդ կը կուրնա, ատիկա մեկ հոգիով ըլլալիք գործ չէ»: Սակայն հակառակ այս բոլորին աշխատասիրողը չընկճվեց և շարունակեց սկսված գործը: Բայց բոլորովին էլ հեշտ չեղավ այդ աշխատանքը: Հաճախ հովվական և այլ գործերով տեղափոխվելով մերթ Հոպպե (Իսրայել), ապա Լիբանան, այնտեղից Եգիպտոս և ի վերջո ԱՄՆ և հաճախ երկարորեն զրկվելով իր գործի վրա աշխատելու հնարավորություններից, զոհելով անգամ իր հանգստի իրավունքը և խնայելով իր ժամերը ամենայն նվիրվածությամբ կարողացավ իր լրումին հասցնել այնքան սպասված այս գործը: Այս առումով խորհրդանշական նշանակություն է ունեցել աշխատասիրողի համար այն իրողությունը, որ 1932 թ. օգոստոսի 22-ին Թորգոմ պատրիարք Գուշակյանից կուսակրոն քահանա ձեռնադրվելու առիթով նրան է շնորհվել մեծանուն Օրմանյանի գրական անունը՝ Տիրայր: Ինչպես նշում է աշխատասիրողը, ինք ընդունելով այդ հոգևոր անունը իր ամբողջ կյանքի ընթացքում այն ունեցել է պարտավորող նշանակություն իր համար ի հավերժացումն Օրմանյանի հիշատակի:

Պետք է նշել նաև, որ Տ. Տերվիշյան Ծ. վ.ը նախապես նպատակ է ունեցել «Ազգապատում»ի բոլոր տեսակի անունները զետեղել մեկ այբբենական կարգի տակ, սակայն Ամենայն Հայոց կաթողիկոս Տ. Տ. Վազգեն Ա-ը 1960 թ. երբ պատմական իր այցելությունն էր կատարում Խաղաղական օվկիանոսի ափին ապրող Լոս Անջելոսի իր հոտին, լսած լինելով «Ազգապատում»ի անվանացանկի մասին գոհունակությամբ տեսել էր այն և միաժամանակ թելադրել առանձնացնել անձնանունների և տեղանունների ցանկերը, որի կատարումը ինչ խոսք ավելի է հեշտացրել սույն անվանացանկից օգտվելու գործը: «Ազգապատում»ի այս «Ցրուացանկ»ի ստեղծման պատմությունը շատ թերի կլիներ, եթե այս առթիվ մոռանալինք հիշատակել բազմահմուտ Տ. Տիրայր արքեպիսկոպոս Ներսոյանի անունը, որը կարևոր երախտիք ունի սույն երկի պատրաստումը քաջալերելու և մանավանդ նրա շուտափույթ տպագրությանը միջամտելու գործում: Շնորհակալ կարևոր գործ է կատարել նաև Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության Ալեք Մանուկյան Մշակութային հիմնադրամը իրականացնելով այս գործի տպագրությունը միանգամայն մաքուր կերպով և ընտիր թղթի վրա:

Այժմ տեսնենք, թե ինչ է բովանդակում սույն գործը և ինչ արժեք է ներկայացնում հայագիտության համար: Մեծադիր այս գիրքը բովանդակում է 377 էջ և բաղկացած է հետևյալ բաժիններից: Գիրքը բացվում է «Զոն իրմե՝ իրեն» խորագրով գեղեցիկ մի ընծայականով գրված մեծանուն Օրմանյանի հիշատակին, որը եզրափակվում է նրա մահարձանի դամբանագրի մեջբերումով (էջ 3), ապա հետզհետե գալիս են գրքի արժեքավոր «Հառաջաբան»ը (5—9) և սույն անվանացանկում օգտագործված համառոտագրությունների ցանկը (11): Հատորի բուն նյութը բաժանված է երեք մասերի. առաջինը ընդգրկում է անձնանունները (13—266), որին հաջորդում է օգտագործված եվրոպական անունների լատինատառ տառադարձությունը (267—269): Անվանացանկի երկրորդ մասը նվիրված է տեղանուններին (279—358), որին հաջորդում է դարձյալ օտար տեղանունների լատինատառ տառադարձությունը (359—360): Անվանացանկի երրորդ մասը վերնագրված է «Զանազանք» (361—368): Վերջում առանձին բաժիններ են հատկացված «Ազգապատում»ի առաջին և երկրորդ հրատարակությունների մեջ աշխատասիրողի կողմից նկատվող վրիպակներին (369—376), ինչպես նաև սույն «Ցրուացանկ»ում եղող վրիպակներին (377):

Այժմ տեսնենք, թե որոնք են եղել աշխատասիրողի կողմից իր առաջ դրված այն հիմնական առաջադրանքները, և որն է սույն գործի հիմնական արժանիքը: Առաջին հայացքից ընթերցողին թվում է, որ նա գործ ունի հայագիտական հրատարակություններին մեծ մասին հատուկ եղող սովորական մի անվանացանկի հետ: Սակայն, ինչպես տեսնելու ենք, այդ այդպես չէ: Նախ ասենք, որ անգամ եթե ցույց տրված լինեին «Ազգապատում»ի երեք հատորների մի ծայրից մյուսը ափված բոլոր անձնանուններն ու տեղանունները բովանդակող հատվածների թվահամարները, ապա այդ ևս մեծ շնորհակալ աշխատանք կլիներ: Պարզ դարձնելու համար մեր միտքը ասենք, որ մինչև այժմ «Ազգապատում»ից օգտվող ուսումնասիրողները որևէ հարց փնտրելու դեպքում դիմում էին իրենց ցանկացած անվան կամ տեղանվանը ժամանակակից եղող կաթողիկոսին վերաբերող մասին: Սակայն իրենց փնտրած նույն անվան շուրջ չէ՞ որ կարող էին լինել այլ նյութեր ևս նաև հա-

տորների տարբեր մասերում, ուստի այդ բոլորը ստիպված էին դուրս մնալ ուսումնասիրողի տեսադաշտից: Վերցնենք օրինակ Գրիգոր Լուսավորչին վերաբերող հատվածներին, այդ մասին հանգամանալից կերպով շարադրված է Հայոց անդրանիկ կաթողիկոսի կյանքին ու գործին վերաբերող հատվածում: Այժմ շնորհիվ սույն «Ցրուացանկ»ի Գրիգոր Լուսավորչի մասին նյութեր կարելի է գտնել «Ազգապատում»ի առաջին հատորի 46-րդ հատվածից սկսած մինչև երրորդ հատորի 2128-րդ հատվածում: Սակայն անխոնջ աշխատասիրողը չի բավականացել այսքանով, որը, ինչպես նշեցինք, մեծ շնորհակալ գործ կարելի էր համարել հայագիտության համար, այլ շատ ավելի հեռուն է գնացել և սույն անվանացանկը բարձրացրել է շատ ավելի բարձր աստիճանի, և «Ազգապատում»ից օգտվողներին ընձեռել է բազում հնարավորություններ: Նախ և առաջ նշենք, որ «Ազգապատում»ի հատորներում հաճախ հանդիպում ենք անձնանունների, որոնք երբեմն հիշված են իրենց անուններով և երբեմն էլ միայն իրենց ազգանուններով, պարզ է, որ այդ բոլորը ճշտելու համար մեծ աշխատանք է պահանջվել: Այն կազմված է ճշտումների, ուղղումների և երբեմն նաև գիտահետազոտական երկարատև աշխատանքի միջոցով: Ավելին, կազմողը զրկված լինելով հայագիտական հարուստ մի գրադարանից և հետևաբար, ինչպես նշում է ինքը, ձեռքի տակ չունենալով Օրմանյանի կողմից իր ժամանակին օգտագործված բոլոր աղբյուրներն ու գրականությունը, ստիպվել է երկար թղթակցությունների միջոցով ստանալ անհրաժեշտ գրականությունն անհատ մարդկանց և հիմնարկությունների միջոցով և այդպես է կատարել անհրաժեշտ ուղղումներն ու ճշտումները:

Սույն անվանացանկից օգտվողների գործին մեծապես նպաստել է յուրաքանչյուր անձնանունին պատկանող բոլոր մականունների, աստիճանների և կամ պաշտոնների մի տեղում խմբավորելը: Այսպես օրինակ. Աբրահամ-Կրետացի կամ Թեքիրտաղցի կամ Թրակացի կամ Ռոտոսթոցի, վարդապետ, եպիսկոպոս, և կաթողիկոս Ամենայն Հայոց իբր Աբրահամ Գ, և այլն: Ինչ վերաբերում է նույն անունը կրող անձանց, նրանք միմյանցից զատորոշվում են նրանց կյանքին բնորոշ եղող միանգամայն սեղմ, սակայն բավարար տվյալներով, ի հարկե այս բոլորը կազմողից պահանջելով երկարատև ու մանրազնին աշխատանք: Օրինակ. Անաստաս անունով հիշվում են ութ հոգի, որոնք են. 1.—Սուրիանաց շարքի վրա (ինչպես այս, այնպես էլ մյուս անունների կողքին ցույց են տրվում «Ազգապատում»ի մեջ գտնվող հատվածի թվահամարը) 2.—Ա կայսր Բյուզանդիայի, 3.—Բ կայսր Բյուզանդիայի: 4.—Հույն պատրիարք Կ. Պոլսո: 5.—Պապ Հռոմա: 6.—Հայ-Հռոմ ամիրա: 7.—Ա. Ակոռեցի, սենեկապետ Ներսես Գ Իշխանցիի, ապա կաթողիկոս Ամենայն Հայոց: 8.—Վարդապետ, հեղինակ «Վասն վանորէից գրքին»: Այս նույն սկզբունքով, սակայն շատ ավելի մեծ ընդգրկում ունեն ավելի գործածական դարձած անձնանունները: Գրքում հիշված են 488 Հովհաննեսներ, 288 Գրիգորներ, 160 Ստեփաններ, 143 Սարգիսներ, և այլն: Ինչպես նշեցինք, այս գործն էլ միայն կատարված լիներ, կազմողի կողմից շնորհակալ կարող էինք լինել, քանի որ կան անուններ, որոնք ափված են Օրմանյանի այս եռահատոր գործի տարբեր հատորների տարբեր հատվածներում: Նա ոչ միայն մանրակրկիտ կերպով ընթերցել և ուսումնասիրել է «Ազգապատում»ի հատորները, այլև խմբավորել է անունները և իր գործին հաճախ տվել է առարկայական և վերլուծական ցանկի բնույթ, ահա սրա մեջ է, ինչպես տեսնելու ենք, այս գործի հիմնական արժեքը և նրա արմատական տարբերությունը նման բնույթի մի շարք աշխատություններից: Մեր խոսքը վերաբերում է այն անձնանուններին, որոնց վերաբերյալ ցույց են տրված նրանց կյանքի բովանդակ պատկերը արտացոլող կարևորագույն դրվագները ճարտար խմբավորմամբ: Բերենք մի երկու օրինակ ցույց տալու համար կատարված աշխատանքի արժանիքները:

ԳՐԻԳՈՐ ԼՈՒՍԱՎՈՐԻՉ ՊԱՐԹԵՎ. Ս.— Նախա-Լուսավորչական քրիստոնեություն (ինչպես այս այնպես էլ հաջորդ նյութերի հատվածների թվահամարները չենք բերում): Նախընթացը: Զարչարանքները: Եղն ի վիրապեն: Տեսիլք և Էջմիածնի տաճարը: Քարոզությունք ի Սյունիք և եպիսկոպոսական Աթոռ: Տարոնի քարոզությունը: Առաքելություն Վրաց և Աղվանից: Հետագայի հարաբերություններ: Կատարած ձեռնադրությունները: Մեհրյաններու բանդում և շինություն վկայարաններու և վանքերու: Իր ձեռնադրությունն ի Կեսարիա և ինքնագլխություն Հայ եկեղեցվո: Մկրտություն Տրդատի և դարձ Հայոց: «Լուսավորիչ» հոգվոց: Հայաստանի լուսավորության թվականը: Կրթական և հոգևոր գործեր: Բարեկարգական կանոններ, ճառեր, և այլն: Նիկիո ժողով, հավատո հանգանակ և դավանություն Հայ եկեղեցվո: Պաշտոնավարության շրջան: Միայնություն: Վա-

նականության համար: Կանամբիություն: Որդիք և թոռունք ու հաջորդներ: Հռոմ ուղևորության խնդիր, դաշանց թուղթ և այլն: Մահն ու հիշատակը: Գյուտ և բաշխում նշխարաց: Աջը: Կիրակի և տոն: Առաջավորաց և Լուսավորչի պահք: Ներքողյան իր մասին: Իր օրեն մասունքներ: Անջուր բաժակի խնդիր: Հագուստի տարազ: Իր անունով եկեղեցիներ: Տես նաև տեղանուններու շարքին՝ ԶՎԱՐԹՆՈՑ... ԼՈՒՍԱՎՈՐՉԻ...ԽՈՐ ՎԻՐԱՊ... Ս. ԳՐԻԳՈՐ... Ս. ԳՐԻԳՈՐԻՈՍ...Ս. ԼՈՒՍԱՎՈՐԻՉ... ՓԱՐՊԻ... Ծքանշան և պատկեր: «Լուսավորչական»: Աթոռ կամ Հայրապետություն Ս. Լուսավորչի: Գրիգորյան կամ Գրիգորիկ ասորիներ»:

Նույն գովելի սկզբունքն ենք տեսնում կիրառված նաև ավելի նոր շրջանի նշանավոր հայրապետների նկարագրության մեջ: Այսպես է օրինակ ԳԵՈՐԳ Դ Ամենայն Հայոց կաթողիկոսի վերաբերյալ. 134. «ՔԵՐԵՍՏԵՃՅԱՆ Կ. ՊՈԼՍԵՑԻ, վրդ. եպիսկ. Պատր. Կթղ, նախկին անվամբ Գրիգոր: Կենսագրություն և նկարագիր: Առաջնորդ Պրուսայի: Պատրիարք Կ. Պոլսո: Կը հրաժարի: Երկրորդ անգամ թեկնածու: Երուսաղեմի Պատրիարքության թեկնածու: Կաթողիկոս Ամենայն Հայոց, իբրև Գեորգ Դ. Ընտրություն, հաստատում և այլն: Հարաբերություններ Սսո և Աղթամարի Աթոռներուն հետ: Կ. Պոլսո հետ: Երուսաղեմի հետ: Ձեռնադրությունք, եկեղեցական կարգադրությունք և արարողությունք: Ուսումնական ձեռնարկներ: (Ս) Գեորգյան ճեմարան: Ծինարարությունք: Էջմիածնի Միաբանական կամ ներքին խնդիրներ: Եկեղեցական թողոնի խնդիր: «Հայկական խնդիր» և զանազանք: Մահը և արժանիքը: Մահեն հետո»:

Նույն մանրակրկիտ սկզբունքը բարեբախտաբար կիրառված ենք տեսնում նաև կարևորագույն տեղանունների նկարագրության ժամանակ: Աննրաժեշտ ենք համարում այստեղ մեջբերել ԷՋՄԻԱԾԻՆ տեղանվան տակ տրված ընդարձակ նկարագրությունը:

ԷՋՄԻԱԾԻՆ, գյուղ, և գավառ, կեդրոն և աթոռանիստ Ամենայն Հայոց Հայրապետության: Զանազան քաղաքական իշխանությանց ենթակա: Ծննդավայր զանազան անձանց, գյուղեր, նայլն: Տեսիլք և սրբավայր, Մայր Տաճարի հիմնադրություն և վանական շինությունք կամ նորոգությունք: Սրբություններ՝ Գեղարդ և Աջ, անոթներ, թանգարան և գանձատուն: Հայրապետական Աթոռ և փոխադրություններ Աթոռի: Ամենայն Հայոց Հայրապետական ընտրությունք, Կաթողիկոսական և Վանական գործեր, նայլն: Հարաբերություններ Կիլիկիո կամ Սսո Աթոռին հետ: Աղթամարի կաթողիկոսության հետ: Աղվանից կաթողիկոսության հետ: Կ. Պոլսո Պատրիարքության և Թուրքիո հայության հետ: Երուսաղեմի Պատրիարքության հետ: Հռոմի հետ հարաբերություններ, կաթոլիկական ոտնձգություններ ու խնդիրներ ի Լեհաստան և այլն: Բողոքական շարժումի մասին: Դավանական խնդիրներ ռուսաց հետ, նայլն: Կաթողիկոսական բանադրանք: Եպիսկոպոսներ, միաբաններ, նայլն: Սինոդ, կանոններ, «Պոլոժենիէ» և «Սահմանադրություն»: Տպարան և տպագրական, մատենադարան և վարժարան, ուսումնական, տոնացույց: Վանքի սեպհական կալվածներ, տուքեր, նվիրակություն: Այցելուներ, նայլն: Նույն անունով եկեղեցիներ: Տես Ս. ԷՋՄԻԱԾԻՆ: Տես նաև՝ ՄԱՅՐ ԱԹՈՌ: (Տեղի սղության պատճառով այս վերջինը չենք բերում): Նույն ձևով բերված են հաճախ նաև զանազան ազգությունների և երկրների վերաբերող նյութեր:

Ահա միանգամայն օրինակելի անվանացանկ կազմելու մի եղանակ, որը «Ազգապատում»ը ուսումնասիրողների համար մեծ հնարավորություններ է ստեղծում և սակայն կազմողից պահանջվել է ներքին բազմատեսակ առարկայական ցանկեր ստեղծելու մանրազնին աշխատանք: Սակայն ինչպես ցույց է տալիս «Ցրուացանկ»ի քննությունը, ամենայն հավանականությամբ ժամանակի սղության պատճառով սույն օգտակար սկզբունքը չի կիրառվել բոլոր անձնանունների և բոլոր տեղանունների նկատմամբ (տես Մեսրոպ Մաշտոց, Ներսես Շնորհալի, Ներսես Լամբրոնացի, Ներսես Աշտարակեցի, Ներսես Վարժապետյան, նայլն: Ինչպես նաև Տարոն, Տարսոն, Տրապիզոն, Արաբիա, Հունաստան, նայլն):

Ոչ պակաս կարևոր է նաև գրքի երրորդ մասը, որ խորագրված է «Զանազանք» և հիմնականում ունի առարկայական ցանկի բնույթ: Ինչպես նշել է կազմողը, այն հիմնականում ցույց էր տալու «Ազգապատում»ի այն նյութերը, որոնք վերաբերում էին հայ եկեղեցու վարդապետական, ծիսական, վարչական և այլ հարցերին: Դրժբախտաբար, սակայն այս ցանկը անավարտ է մնացել և, ինչպես ասում է աշխատասիրողը, գործի սկզբին ինք միտք չի ունեցել նման մի ցանկ կազմելու: Սակայն հակառակ այս ցանկի սակավ տվյալներին, այնուամենայնիվ այստեղ ևս կան օգտագործելի բազմաթիվ շահեկան նյութեր ազգային ընկերությունների, կուսակցությունների, գրքերի, շքանշանների, ամուսնու-

թյան, ապաշխարության, պարբերական մամուլի, Տերունական տոների, կտակների, թղթերի, սրբապատկերն տոմարի, ծիսական գրքերի, և այլ հարցերի վերաբերյալ, որոնք ոչ անձնանուններ են և ոչ էլ տեղանուններ և դուրս էին մնացել այդ ցանկերից: Ցանկալի կլիներ, որ հետագայում ջանասեր աշխատասիրողը իր լրացրեր նաև այս խիստ կարևոր նշանակություն ունեցող անվանացանկը ևս:

Խիստ կարևոր նշանակություն ունեն նաև «Ազգապատում»ի առաջին և երկրորդ հրատարակություններում Տերվիշյան Ծ. Վ.ի կողմից նկատված վրիպակները և առաջարկված ուղղումները: Միանգամայն ուսանելի են նաև գրքի բազմաթիվ էջերում տողատակերին բերված կամ առաջարկված բնագրային ուղղումները, ճշտումները կամ լրացումները, որոնք էլ դարձյալ կարևոր նշանակություն ունեն «Ազգապատում»ը ուսումնասիրողների համար:

Այսպիսով սույն «Ցրուացանկ»ի ուսումնասիրումը մեզ բերում է այն համոզման, որ թեև ցարդ հայագիտության համար Օրմանյանի «Ազգապատում»ը նյութերի ընդգրկման կոթողայնությամբ և իբրև հայ պատմության թվականների լավագույն աղբյուր (ակադ. Հր. Անառյան) ամենահեղինակավոր կովանոցներից մեկն է հանդիսանում նաև այսօր, սակայն այնուամենայնիվ պետք է նկատել, որ հսկա գանձարանը ամբողջությամբ մատչելի չէր կարողանում լինել մասնագետներին, քանի որ ոչ մեկ գիտական աշխատող հնարավորություն չուներ մի անվան կամ մի հարցի կապակցությամբ ամեն անգամ ընթերցել այդ եռահատոր գործի մի քանի հազարների հասնող հատվածները: Իսկ այժմ շնորհիվ կատարված մեծ աշխատանքի այս գործը այլևս չի շարունակում մասամբ գաղտնի մնալ գիտության համար, այլ իր ամբողջությամբ մատչելի է դարձվում բոլորի համար և ծառայում իր ժամանակին մեծանուն հեղինակի առաջադրած բուն իսկ նպատակին: Այստեղից էլ դժվար չէ եզրակացնել այն իրողությունը, թե ինչպիսի անօգնահատելի գործ է կատարել աննկուն և համեստագույն հայ հոգևորական Տ. Տիրայր Ծ. վ. Տերվիշյանը նման գործը գլուխ բերելով: Անկասկած կարող ենք ասել, որ Մաղաքիա արքեպիսկ. Օրմանյանի մահից ուղիղ 60 տարի անց իր ստեղծած «Ազգապատում» անմահ երկը գրախոսվող սույն «Ցրուացանկ»ով իր ողջ բովանդակությամբ մատչելի դարձվելով հայ հասարակությանը, այժմ այն իր նոր վերածնունդն է ապրում:

Անշուշտ ինչպես ամեն մի գիրք, գրախոսվող սույն երկը ևս զերծ չէ թերիներից: Եվ եթե ուզում ենք այստեղ ցանկության կարգով նշել այդ մասին, այդ նրանից է, որ մենք հավատացած ենք, որ նման տեսակի ամեն մի գործ կարիք ունի լրացման և վերահրատարակման:

Անհրաժեշտ ենք գտնում նախ նշելու, որ լավ կլիներ, եթե այունակների վերին մասերում նշվեր ներբոհիշյալ առաջին անձնանունը և կամ տեղանունը, մի բան, որ ավելի կդյուրացներ գրքից օգտվելը: Լավ կլիներ, որ ամբողջացվեր երրորդ մասը, քանի որ այն հազիվ 8 էջ է բովանդակում և, ինչպես նշում է կազմողը, «Լավ պիտի ըլլա իրականացնել գայն օր մը, իմ կամ ուրիշի մը աշխատանքով»: Այս հարցում կարծում ենք, որ այն ամբողջացնելու լավագույն թեկնածուն նույնինքն «Ցրուացանկ»ի հարգարժան աշխատասիրողն է, որը նման գործ կատարելու բոլոր տվյալներն ունի:

Ցանկալի կլիներ, որ վերոհիշյալ գնահատելի սկզբունքը, որը կիրառված ենք տեսնում բազմաթիվ անձնանունների և տեղանունների վերաբերյալ, տարածվեր նաև մյուս անունների վրա ևս, անշուշտ նկատի առնելով տվյալ անվան շուրջ եղող նյութի ընձեռած հնարավորությունները: Մեր խոսքը վերաբերում է վերևում գրքից մեր մեջբերած Գր. Լուսավորիչ, Գեորգ Դ. կաթողիկոս Ամենայն Հայոց և Էջմիածին անուններին և անվանացանկում եղած նման ձևի մյուս նկարագրություններին, որ տվյալ անձի կյանքի տարբեր ժամանակաշրջանները և կամ տեղանվան պատմական դրվագները խմբավորված են տարբեր հարցերի ու ենթավերնագրերի տակ և կոչված են մեծապես դյուրացնելու «Ազգապատում»ը հետազոտողների գործը:

Լավ կլիներ տվյալ երկիրն ու ժողովուրդը բերվեին տարբեր ենթավերնագրերում, սակայն մի ցանկում, որպեսզի ընթերցողը այն չփնտրի երկու ցանկերում: Նույն տեղանունը արևելահայ և արևմտահայ ուղղագրություններով լինելու դեպքում, ցանկալի է խմբավորվեր մի տեղում և մյուս ձևի մոտ անպայման հղման միջոցով ցույց տրվեր այն: Օրինակ՝ մեծ մասամբ նյութը բերված է Բեսարաբիա անվան տակ (էջ 282—283), սակայն ցույց չէ տրված, որ այդ նույն տեղանունը կա նաև դրված արևմտահայ ուղղագրությամբ՝ Պեսարաբիա (էջ 333) ձևով: Ոչ մեկը և ոչ էլ մյուսը չի հղված մեկը մյուսին: Կամ Իրանը առանձին է հիշվում (էջ 302), Պարսիկներ և Պարսկաստանը առանձին (202—203) և

Արիք ու Արեաց երկիրը առանձին (34), որոնք սակայն անհրաժեշտ էր մի տեղում խմբավորել, քանի որ նույն ժողովրդի և կամ երկրի անունն են: Իրան անունը չի հիշված վերոնշյալ անվանաձևերին, և ոչ էլ Պարսիկներ և կամ Պարսկաստան անվան կողքին ցույց է տրված Իրան անվանաձևը: Ռումանիա անվան կողքին ճիշտ կերպով ցույց են տրված Մոլդավիա և Վալաքիա անվանաձևերը (էջ 336), իսկ Վալաք կամ Վալախիա անվան մոտ (էջ 241) Ռումանիան ցույց տվող հղում չկա:

Ինչպես ասացինք, աշխատասիրողը իր գրքի բազմաթիվ էջերի տողատակերին կատարել է բազմաթիվ օգտակար ծանոթագրություններ, որոնք ևս կարևոր նշանակություն ունեն «Ազգապատում»ից օգտվողների համար: Բազմաթիվ ծանոթագրությունների ներքո աշխատասիրողի կողմից կատարված ճշտումները և կամ կռահումները միանգամայն համոզիչ են: Միշտ կռահումների շարքից է օրինակ էջ 264-ում երկու առանձին ուղղագրությամբ հիշատակված Օռլով անունը իբրև ռուս իշխան և Օրլոֆ-ը իբրև ռուս զորապետ, որի մասին նա գրել է. «Անունի այս երկու ձևերը թերևս կը ներկայացնեն նույն անձը»: Քննությունը ցույց է տալիս, որ հիշյալ երկու անձնանունները իսկապես նույն անձին են վերաբերում, այսինքն այդ Ալեքսեյ Ֆեոդորովի Օռլովն (1786—1861) է, որը եղել է Ռուսաստանում զինվորական և պետական հայտնի գործիչ:

Այժմ ցանկանում ենք կատարել և կամ առաջարկել մեկ քանի ճշտումներ:

1) ԿԱՏՐԱՆԻԳԷ կամ ԿԱՏՐԱՆԻԴԷ: Տողատակի ծանոթագրության մեջ գրված է. «ԿԱՏՐԱՄԻԴԷ գրված ձևը սխալ է» (էջ 107): Այնինչ ակադ. Հր. Աճառյանի «Անձնանունների բառարան»ում ընդունված ձևը դարձյալ Կադրամիտե-ն է (հտ. 2, էջ 582): Նման են փոքրիկ տարբերություններով Ասողիկի, Օրբելյանի, Կիրակոս Գանձակեցու, Ուռհայեցու Անանունի, Մխիթար Այրիվանեցու, Վարդանի, Առաքել Դավրիժեցու, Սամվել Անեցու մոտ: Ակադ. Կ. Մելիք-Օհանջանյանի կողմից մի քանի տասնյակ օրինակների հիման վրա կազմված պատմիչ Կիրակոս Գանձակեցու գիտա-համեմատական բնագրում ևս ԿԱՏՐԱՄԻՏԷ է (Տես Երևան 1961 թ., էջ 89):

2) ՄԱՏԹԷՈՍ եպս. և առաջնորդ Շամախու և Բեսարաբիո, մասին ծանոթագրված է, («Հավանաբար պետք է նույնացնել ասիկա ՄԱՏԹԵՈՍ ՏԵՐ ԱՎԵՏԻՍՅԱՆ ՇԱՀԱՐՅԻ-ի հետ») (էջ 139): Նույն միտքը արտահայտված ենք գտնում նաև էջ 141-ում Մաթտեոս Տեր-Ավետիսյան Շահարցիի անվան մոտ: Մեզ հայտնի է, որ Բեսարաբիայի հայոց թեմի առաջնորդը եղել Մատթեոս արքեպիսկ. Վեհապետյանը, որը կառավարել է հիշյալ թեմը 1847—1857 թթ.: Այնինչ Մատթեոս արքեպիսկ. Վեհապետյանը հիշվում է «Ազգապատում»ում (տես նաև գրախոսվող «Ցրուացանկ»ը, էջ 141, № 47, սակայն իբրև միայն Ատրպատականի առաջնորդ):

3) ԳԵՈՐԳ ՏԵՐ-ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ, ԹԱԹԱՐՅԱՆՑ ՌՈՒՄԱՆԱՑԻ կամ ՊՈԹՈՒՇԱՆՑԻ (էջ 51, այստեղ ռումանացի ձևը սխալ է, սակայն այդ սխալ ընթերցումը գալիս է Օրմանյանից (Տես «Ազգապատում» հատված 2705), այնինչ ճիշտ ձևը Ռոմանցի է, որ եղել է այժմյան Ռումինիայի պատմական Մոլդովա նահանգի երբեմնի հայաշատ կենտրոններից մեկը: Օրմանյանի օգտագործած աղբյուրը (Աստվածատուր եպիսկ. Տեր-Հովհաննիսյան, Ժմնկ. պատմ. Ս. Երուսաղէմի, 1890, Բ. էջ 550) դարձյալ ունի Ռոմանցի ձևը:

4) ՄԽԻԹԱՐ ԱՆԵՑԻ: Ծանոթագրված է հետևյալ կերպ. «Այս անձին համար Ազգապատումի հիշատակությունը միայն մեկ անգամ է և հետևյալ կերպով-«Մխիթար Անեցին և Այրիվանեցին...» (էջ 1248, տող 32—33): «Կ'ենթադրենք, որ սխալմունք մը կա անուններու այդ գրության մեջ և կը խորհինք որ պետք է զայն սրբագրել այսպես—«ՍԱՄՈՒԵԼ ԱՆԵՑԻՆ ԵՒ ՄԽԻԹԱՐ ԱՅՐԻՎԱՆԵՑԻՆ...»: Այս սրբագրությամբ ջնջված կըլլա «Մխիթար Անեցին»:

«Ազգապատում»ի ուշադիր ուսումնասիրումը ցույց տվեց, որ այս հարցը լուծվում է հօգուտ Օրմանյանի: Մխիթար Անեցու մոտ իսկապես, որ կա Օրմանյանի կողմից մատնանշված Հովհաննես Կաթողիկոս Դրասխանակերտցու մասին հիշատակված տվյալը, իսկ մի քիչ այն կողմ Օրմանյանի մոտ հիշատակված ենք գտնում նաև Սամվել Անեցու կարծիքը: Ուստի Մխիթար Անեցու անվան զեղջումը չի արդարացնում իրեն:

5) Թոնդրակեցիների առաջնորդ Սմբատ Զարեհավանցու վերաբերյալ կազմողը էջ 232-ում իր ծանոթագրության մեջ նշել է, որ ԶԱՐԵՀԱՎԱՆՑԻ ձևը սխալ է, քանի որ «Զարեհավանդ գյուղացի է Սմբատ»: Սակայն ակադ. Ս. Երեմյանի հրատարակած «Աշխարհացույց»ում Զարեհավանդ անունով տեղանուն չկա և գրված է դարձյալ Զարեհավան քաղաք Ծաղկոտն գավառի (Տես Ս. Տ. Երեմյան, «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»ի», Երևան, 1963 թ., էջ 52): Կա «ԶԱՐԱՒԱՆԴ» գավառը Պարսկահայքում (Տես նշված երկը, էջ 51), սակայն այն կապ չունի Սմբատի հետ, քանի որ նա

Ծաղկոտն գավառի Զարեհավանից էր:

6) Տեղանունների ցանկում գրված է Տիարպեքիր կամ Տիգրանակերտ տես Ամիդ (էջ 352), իսկ Ամիդի մոտ գրված է «Ամիդ կամ Ամիթ կամ Տիարպեքիր կամ Տիգրանակերտ»: Այսպիսով Տիգրանակերտ բաղաքը հին ընդունված ձևով նույնացվում է Ամիդի կամ Տիարբեքիրի հետ, որոնք սակայն տարբեր քաղաքներ են, քանի որ Ամիդ քաղաքը այժմ կոչվում է Դիարբեքիր (Տես Ս. Տ. Երեմյան, «Հայաստանը ըստ «Աշխարհացույց»ի», Երևան, 1963 թ., էջ 35), իսկ Տիգրանակերտը Նփրկերտ կամ Մարտիրոպոլիս քաղաքն է (նշված աշխատ.ը, էջ 86, տես նաև «Աշխարհացույց»ի բարտեզը:

7) Տեղանունների ցանկում միատեղ են գրված. «Ճուրճով կամ Ճուրճովա կամ Եէրիկոյ քաղաք Դրանսիլվանիո կամ Ռումանիո»: Անհրաժեշտ էր առաջինը առանձին գետեղվեր իբրև Տրանսիլվանիայի հայերի կենտրոններից մեկը, (Կոչվել է Ճուրճով սեն Միքլոշ, իսկ այժմ Գեորգեն), իսկ երկրորդը իբրև Ռումինիայի հարավակողմի քաղաք (ռում. Giurgiu):

Վերոհիշյալ ցանկությունները և կատարված լրացումները ոչ մի ստվեր չեն կարող գցել այս արժեքավոր գործի վրա, որի անհրաժեշտությունը դեռևս ավելի քան 60 տարի առաջ նկատել էր մեծանուն հեղինակը՝ Մաղաքիա արքեպիսկ. Օրմանյանը, և իրենից հետո բազմաթիվ անվանի հայագետներ: Շնորհիվ հոգեշնորհ տ. Տիրայր Ծ. վ. Տերվիշյանի քրտնաջան աշխատանքի ավելացավ հույժ կարևոր մի երկ ևս, որը կարևոր նշանակություն է ունենալու հայ եկեղեցու և առհասարակ հայ ժողովրդի պատմության հարցերով զբաղվող մասնագետների և հայագիտության հարցերի նկատմամբ սեր տածող ընթերցող լայն հասարակության համար: Ի սրտե շնորհավորում ենք անխոնջ հոգևորականին իր ժողովրդին պարգևած այս մեծարժեք գործի համար, որը կոչված է մատչելի դարձնել իր ամբողջության մեջ Մաղաքիա արքեպիսկ. Օրմանյանի գլուխ գործոցը հանդիսացող «Ազգապատում»ը: Միաժամանակ «Ցրուացանկ»ի աշխատասիրողին ցանկանում ենք նորանոր հաջողություններ մի գեղեցիկ օր իր լրումին հասցնելու համար նաև հատուկ անունների երրորդ առարկայական ցանկը ևս և անհրաժեշտ վերանայումից և լրացումից հետո արժանացնելու այն իր երկրորդ հրատարակության:

ՍՈՒՐԵՆ ՔՈԼԱՆՋՅԱՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ռուս պրավոսլավ եկեղեցու պատրիարքության վերահաստատման 60-ամյակի հանդիսությունները Մոսկվայում 3

Հունաստանի հույն օրթոդոքս եկեղեցու պատվիրակությունը Մայր Աթոռում . . 9

ՆՈՐԱՅՐ ԱՐՔԵՊԻՍԿՈՊՈՍ ՊՈՂԱՐՅԱՆ—Մենք Էջմիածին մը ունինք . . . 13

ՄԱՅՐ ԱԹՈՌՈՒՄ—Եկեղեցական բեմ. լուրեր 16

Հոգևոր հունձ 18

Տարածեալ (նոտա. խոսք՝ Ս. Ներսես Շնորհալու, դաշնավորումը՝ Պսակ արքեպիսկոպոսի) 22

ՎԱՉԱԳԱՆ ՍՐԿ. ԱՎԵՏԻՔՅԱՆ—Ամավերջի հանդիսություն հոգևոր ճեմարանում 24

Ա. ՀԱՅԻՏՅԱՆ—Սուրբ Կյուրեղ հայրապետ Երուսաղեմացի 28

Ագաթանգեղոսի Պատմություն հայոց. Վարդապետություն սուրբ Գրիգորի . . 33

ՄԱՆՅԱ ՂԱՋԱՐՅԱՆ—Ստեփանոս Լեհացի 47

ՍՈՒՐԵՆ ՔՈԼԱՆՋՅԱՆ—(Գրախոսություն) «Ցրուացանկ (index) «Ազգապատում»ի յատուկ անուններու» 57

ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ, ԷՋՄԻԱԾԻՆ
«ԷՋՄԻԱԾԻՆ» ԱՄՍԱԳՐԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Армянская ССР, Эчмиадзин, Редакция журнала «Эчмиадзин».
Rédaction de la revue «Etchmiadzine». Etchmiadzine. Arménie, URSS

Հանձնված է արտադրության 16.6.1978 թ.: Ստորագրված է տպագրության 28.7.1978 թ.:
Տպագրական 4 մամուլ, թուղթ 60×84¹/₈, պատվեր 567

Մայր Աթոռ ս. Էջմիածնի տպարան, 1978 թ.